«Ընտանիք» ինստիտուտի հետազոտություն

2006

Ծրագրի անվանումը՝	«Ընտանիք» ինստիտուտի հետազոտություն
Իրագործման ժամկետը՝	2006 ապրիլ-նոյեմբեր
Իրագործման վայրը՝	Հայաստանի Հանրապետության բոլոր 11 մարզերը, ներառյալ ք. Երևանը
Իրագործող կազմակերպությունները՝	ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
Ֆինանսավորող կազմակերպությունը՝	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

ԵՐԵՎԱՆ -2006

«Ընտանիք» ինստիտուտի հետազոտությունը իրականացվել է 2006թ. ապրիլ-նոյեմբեր ամիսներին ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը ցուցաբերել է ֆինանսական և տեխնիկական աջակցություն: Հետազոտության նպատակն է Հայաստանում «Ընտանիք» ինստիտուտի, դրա կազմի և կառուցվածքի վերաբերյալ հավաքագրել մանրամասն վիճակագրական և ժողովրդագրական տվյալներ, ինչպես նաև օժանդակել «Ընտանիքի նկատմամբ պետական քաղաքականության հայեցակարգը և հիմնադրույթները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին:

Հետազոտության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ՝

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Կառավարության տուն 3
Հանրապետության Հրապարակ
375010 Երևան, Հայաստան
Հեռ.՝ (374 10) 58-76-72
Ֆաքս՝ (374 10) 56-37-91

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
Կառավարության տուն 3
Հանրապետության Հրապարակ
375010 Երևան, Հայաստան
Հեռ.՝ (374 10) 52-43-26
Ֆաքս՝ (374 10) 52-19-21

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակ
Պ. Ադամյան 14
375010 Երևան, Հայաստան
Հեռ.՝ (374 10) 54-34-16
Ֆաքս՝ (374 10) 54-38-11

Սույն զեկույցում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակներին և ոչ միշտ կարող են համընկնել ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ …….. 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ …… 6

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ …….. 7

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ …….. 9
1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ……... 9
1.2 ԸՆՏՐԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ …… 9
1.3 ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ …… 10

2. ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ …… 11
2.1 ՀԱՐՑՄԱՆ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ .. 12
2.2 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ Տ/Տ ԳԼԽԱՎՈՐԻ 13
2.3 ԲԱՇԽՎԱԽԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ 14
2.4 ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ 14
2.5 ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՄՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ 16

3. ՄԻԳՐԱՑԻԱ 18

4. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 21

5. ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ: ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 26

6. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 36

7. ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՔ 39
7.1 ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ 51
7.2 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 53

ԱՄՓՈՓՈՒՄ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 60
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 61

ԱՌԱՋԱԲԱՆ

«Ընտանիք» ինստիտուտի հետազոտության վերջնական զեկույցը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի համատեղ նախաձեռնության արդյունքն է:

Հետազոտության անցկացումը պայմանավորված է վերջին մեկուկես տասնամյակում հայկական ընտանիքում կատարվող էական փոփոխություններով, դրանց համակողմանի ուսումնասիրության, հիմնախնդիրների վերհանման ու կոնկրետ լուծումների մշակման անհրաժեշտությամբ:

Զեկույցում դիտարկվում են ընտանիքի սոցիալ-ժողովրդագրական բնութագիրը, բնակարանային և բնակության պայմանները, եկամուտների և ծախսերի կառուցվածքը, միգրացիան ու դրա ազդեցությունն ընտանիքի առանձին բնութագրիչների վրա: Կարևորվում է ընտանիքի՝ ***լայն առումով պլանավորման*** *խնդիրը. ընտանիքում երեխաների թվաքանակ, վերջինիս շարժընթացը պայմանավորող գործոններ, առկա հիմնախնդիրներ ու հաղթահարման հնարավոր տարբերակներ:*

«Ընտանիք» ինստիտուտի ուսումնասիրությունը կարևոր է ևս մեկ առումով. ՀՀ իշխանությունները ձեռնամուխ են եղել պետական ու հասարակական կարևորություն ունեցող փաստաթղթերի՝ *«Պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգի» և «Ընտանիքի հանդեպ պետական քաղաքականության հայեցակարգի» մշակմանը:*

Հետազոտության արդյունքները որպես հիմք են ծառայելու նշված հայցեկարգերի մշակման, կոնկրետ միջոցառումների ու առաջարկությունների ներկայացման համար:

Դրանք կարող են օգտակար լինել նաև ընտանիքի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային ու հասարակական կազմակերպությունների, ընտանիքի հիմնախնդիրներով շահագրգիռ այլ կառույցների ու անհատների համար:

Շնորհակալություն ենք հայտնում հետազոտության և վերլուծության կայացմանը նպաստ բերած կազմակերպություններին և անհատներին, ՄԱԿ-ի Բնակչության Հիմնադրամի աշխատակիցներին, որոնց աջակցությունը ծրագրի իրագործման ողջ ընթացքում, վերլուծության խմբագրման փուլում արված արժեքավոր առաջարկությունները մեծապես նպաստեցին հետազոտության ամբողջացմանը:

Ա. Մինասյան
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Գ. Հայրապետյան
ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցչի տեղակալ

Վերլուծական տեքստը գրել են՝

Վ. Մարությանը, ֆիզ.-մաթ. գիտ. թեկն., ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական,

Մ. Գաբրիելյանը, պատմ. գիտ. թեկն., ազգագրագետ, ԵՊՀ Հնագիտության և ազգագրության ամբիոնի դասախոս,

Ա. Գյուլբենկյանը, ՀՀ ԱՎԾ S/S հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ,

Լ. Ղարիբյանը, ՀՀ ԱՍՀ նախարարության «Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության» երեխաների հիմնահարցերի բաժնի մասնագետ:

Տվյալների մշակումը և ծրագրավորումն իրականացվել է ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ ***Ա. Առուշանյանի*** կողմից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ըստ հարցման արդյունքների՝ առանձնացվել են ընտանիքի հետևյալ տիպերը և ենթատիպերը.

Խառը ընտանիք – *երկսերունդ կամ եռասերունդ ընտանիք, որտեղ, բացի ուղիղ գծով ազգականներից՝ ծնողներ, զավակներ, թոռներ, ապրում են նաև այլ ազգականներ:*

Նուկլեար ընտանիք ամբողջ կազմով- *ամուսնական զույգից և ծնողների հետ համատեղ բնակվող երեխաներից կազմված ընտանիք:*

Միայնակ մոր գլխավորությամբ ընտանիք – ***նուկլեար ընտանիքի ենթատիպ,*** *կազմված մորից և համատեղ ապրող երեխաներից:*

Մեկ ծնողով և երեխաներով ընտանիք – ***նուկլեար ընտանիքի ենթատիպ,*** *կազմված հորից կամ մորից և համատեղ ապրող երեխաներից:*

ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓՈՒՄ

Ընտանիքի հիմնախնդիրները կարևոր տեղ են գրավում պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և հասարակական կազմակերպությունների *հետազոտական-տեսական ու գործնական-կիրառական* ուղղվածության ծրագրերում:

Այս մոտեցումն ունի տարբեր պատճառներ: Ընտանիքը, որպես քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային ու հոգեբանական տեսանկյունից առավել խոցելի ու պաշտպանության կարիք ունեցող միավոր, հատկապես արտակարգ իրավիճակներում[1] ու անցումային փուլում գտնվող հասարակություններում ձեռք է բերում որոշակի ***«ռիսկայնություն»***: Նման վիճակի տևականությունն, իր հերթին, հանգեցնում է ***ընտանիքի՝ որպես հասարակության բազային միավորի, սոցիալական, հոգեբանական, արժեքային ու այլ բնութագրիչների էական փոփոխությունների, շատ դեպքերում նաև՝ ձևախեղումների:***

ՀՀ բոլոր մարզերում *(Երևան քաղաքը ներառյալ)* իրականացված **«Ընտանիք ինստիտուտի»,** վերջինիս բնութագրիչների, վիճակի ու զարգացման միտումների ուսումնասիրությունն ունի ինչպես տեսական-հետազոտական, այնպես էլ, բազմաթիվ ոլորտներում՝ կիրառական ուղղվածություն:

Հետազոտությունը, սակայն, **«ընտանիք»** ինստիտուտի վերաբերյալ այլ ուսումնասիրություններից տարբերվում է նպատակի ու խնդիրների որոշ առանձնահատկություններով: Հետազոտությունում առաջիններից մեկը հանրապետությունում.

▪ Դիտարկվում են ոչ թե առանձին վերցված հիմնախնդիրներ, այլ ցուցաբերվում է ***համալիր մոտեցում:*** *Կատարվել է սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների, բնակարանային և բնակության պայմանների, զբաղվածության, եկամուտների և ծախսերի, միգրացիայի ազդեցությունների գնահատում ընտանիքի առանձին բնութագրիչների, մասնավորապես վերարտադրողական վարքի վրա*:

▪ Կարևորվում է ընտանիքի ***լայն առումով պլանավորման*** *հիմնախնդիրը. ընտանիքում երեխաների թվաքանակ, առկա խնդիրներ ու հաղթահարման տարբերակներ:*

▪ Քանի որ ընտանիքը *ոչ միայն տնտեսական, այլև մշակութային, արժեքային գործոններ կրող ամբողջություն է,* կարևորվում են նրանում շարունակվող մշակութային և արժեքային փոփոխությունները:

▪ Եվ վերջապես, առանձնացված իրողություններն ու միտումները դիտարկվում են ՀՀ իշխանությունների պետական քաղաքականության համատեքստում: Մշակվել է ***«Հայաստանի Հանրապետության պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգն», իսկ «Ընտանիքի հանդեպ պետական քաղաքականության հայեցակարգը»*** գտնվում է մշակման գործընթացում**,** որոնց իրագործումը պահանջում է ոչ միայն համալիր միջոցառումներ, այլև դրանց համակողմանի հիմնավորում:

Հետազոտության արդյունքներն ընդհանուր առմամբ, արտացոլում են ձևավորված իրավիճակն ու թույլ են տալիս արձանագրել, որ ընտանիքը, որպես օրգանական ամբողջություն, այսօր կանգնած է ոչ միայն տնտեսական, այլև հասարակական, քաղաքական, մշակութային և հոգեբանական լուրջ հիմնախնդիրների առաջ: Վերջին մեկուկես տասնամյակի զարգացումները *(տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային)* դեռևս շարունակում են էա-

[1] Հատկապես 1990-ական թթ առաջին կեսը հայաստանյան հասարակության համար կարելի է դիտարկել որպես «արտակարգ» իրավիճակ. հաղթահարված չէին 1988թ. դեկտեմբերի երկրաշարժի հետևանքները, Ադրբեջանի հետ սահմանամերձ գոտում և ԼՂՀ-ում ընթանում էր պարտադրված պատերազմ, երկիրը հայտնվել էր տրանսպորտային ու էներգետիկ շրջափակման մեջ: Ընտանիքների մեծ մասն այս պայմաններում լուծում էր ընդամենը գոյատևման խնդիր: Պատահական չէ, որ այդ տարիներին շրջանառության մեջ դրվեց «գոյատևման ռազմավարություն» հասկացությունը:

պես ազդել հայաստանյան ընտանիքի, նրա կազմի, կառուցվածքի, սոցիալ-ժողովրդագրական բնութագրի վրա: Այսպես, ըստ հարցման արդյունքների, 1-4 անձից բաղկացած ընտանիքները կազմում են ընտրանքի 84.4, իսկ 5 և ավելի անձից կազմվածները՝ ընդամենը 15.6%-ը, հետազոտված ընտանիքների ընդամենը 44.9%-ում կա մինչև 18 տարեկան երեխա, որից 19.3%-ում կա 1 երեխա, 19.1-ում՝ 2 երեխա, 3 և ավելի անչափահաս երեխա կա հետազոտված ընտանիքների ընդամենը 6.5%-ում: Այլ կերպ ասած, ներկայումս հայաստանյան ընտանիքներում երեխաների թիվը նվազել է նախկին 2-3-ից ներկայիս 1-2-ի:

Ընտանիքի վերարտադրողական վարքում արձանագրված այս խնդիրներն, ըստ էության, հանրագումարային են: Մասնավորապես՝

- սրվել է ***բնակարանային հիմնախնդիրը***, որը լուրջ է հատկապես քաղաքաբնակ երիտասարդների ու երիտասարդ ընտանիքների համար: Քաղաքային բնակավայրերում 1 սենյակին բաժին է ընկնում միջինը 1.38 մարդ: Այս ցուցանիշը բարձր է հատկապես մեկ սենյականոց բնակարաններում՝ 2.32 մարդ: Պատահական չէ, որ պարզ վերարտադրություն ապահովելու նպատակով պետությունից ակնկալիքների շարքում պատասխանների 51.2%-ում առաջնային է դիտվել բնակարանի ձեռքբերման կամ բնակմակերեսի ընդլայնման հարցում աջակցությունը:

- ***զբաղվածության ոլորտում*** լուրջ հիմնախնդիր է ինչպես զբաղվածների ցածր տեսակարար կշիռը, այնպես էլ տղամարդկանց ու կանանց զբաղվածության անհամամասնությունը. ըստ հետազոտության, որևէ ոլորտում զբաղված է ընտանիքների անդամների 28.6%-ը, 36.2% տղամարդ և 21.8% կին համամասնությամբ: Գրեթե բոլոր ոլորտներում զբաղվածների մեջ ավելի բարձր է տղամարդկանց տեսակարար կշիռը: Որոշ տաբերություններ են արձանագրված մինչև 16 տարեկան երեխա ունեցող ընտանիքներում:

- քաղաքային և հատկապես գյուղական բնակավայրերում առկա է ***սոցիալ-մասնագիտական համահարթեցման*** խնդիր՝ կապված տարբեր խմբերի դերի ու կարևորության սահմանափակման հետ: Կրթական ցենզի օպտիմալ բաշխվածության համամասնությունները գյուղական միջավայրում խախտված են՝ գյուղերում բարձրագույն կրթություն ունեցողները կազմում են ընդամենը 6.5%:

- ***Առողջապահության ոլորտում*** նույնպես առկա են լուրջ խնդիրներ. ընտանիքների 21.6%-ը, ըստ հարցման, վերջին մեկ տարում ունեցել է որևէ առողջապահական հաստատություն դիմելու կարիք, բայց չի դիմել. հիմնական պատճառը (86.3%) առողջապահական ծառայությունների ֆինանսական անմատչելիությունն է:

Նման իրավիճակը, փաստորեն, կարելի է դիտել որպես ***ժողովրդագրական ճգնաժամ:*** Թիվ մեկ հիմնախնդիրը ընտանիքում երեխաների այնպիսի թիվն է, որը ներկայում չի ապահովում և առաջիկա տարիներին նույնպես չի ապահովի նույնիսկ պարզ վերարտադրություն, եթե պահպանվեն զարգացման արդի միտումները:

Ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարման ու ընտանիքի ընդլայնված վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ են բազմոլորտ համակողմանի, հավասարակշռված միջոցառումներ, որոնք արդեն մոտ ապագայում պետք է ուղղակի և անուղղակի ազդեցություններ ունենան ընտանիքի կենսագործունեության բոլոր ոլորտների վրա:

«Ընտանիքի հանդեպ պետական քաղաքականության» և «Պետական ժողովրդագրական քաղաքականության» հայեցակարգերը, ինչպես նաև ծրագրերն ու միջոցառումները պետք է կառուցվեն վերը նշված ժողովրդագրական վիճակն ու հնարավոր զարգացումների միտումները հաշվի առնելով:

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ անկախության հռչակումից հետո հրապարակվել են հայկական ընտանիքի վերաբերյալ տարբեր ուսումնասիրություններ, վիճակագրական ժողովածուներ ու տարեգրքեր[2], որոնցում այս կամ այն չափով արծարծված են վերջին մեկուկես տասնամյակի հիմնախնդիրները: Սակայն, չնայած աղբյուրների բազմազանությանը, ընտանիքի վերաբերյալ համալիր, ամբողջական հետազոտությունների թիվը սահմանափակ է:

1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության ***նպատակը*** ընտանիքի վիճակը պայմանավորող հիմնական գործոնների բացահայտումը, վերլուծությունն ու հիմնախնդիրների հաղթահարման առաջարկությունների ներկայացումն է:

Հետազոտության ***խնդիրներն*** են.

- «ընտանիք» ինստիտուտի վերաբերյալ ծավալուն վիճակագրական տվյալներ ստանալը ***(տես՝ Հավելված 1, Հետազոտության հարցաշարը)***
- վիճակը բացահայտելը, փոփոխությունների պատճառներն ուսումնասիրելը:

1.2 ԸՆՏՐԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրանքի ձևավորման հիմք է հանդիսացել ՀՀ բոլոր տ/տ հասցեների տվյալների բազան, որն ստեղծվել է 2001թ. Մարդահամարի արդյունքների հիման վրա, Ազգային վիճակագրական ծառայության կողմից, Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ:

Հետազոտության նպատակներից և խնդիրներից ելնելով, օգտագործվել է ստրատիֆիկացված (շերտավորված) ընտրանքային եղանակը: Ընտրանքի ձևավորման համար հանրապետության բոլոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան բաժանվել է 48 ստրատաների (խմբերի), որոնցից 12-ը Երևանի համայնքներն են:

Մարզային մակարդակով բոլոր տնային տնտեսությունները բաշխվել են ըստ երեք կատեգորիայի. ***մեծ քաղաքներ***՝ 15 հազար և ավելի բնակչությամբ, ***գյուղեր*** և ***այլ քաղաքներ*** *(15*

---

[2] Ընտանիքի հիմնախնդիրներին անդրադարձած հրապարակումների թիվը մեծ է, այդ պատճառով հղվում է միայն հիմնական գրականությունը, որում քննարկված են հատկապես սոցիոմշակութային և արժեքային հիմնախնդիրները: ***Մանրամասն տես՝*** Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003: Արտագաղթը Հայաստանից (խմբ.՝ Հ. Խառատյան), Եր., 2003: **Գաբրիելյան Մ.,** Հայկական ընտանիքն անցումային շրջանում. ազգաբանական ուսումնասիրություն, Եր., 2005: ***Նույնի՝*** Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001: ***Նույնի՝*** Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001: **Գալստյան Մ.,** Հայաստանի Հանրապետության բնակչության աշխատանքային միջպետական տեղաշարժերը, ՌԱՀՀԿ, Եր., 1998: **Եգանյան Ռ., Կուլումջյան Կ.,** Եոխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Եր., 2004: Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Եր., 2002: **Խոջաբեկյան Վ.,** Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Եր., 1998: Հայաստան, Մարդկային զարգացման զեկույց, Եր., 1995-2004: Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, Եր., 2002: Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Եր., 2001: **Թադևոսյան Ա.,** Գոյատևման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում, ՌԱՀՀԿ, Եր., 1998: ***Նույնի՝*** Հասարակական շերտավորման և աղքատության ձևավորման պատկերը Հայաստանում 1991-1997թթ, ՌԱՀՀԿ, Եր., 1998: ***Նույնի՝*** Արժեքային գործընթացները և միտումները 1991-1998թթ ՌԱՀՀԿ, Եր., 2000: **Թադևոսյան Ա., Գաբրիելյան Մ.,** Աղքատության ու գոյատևման պատկերը. հասարակության շերտավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, ՄԻԺԻ, Եր., 2003: **Խառատյան Հ.,** Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000: Հայաստանի կանայք և տղամարդիկ. վիճակագրական գրքույկ, Եր., 2005: Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), Եր., 2003: **Սինասյան Է.,** Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ), Եր.; 2003: **Òåð-Ñàðêèñÿíö À.,** Àðìÿíå: èñòîðèÿ è ýòíîêóëüòóðíûå ðàäèöèè, Ì., 1998. **Ï îãîñÿí Ã.,** Àðìÿíêîå îáùåñòâî â ðàíñôîðìàöèè, Åðåâàí, 2003.

հազարից պակաս բնակչություն ունեցող): Մեծ քաղաքները կազմել են 16 խումբ (ստրատա): Մեծ քաղաքներ չկան միայն Վայոց Ձորի մարզում: ***Գյուղերի և այլ քաղաքների*** թիվը կազմել է 10-ական ստրատա:

Համաձայն այս բաշխման ձևավորվել է պատահական, ըստ մարզերի ստրատիֆիկացված երկաստիճան ընտրանք: Բոլոր մարզերը, ինչպես նաև գյուղական և քաղաքային բնակավայրերը ընտրանքային համակցության մեջ ներառվել են ըստ երկրի տ/տ ընդհանուր թվաքանակում մարզի/բնակավայրի տ/տ թվի համամասնության: Ընտրանքում ընդգրկվել է 35 քաղաք և 44 գյուղ:

Առաջին *փուլում* ընտրվել են բնակավայրերը՝ որպես ընտրանքի նախնական միավորներ: ***Երկրորդ*** *փուլում* ընտրվել են հետազոտվող տնային տնտեսությունները՝ ***2500 տնային տնտեսություն, որոնցից 1802-ը՝ քաղաքային, 698-ը՝ գյուղական բնակավայրերից:***

1.3 ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հետազոտության իրականացման համար ձևավորվել է **աշխատակազմ՝** 52 հարցազրուցավար, 15 որակի հսկիչ (ստուգող) և 2 կոդավորող: Մինչև հետազոտությունը սկսելը, դաշտային աշխատանքներ իրականացնող անձնակազմի համար անցկացվել է հրահանգավորում՝ ընտրանքի և հարցաթերթի լրացման կարգի վերաբերյալ: Յուրաքանչյուր հարցազրուցավար աշխատանքը հանձնելիս ներկայացրել է նաև ընտրանքի հաշվետվություն:

Հետազոտության տվյալների բազան բերվել է վերջնական տեսքի, տվյալները փոխադրվել են SPSS for WINDOWS ֆորմատի և կատարվել է առանձին աշխատող ֆայլերի ագրեգացիա՝ տվյալների մեկ բազայի մեջ:

Կանխատեսվել է, որ որոշ դեպքերում կարող է հարցաթերթ չլրացվել տնային տնտեսության հետազոտությունից հրաժարվելու, բացակայելու և այլ պատճառներով, ուստի նախատեսվել է նաև *պահուստային ընտրանք*՝ բավարար ներկայացուցչականություն ապահովելու նպատակով:

Աղյուսակ 1.1-ում ներկայացված է հետազոտված տնային տնտեսությունների քանակը և կառուցվածքն ըստ մարզերի *(Ամենամեծ մասնաբաժինն ունի Երևանը՝ 29.7%):*

Աղյուսակ 1.1 **Հետազոտված տնային տնտեսությունների քանակը և բաշխվածությունն ըստ մարզերի**

Մարզ	տ/տ քանակը	Տես. կշիռն ընտրանքում, %
ք. Երևան	741	29.7
Արագածոտն	128	5.1
Արարատ	209	8.4
Արմավիր	199	8.0
Գեղարքունիք	188	7.5
Լոռի	218	8.7
Կոտայք	251	10.0
Շիրակ	194	7.8
Սյունիք	165	6.6
Վայոց Ձոր	73	2.9
Տավուշ	134	5.3
Ընդամենը	2500	100

2. ՀԵՏԱԶՈՏՎԱԾ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ելնելով հարցման առաձնահատկություններից, հետազոտվել են ինչպես տնային տնտեսությունները (2500), այնպես էլ մեկ տնային տնտեսության կազմում առկա ընտանիքները (3102)[3] *(Աղյուսակ 2.1)*:

Աղյուսակ 2.1

Հարցման մասնակիցների բաշխումն ըստ տնային տնտեսությունների և ընտանիքների					
Հարցված տ/տ քանակը	Ընտանիքների թիվը	1 տ/տ-ում ընտանիքի միջին թիվը	Տ/տ-ներում բնակվողների թիվը	1 տ/տ-ում բնակվողների միջին թիվը	1 ընտ. բնակվողների միջին թիվը
2500	3102	1.24	9093	3.6	2.9
Տ/տ-ում ընտանիքների թիվը, %					
Հարցված տ/տ քանակը,	1 ընտանիքից կազմված	2 ընտանիք	3 ընտանիք	4 ընտանիք	Ընդամենը
2500	80.3	18.0	1.6	0.1	100

Ըստ Աղյուսակ 2.1-ի, տ/տ մեծամասնությունը՝ 80.3%, կազմված է մեկ ընտանիքից: 3-4 ընտանիքներից կազմված տ/տ տեսակարար կշիռը 1.7% է, իսկ 2 ընտանիքից կազմվածներինը՝ 18.0%: 1տ/տ-ում բնակվում է միջին հաշվով 1.24 ընտանիք, իսկ տ/տ և ընտանիքի անդամների միջին թիվը կազմում է համապատասխանաբար 3.6 և 2.9 մարդ:

Աղյուսակ 2.2 **Հարցման մասնակիցների բաշխումն ըստ սեռի, %**

Սեռը	Ըստ հարցման արդյունքների*	Ըստ 2001թ. մարդահամարի	Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների առ 1 հունվարի 2006.
Տղամարդ	47.9	48.0	48.3
Կին	52.1	52.0	51.7
Ընդամենը	100	100	100

Հարցման մասնակիցների բաշխվածությունն ըստ սեռի միջին հանրապետական ցուցանիշներից չի տարբերվում. կանանց տեսակարար կշիռը փոքր-ինչ բարձր է տղամարդկանց տեսակարար կշռից:

[3] Հետազոտությունը պլանավորելիս՝ հաշվի են առնվել մեկ տ/տ-ում բնակվող ընտանիքների եկամուտների և ծախսերի հաշվառման հետ կապված բարդությունները: Մեկ տ/տ-ում բնակվող մի քանի ընտանիքի համար բարդ է յուրաքանչյուրի եկամուտներն ու ծախսերը առանձին գրանցելը, քանի որ հաճախ բյուջեն ընդհանուր է և ծախսերը կատարվում են համատեղ *(կոմունալ վճարներ, սննդի ծախսեր, գյուղերում՝ գյուղատնտեսական աշխատանքների ծախսեր և այլն)*: Այդ պատճառով վերլուծությունների մի մասը տրված է ըստ տ/տ: «Ընտանիքի վերարտադրողական վարք» բաժնում արդեն և տվյալները և՝ եզրահանգումներն առանձին ընտանիքի հաշվարկով են: Այդ նպատակով հարցաթերթի համապատասխան բաժինը լրացվել է տնային տնտեսության կազմում բնակվող յուրաքանչյուր ընտանիքի համար:

Աղյուսակ 2.3 **Հարցման մասնակից ընտանիքներում անդամների թիվը, %**

Ընտանիքների թիվը	որից՝ 1 անձ	2 անձ	3 անձ	4 անձ	5 անձ	6 անձ	7 անձ	8 և ավելի	Ընդ.
3102	10.0	23.4	21.3	29.7	13.1	2.1	0.2	0.2	100

Ըստ հարցման արդյունքների, մեծամասնություն են կազմում 1-4 անձից կազմված ընտանիքները, որոնց հանրագումարը կազմում է 84.4%, 5 և ավելի անձից կազմված ընտանիքներինը՝ ընդամենը 15.6%: Այս պատկերն արդյունք է վերջին տասնամյակների զարգացումների: Խորհրդային շրջանում ուրբանիզացիայի, սոցիալ-տնտեսական տեղաշարժերի հետևանքը եռասերունդ ընտանիքների տեսակարար կշռի նվազումն էր: Սկսած 1960-ական թթ. հանրապետությունում տիրապետող էր դառնում երկսերունդ ընտանիքը: Բացառություն էին լեռնային շրջանների գյուղերը, որոնցում ընտանիքների առանձնացման գործընթացն սկսվեց փոքր-ինչ ուշ, սակայն նույնպես ընթանում էր արագ տեմպերով:[4] Կարելի է նույնիսկ արձանագրել, որ վերջին տարիներին հատկապես քաղաքներում այդ գործընթացն արգելակվեց բնակարանային հիմնախնդրի սրացման պատճառով:

2.1 ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Աղյուսակ 2.4

Տարիքային բաշխվածությունն ըստ հարցման արդյունքների	Մինչև 16	16-30	31-49	50-62	63 և ավելի	Ընդ.
	19.1	27.8	27.4	12.1	13.6	100
Տարիքային բաշխվածությունն ըստ վիճակագրության, 2005[5]	**Աշխատունակ տարիքից ցածր**		**Աշխատունակ տարիքի**		**Աշխ. տար. բարձր**	**Ընդ.**
	23.6		63.3		13.1	100

Աղյուսակ 2.4-ը նույնպես արտացոլում է վերջին մեկուկես տասնամյակի զարգացումները, մասնավորապես բնակչության ընդհանուր թվում կենսաթոշակային տարիքի խմբերի տեսակարար կշռի աճը:

[4]Շատ գյուղերում 1970-80-ական թթ ձևավորվեցին այսպես կոչված «անկեսուր թաղամասեր», բնակեցված երկսերունդ, ամուսնական զույգից ու անչափահաս երեխաներից կազմված ընտանիքներով. տես՝ Մ. Գաբրիելյան, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը:

[5] Աղբյուրը՝ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու-2005, Եր., 2005, էջ 16:

2.2 ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐԻ

Տնային տնտեսությունների մեծամասնությունը որպես գլխավոր նշել է տնտեսության տարիքով ավագ անդամին, այդ թվում՝ կենսաթոշակային տարիքի տղամարդուն կամ կնոջը:

Ըստ տնային տնտեսության գլխավորի կրթական ցենզի և զբաղվածության արձանագրվել է հետևյալ պատկերը.

Աղյուսակ 2.5 **Տնային տնտեսության գլխավորի կրթական ցենզը և զբաղվածությունը**

Տնային տնտեսության գլխավորի կրթական ցենզը, %	
Անգրագետ	0.7
Ոչ լրիվ տարրական	0.7
Տարրական	4.6
Ոչ լրիվ հիմնական ընդհանուր	3.3
Հիմնական ընդհանուր	5.7
Թերի միջնակարգ	5.4
Ընդհանուր միջնակարգ	33.5
Միջնակարգ մասնագիտական	23.5
Թերի բարձրագույն	1.7
Բարձրագույն	20.8
Տնային տնտեսության գլխավորի զբաղվածության ոլորտը, %	
Վարձու աշխատող պետ. սեկտորում	17.2
Վարձու աշխ. մասն. սեկտորում	15.7
Ինքնազբաղված, նաև գյուղատնտեսություն	16.2
Ձեռնարկատեր	0.8
Թոշակառու	38.1
Ուսանող/սովորող	0.6
Գործազուրկ	3.9
Տնային տնտեսուհի	1.4
Չի աշխատում	5.4
Այլ	0.8

Ինչպես երևում է Աղյուսակ 2.5-ից, տնային տնտեսության գլխավորների մեջ ճնշող մեծամասնություն են կազմում ընդհանուր միջնակարգ և դրանից բարձր կրթություն ունեցողները՝ 79.5%: Տ/տ գլխավորներից յուրաքանչյուր հինգերորդն ունի բարձրագույն կրթություն: Կարելի է ենթադրել, որ ընդհանուր միջնակարգից ցածր կրթություն ունեցող տ/տ գլխավորները հիմնականում մեծահասակներն են:

Ըստ տնային տնտեսության գլխավորի զբաղվածության արձանագրվել է հետևյալ պատկերը. ամենաբարձր տեսակարար կշիռն ունեն թոշակառուները՝ 38.1%, բավականին բարձր է պետական ու մասնավոր սեկտորներում զբաղվածների և ինքնազբաղվածների տեսակարար կշիռը: Ընդամենը 0.8% են կազմում ձեռնարկատերերը, իսկ գործազուրկների և չաշխատողների հանրագումարը 9.3% է: Արդյունքում՝ աշխատանք ունի տ/տ գլխավորների շուրջ 35%-ը, ինքնազբաղվածները ներառյալ՝ շուրջ 52%-ը:

Ըստ հարցման արդյունքների, տ/տ 68%-ում որպես գլխավոր նշվել է տղամարդը, իսկ 32%-ում՝ կինը[6]: Երևույթը շարժընթացի մեջ դիտարկելիս, կարելի է արձանագրել կին գլխավորով

[6] 2003թ. դրությամբ այն տ/տ-ները, որոնցում որպես գլխավոր նշվել է տղամարդը, կազմում էին 71.3% (քաղաքներում՝ 70.2, գյուղերում՝ 73%), իսկ կինը՝ 28.7% (քաղաքներում՝ 29.8, գյուղերում՝ 27.0%).-Հայաստանի կանայք և տղամարդիկ, Վիճակագրական գրքույկ, Եր., 2005, էջ 43:

տնային տնտեսությունների թվաքանակի որոշակի աճ, ինչը կարող է բացատրվել մի շարք իրողություններով.

ա/ ***սոցիալ-տնտեսական.*** զանգվածային արտագաղթի ու արտագնացության, տղամարդու տնական բացակայության պայմաններում հանրապետությունում աճել է ոչ լրիվ կազմով ընտանիքների թիվը: Այս իրավիճակում արձանագրվում է նաև տղամարդու դերի որոշակի թուլացում ներընտանեկան հարաբերություններում, երեխաների դաստիարակության հարցերում:

բ/ ***Իրավիճակային.*** վերջին տարիներին աճել է արհեստական ամուսնալուծությունների թիվը: Գյուղերում դրանք սկսվեցին 1991թ., հողի սեփականաշնորհման ընթացքում և կապվում էին լրացուցիչ հողակտոր ստանալու ցանկության հետ[7]: Այդ պատճառով տարբեր գյուղերում արձանագրվում էին ընտանիքի բաժանությունների դեպքեր, երբ որպես առանձին ծուխ էին գրանցվում նաև չամուսնացած աղջիկները: Քաղաքներում արհեստական ամուսնալուծությունները, հատկապես 1990-ական թթ ամենայն հավականությամբ կապվում են մարդասիրական օգնությունների տարբեր ծրագրերում, նպաստների համակարգում ներառվելու հետ: Եվ վերջապես, նկատի ունենանք, որ հատկապես եռասերունդ ընտանիքներում որպես գլխավոր նշվում է տան տարիքով ավագ կինը, եթե ամուսինը մահացել է: Սա ավելի շատ ավանդական արժեքային համակարգի դրսևորում է, քանի որ իրական ղեկավարությունն իրականացնում է մոր հետ ապրող զավակը:

Որոշ տարբերություններ առկա են քաղաք-գյուղ պատկերում. գյուղերում տղամարդը որպես ընտանիքի գլխավոր նշվել է 71.5%, իսկ քաղաքներում՝ 62.2% դեպքերում:

Արձանագրված վիճակը, անկախ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից, արտացոլում է ընտանեկան դերերի կարծրատիպային պատկերացումների փոփոխությունները: Առաջիկա տարիների համար նման վիճակի հետևանքները պետք է դիտարկել հնարավոր դրական ու բացասական միտումների տեսանկյունից: Մի կողմից, սա օրինաչափ գործընթաց է, որն անցել են շատ պետություններ. կնոջ հասարակական ակտիվության, ինքնուրույնության ու նյութական ապահովվածության աճը պետք է հանգեցնի նաև ներընտանեկան հարաբերություններում դերային գործառույթների փոփոխությունների: Մյուս կողմից, չնայած ամբողջական վիճակագրության ու ուսումնասիրությունների բացակայությանը, ենթադրության մակարդակում կարելի է փաստել, որ կին գլխավորով ընտանիքները, հատկապես միայնակ մայրերից կազմվածներն, առավել խոցելի են, իսկ այս միտման խորացումը կարող է հանգեցնել նաև պետական սոցիալական պարտավորությունների «ծանրաբեռնվածության աճի»: Գյուղական միջավայրում, օրինակ, նման ընտանիքներն ունեն գյուղատնտեսությամբ զբաղվելու սահմանափակ հնարավորություններ, հատկապես մեծ թվով աշխատուժ պահանջող ոլորտներում[8]:

2.3 ԲԱՇԽՎԱԾ ԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ

Հարցման մասնակիցների մեջ ճնշող մեծամասնություն են կազմում հայերը՝ 98.6%, ինչը ՀՀ բնակչության ազգային կազմի ուղղակի արտացոլումն է: Ռուսները կազմել են հարցման մասնակիցների 0.5, այլ ազգությունների ներկայացուցիչները՝ 0.9%-ը: Ըստ կրոնական պատկանելության հարցման մասնակիցների 99.0%-ը քրիստոնյաներ են: Աթեիստները կազմում են 0.7%, 0.3%-ը դավանում են այլ կրոնական ուղղություններ:

2.4 ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ

Աղյուսակ 2.6 **Տնային տնտեսության անդամների կրթությունը /6 տարեկանից բարձր/,%**

Կրթական մակարդակը	Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Կին	Տղամ.
1. Անգրագետ	0.8	0.7	0.9	1.0	0.5

[7]Վիճակագրորեն, ինչպես նաև առանձին ուսումնասիրություններով, այս երևույթը դժվար է բացահայտել: Ուստի որոշ եզրակացություններ արվում են նաև ենթադրությունների մակարդակում և հիմնվում են առանձին երևույթների զարգացման դիտարկումների վրա: Գյուղական միջավայրում սրա մասին տես՝ Մ. Գաբրիելյան, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը; նույնի՝ Հայկական ընտանիքն անցումային շրջանում:

[8] տես՝ Մ. Գաբրիելյան, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը:

2. Ոչ լրիվ տարրական	2.1	1.8	2.6	1.9	2.3
3. Տարրական /մինչև չորրորդ դասարան/	4.5	3.2	6.8	4.7	4.3
4. Ոչ լրիվ հիմն. ընդհ. /թերի ութնամյա/	5.3	4.9	6.1	4.8	5.8
5. Հիմնական ընդհանուր /ութնամյա/	6.8	5.3	9.4	6.2	7.5
6. Թերի միջնակարգ /թերի տասնամյա/	7.0	6.2	8.3	6.5	7.5
7. Ընդհանուր միջնակարգ /տասնամյա/	33.0	29.1	40.3	31.7	34.5
8. Միջնակարգ մասնագիտական	19.0	20.4	16.5	21.0	16.8
9. Թերի բարձրագույն	3.8	4.4	2.6	4.0	3.5
10. Բարձրագույն	17.6	23.9	6.5	18.1	17.2
11. Հետբուհական	0.1	0.1	0.0	0.1	0.1
Ընդամենը	100	100	100	100	100

Ըստ կրթական ցենզի ամենաբարձր տեսակարար կշիռն ընդհանուր միջնակարգ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողներինն է: Քաղաքներում, գյուղերի համեմատ, բարձր է բարձրագույն (շուրջ 4 անգամ) և միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռը: Կանանց և տղամարդկանց կրթական ցենզում էական տարբերություններ չկան: Որոշ տարբերություն արձանագրվում է միայն միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտներում. կանանց տեսակարար կշիռն այստեղ ավելի բարձր է (4.2 և 0.9 տոկոսային կետով): Թերի բարձրագույն կրթությամբ կանանց փոքր-ինչ բարձր տեսակարար կշիռը, ամենայն հավանականությամբ, կապվում է ամուսնության և երեխա ունենալու պատճառով ուսումը չշարունակելու հետ:

Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, տ/տ անդամների կրթական ցենզում, ինչպես երևում է Աղյուսակ 2.6-ից, էական տարբերություններ են գրանցվել հատկապես բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության ոլորտներում: Փաստը, որ հարցման մասնակից գյուղաբնակներից ընդամենը 6.5%-ն ունի բարձրագույն կրթություն, մտահոգիչ է: Գյուղերում բարձրագույն կրթությամբ անձանց թիվը սկսել էր նվազել արդեն խորհրդային շրջանում[9]: 1950-ականներից ակտիվորեն ծավալված արտահոսքը հիմնականում դեպի Երևան ու նոր հիմնվող կամ արագ զարգացող արդյունաբերական կենտրոններ հանգեցնում էր գյուղերի ծերացմանն ու դատարկմանը: Քաղաքներում կրթություն, հատկապես բարձրագույն կրթություն ստացող գյուղական երիտասարդության հիմնական մասը ձգտում էր հաստատվել այստեղ, քանի որ ավելի մեծ էին սոցիալական շարժունության հնարավորությունները: Չնայած դրան, գյուղերում բարձրագույն կրթությամբ մասնագետների պակասը «փորձ էր արվում մեղմել» պարտադիր գործուղումների ու նշանակումների միջոցով:

Անկախացումից հետո ևս քաղաքային միջավայրը, հատկապես Երևանը շարունակում է հանդես գալ որպես «հիմնական կենտրոն» բարձրագույն կրթություն ստացող գյուղական երիտասարդության համար: 1990-ական թթ. սկզբին արտագաղթողների մեջ նույնպես բավականին բարձր էր բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռը[10]: Մինչդեռ պարտադիր գործուղումների ազդեցությունը նվազագույն է. սակավաթիվ երիտասարդներ հանրապետության սահմանամերձ գյուղերում մանկավարժությամբ են զբաղվում միայն ժամկետային զինծառայությունից ազատվելու նպատակով: Արդյունքում՝ գյուղական միջավայրում ավելի են խորանում սոցիալ-մասնագիտական համահարթեցման, մասնագիտական խմբերի դերի կարևորության ու ազդեցության նվազման միտումները: Գյուղերում «պահպանված» և քիչ թե շատ ազդեցիկ խումբը մանկավարժներն են: Մինչդեռ հայկական գյուղում, բացի մանկավարժներից, եղել

[9] Այս երևույթը կարելի է դիտարկել բնական ուրբանիզացիոն գործընթացների համատեքստում: Սակայն ՀՀ-ում այն ուներ որոշակի «արհեստականություն», քանի որ հանրապետության մարդկային ներուժը բավարար չէր արագ տեմպերով զարգացող արդյունաբերությունը աշխատուժով ապահովելու համար. արդեն 1970-80-ական թթ կադրեր էին հավաքագրվում նախկին միութենական հանրապետություններից: Սրա ուղղակի հետևանքներից մեկը եղավ այն, որ Հայաստանում 1926-86թթ ընթացքում վերացավ կամ լքվեց 271 գյուղական բնակավայր.- Գ. Ավագյան, Հայաստանը 1920-1990թթ, Եր., 1997, էջ 99-100; տես նաև՝ Ռ. Եգանյան, Կ. Կուլումջյան, նշվ. աշխ.:

[10] Այն դեպքում, երբ բարձրագույն և թերի բարձրագույն կրթությամբ անհատները կազմում են հանրապետության բնակչության շուրջ 25%-ը, 1991-1996թ. արտագաղթողների մեջ դրանց տեսակարար կշիռը կազմել է 48%: 1991-1996թթ արտագաղթի հետևանքով Հայաստանը կորցրել է բնական, հումանիտար և տեխնիկական կրթությամբ մասնագետների 1/3-ին.-Մարդկային զարգացման ազգային զեկույց, 1996, էջ 14-15:

են հասարակական ընդօրինակելի այլ անհատներ ու խմբեր ևս, որոնք, անհրաժեշտության դեպքում, կարողացել են պարտադրել նաև համապատասխան վերաբերմունք ու մոտեցում: Եթե հաշվի առնենք, որ ընտանիքի հանդեպ պետական քաղաքականությունը ենթադրում է վերարտադրողական վարքի փոփոխություն, ապա ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական միջավայրում առաջնային է դառնում մարդկային ներուժի, ակտիվ, կառուցողական խմբերի առկայությունը:

Ռազմավարական պլանավորման տեսանկյունից կարևոր է, որ գյուղերում ընդլայնված վերարտադրության ապահովման դեպքում, իհարկե, եթե չընթանան սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումներ, կարևորվելու է ենթակառուցվածքների խնդիրը[11]: Դրանց բացակայությունը, այլընտրանքային զբաղվածության սահմանափակ հնարավորությունները ժողովրդագրական իրավիճակի շտկման դեպքում, շարունակելու են ազդել միգրացիոն տրամադրությունների պահպանման վրա:

2.5 ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ

Աղյուսակ 2.7 **Հարցման մասնակիցների ամուսնական կարգավիճակը /16 տարեկանից բարձր/, %**

Ամուսնական վիճակը	Ընդ. %	Քաղաք	Գյուղ
1. Ամուսնացած	60.8	59.4	63.6
2. Երբեք չամուսնացած	26.0	26.7	24.7
3. Այրի	10.0	10.0	9.8
4. Ամուսնալուծված	2.8	3.5	1.4
5. Ապրում են համատեղ /առանց ամուսնության գրանցման/	0.4	0.4	0.5

Ըստ Աղյուսակ 2.7-ի տվյալների, ամուսնացած է հարցման մասնակիցների 60.8%-ը: Բավականին բարձր է այրիների և ամուսնալուծվածների տեսակարար կշիռը: Ըստ քաղաքների և գյուղերի էական տարբերություններ չեն գրանցվել, չնայած գյուղերում փոքր-ինչ բարձր է ամուսնացածների, ցածր՝ ամուսնալուծվածների կշիռը՝ 1.4%՝ քաղաքայինի 3.5 և ընդհանուր հանրապետականի 2.8%-ի համեմատ:

Աղյուսակ 2.8-ում ներկայացված են մինչև 18 տարեկան երեխա ունեցող ընտանիքներում երեխաների թվաքանակները: Մինչև 18 տարեկան երեխա ունեցող ընտանիքները կազմում են հարցման մասնակիցների ընդամենը 44.9%:

Աղյուսակ 2.8 **Ընտանիքների բաշխվածությունը ըստ մինչև 18 տարեկան երեխաների թվի,** %

1	2	3	4	5	6 և ավ.	Ընդամենը՝ մինչև 18 տարեկան երեխա ունեցող ընտանիքների տեսակարար կշիռն ամբողջի մեջ	Մինչև 18 տարեկան երեխա չունեցող ընտանիքների տեսակարար կշիռն ամբողջի մեջ	Ընդ
երեխա								
19.3	19.1	5.5	0.8	0.1	0.1	44.9	54.1	100

Մեկ և երկու երեխա ունեցող ընտանիքների հանրագումարն, իր հերթին, չի գերազանցում ընտրանքի 40%-ը: Նման պատկերը խոսում է այն մասին, որ վերջին տարիների սոցիալ-տնտեսական, հասարակական ու մշակութային զարգացումներն արդեն ուղղակի ազդեցություն ունեն

[11] Գյուղական ընտանիքում 1 երեխայի առկայության դեպքում մանկապարտեզի բացակայությունը կարող է կարևոր խնդիր չդիտվել, մինչդեռ 2-3 երեխայի դեպքում արդեն երիտասարդ մայրերի համար ծանր է դաստիարակության, տնային տնտեսության վարման և գյուղատնտեսական գործունեության համատեղումը:

ժողովրդագրական իրավիճակի վրա, որի պայմաններում չի ապահովվում նույնիսկ պարզ վերարտադրություն[12]: Միաժամանակ, կարելի է ասել, որ գործ ունենք նաև խորհրդային շրջանի զարգացումների ազդեցությունների հետ. այսօր «իրեն վերարտադրում» է 1970-80-ական թթ 2-3 երեխայով ընտանիքներում մեծացած սերունդը, որն իր հերթին արդեն որդեգրում է 1-2 երեխայով ընտանիքի մոդելը:

Աղյուսակ 2.9 **Ծնողազուրկ երեխաների տեսակարար կշիռն ընտանիքում, %**

Ծնողազուրկ երեխաների տեսակարար կշիռն ընտանիքում, որից	ծնողազուրկ 1 երեխա	2 երեխա	3 երեխա
4.1	2.8	0.8	0.5

Աղյուսակ 2.9-ում ներկայացվում է ծնողազուրկ երեխա ունեցող տ/տ-երի բաշխվածությունը: Հարցման մասնակից տ/տ-երի 4.1%-ում կան ծնողազուրկ երեխաներ: Միակողմանի ծնողազուրկ 1 երեխա ունի տ/տ 2.6, միակողմանի ծնողազուրկ 2 երեխա՝ 0.7, միակողմանի ծնողազուրկ 3 երեխա՝ 0.5%-ը: Երկկողմանի ծնողազուրկ 1 երեխա ունի տ/տ 0.3, իսկ 2 երեխա՝ 0.1%-ը: Բավականին ցածր է խնամակալներ և հոգաբարձուներ ունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար 0.6 և 0.1%:

[12] Ըստ հարցման արդյունքների մեկ ընտանիքում մինչև 16 տարեկան երեխայի միջին թվաքանակը կազմում է ընդամենը 1.61 հանրապետության համար: Քաղաքում և գյուղում՝ համապատասխանաբար 1.57 և 1.70:

3. ՄԻԳՐԱՑԻԱ

Վերջին տարիների քաղաքական, հասարակական ու տնտեսական փոփոխությունների հետևանքներից մեկը ՀՀ-ում սկիզբ առած զանգվածային միգրացիոն գործընթացներն են, որոնք ուղղակի ազդեցություն ունեն ընտանիքի զարգացման միտումների վրա: Միգրացիոն գործընթացների ազդեցությունների մասին շատ է գրվել: Որպես դրական կամ ընդհանուր առմամբ դրական ազդեցություն առանձնացվել է միայն այն, որ միգրանտների ընտանիքների՝ հանրապետությունում մնացած անդամները պարբերական կամ դիպվածային (հիմնականում դեպքից-դեպք, որպես կանոն տարվա ընթացքում 1-2 անգամ) օգնություն են ստանում, որի օգնությամբ լուծվում են գոյության հիմնական խնդիրները: Միգրացիայի, հատկապես միջպետական միգրացիայի բացասական ազդեցությունների թվին են դասվում տղամարդու տնական բացակայության պատճառով ներընտանեկան հարաբերությունների ներդաշնակության խախտումը, ընտանիքում դերային գործառույթների ու կարգավիճակների փոփոխությունները, երեխաների դաստիարակությանն առչվող հիմնախնդիրները և այլ իրողություններ: Միգրանտների մի մասն անպաշտպան է նաև այն երկրում, որտեղ հայտնվել է և ուր նրանց համար առկա է կենցաղային տարրական պայմանների բացակայություն, բացասական վերաբերմունք և այլն[13]:

Ըստ հարցման արդյունքների, տ/տ-ում բացակայող անդամ ունի հարցման մասնակիցների 7.3%-ը:

Աղյուսակ 3.1 **Տնային տնտեսության բացակա անդամի գտնվելու վայրը, %**

Երկիր / բնակավայր	Տես. կշիռը բացակայողների ընդհանուր թվաքանակում	Տես. կշիռը տ/տ-ում՝ 2500	Բացակա անդամ ունեցող տ/տ թիվը՝ ՀՀ տ/տ ընդհանուր թվից[14]
1. Երևան	11.9	0.9	7320
2. Այլ քաղաք ՀՀ-ում	16.6	1.2	9760
3. Գյուղ ՀՀ-ում	2.5	0.2	1630
4. ՌԴ	56.9	4.1	33350
5. ԱՊՀ այլ երկիր	3.6	0.3	2440
6. Եվրոպական երկիր	4.2	0.3	2440
7. ԱՄՆ կամ Կանադա	3.0	0.2	1630
Այլ	1.3	0.1	815
Ընդամենը	100	7.3	59385

Աղյուսակ 3.1-ից երևում է, որ ինչպես վերջին մեկուկես տասնամյակում, այնպես էլ այսօր, միգրացիոն հիմնական ուղղությունը ՀՀ-ից դեպի ՌԴ ուղղվածն է. այնտեղ է գտնվում տ/տ բացակա անդամների կեսից ավելին: Եթե սրան հավելենք նաև ԱՊՀ այլ երկրներում գտնվողների տեսակարար կշիռը, ապա կստացվի միգրանտների ընդհանուր թվաքանակի շուրջ 2/3-ը: Բավականին բարձր է նաև ներքին միգրանտների տեսակարար կշիռը, ընդ որում, Երևանին բաժին է հասնում ամբողջ ծավալի շուրջ 12%-ը:

[13] Այս մասին մանրամասն տես՝ Մ. Գալստյան, Հայաստանի Հանրապետության բնակչության աշխատանքային միջպետական տեղաշարժերը, ՌԱՀՀԿ, Եր., 1998;

[14] Թվերը հաշվարկված են ըստ ՀՀ տնային տնտեսությունների ընդհանուր թվում ուղղություններից յուրաքանչյուրի ունեցած համամասնության: Աղյուսակից երևում է, որ բացակայող անդամ ունեցող տ/տ քանակը մոտավորապես 60000 է: Սակայն սա մոտավոր, փոփոխվող թիվ է, որը կարող է որոշ տարբերություններ ունենալ իրականից, կապված 1 տ/տ-ից մի քանի անդամի բացակայության, բացակայության սեզոնայնության և հետազոտության անցկացման ժամկետների հետ: Հետազոտությունն անցկացվել է ամռան ամիսներին, երբ աշխատանքային միգրանտների հիմնական մասն արդեն հանրապետությունում չէր: Ձմռան ամիսներին այս թիվը կարող է փոխվել, կապված արդեն նրանց մի մասի վերադառնալու հետ:

Ըստ բացակայության հիմնական պատճառների պատկերը հետևյալն է.

Աղյուսակ 3.2 **Բացակայության հիմնական պատճառը**

Բացակայության հիմնական պատճառը	Տես. կշիռը պատճառների համախմբում	Տես. կշիռը տ/տ-ում	Բացակա անդամ ունեցող տ/տ թիվը՝ ՀՀ տ/տ ընդհանուր թվից
1. Ուսում	4.8	0.3	2440
2. Բուժում	1.5	0.1	815
3. Աշխատանք	54.1	4.0	32544
4. Ամուսնություն	8.6	0.6	4880
5. Ընտանեկան այլ պատճառներ	10.5	0.8	6506
6. Բանակ	16.2	1.2	9760
Այլ	4.3	0.3	2440
Ընդամենը	100	7.3	59385

Բացակայությունների հիմնական պատճառն աշխատանքն է: Բավականին բարձր է նաև ծառայության մեջ գտնվողների և ընտանեկան այլ պատճառներով բացակայողների տեսակարար կշիռը: Փաստորեն, ըստ հարցման արդյունքների, աշխատանքը դեռևս շարունակում է պահպանել միգրացիոն հոսքեր ձևավորող հիմնական գործոնի իր գործառույթը, ընդ որում, և արտաքին, և՝ ներքին միգրացիոն հոսքերում, ինչն ապացուցում է նաև ստորև բերվող Աղյուսակ 3.3 -ը[15]:

Աղյուսակ 3.3 **Կոնկրետ վայրում գտնվելու պատճառները, %**

Գտնվելու վայրը	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ %, որից	Բացակայության պատճառը						
		Ուսում	Բուժում	Աշխատանք	Ամուսնություն	Ընտանեկան այլ պատճառներ	Բանակ	Այլ
Երևան	11.9	11.4	0.0	17.1	37.0	12.4	17.1	5.1
Քաղաք Հայաստանում	16.6	0.5	2.4	1.7	2.1	5.9	85.3	2.1
Գյուղ Հայաստանում	2.5	0.0	0.0	15.6	28.0	30.1	0.0	26.3
ՌԴ	56.9	4.9	1.8	78.0	2.9	9.3	0.0	3.2
ԱՊՀ այլ երկիր	3.6	6.4	2.5	50.2	7.6	22.6	0.0	10.8
Եվրոպական որևէ երկիր	4.2	0.0	0.0	69.3	20.1	7.1	0.0	3.6
ԱՄՆ կամ Կանադա	3.0	12.7	0.0	60.4	2.7	17.1	0.0	7.1
Այլ	1.2	0.0	0.0	35.2	23.9	34.0	0.0	6.9

Ինչպես երևում է Աղյուսակ 3.3-ից, աշխատանքը բացակայության հիմնական պատճառն է բոլոր բնակավայրերում գտնվող միգրանտների համար: Ամենաբարձր տեսակարար կշիռը ՌԴ-ում է, որտեղ աշխատելու նպատակով գտնվում է բացակայողների ճնշող մեծամասնութ-

[15] Ի տարբերություն Աղյուսակ 3.1, 3.2 և 3.4-ի, Աղյուսակ 3.3 և 3.5-ում թվային տվյալները ներկայացվում են միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների, այսինքն ընտրանքի տ/տ 7.3%-ի հաշվարկով: Ըստ տ/տ ընդհանուր թվում ունեցած տեսակարար կշռի վերլուծության դեպքում գրեթե բոլոր ցուցանիշները մոտենում են 0-ի: Նման մոտեցումը նպատակ ունի արձանագրել միգրացիոն հոսքերի հիմնական ուղղությունները, միգրանտների բացակայության ժամկետները, ինչը, ելնելով հետազոտության խնդիրներից, կարելի է բավարար համարել:

յունը՝ 78%: Նույնն է վիճակը նաև ԱՊՀ, եվրոպական երկրների և ԱՄՆ-ի ու Կանադայի դեպքում: Այսինքն, աշխատանքը բացակայության հիմնական պատճառ է, իսկ աշխատանք փընտրողների հիմնական մասը ստիպված է եղել հեռանալ ՀՀ-ից:

Ըստ բացակայության ժամկետի, ինչպես երևում է Աղյուսակ 3.4-ից, նույնպես արձանագրվել են բավականին մեծ տատանումներ:

Աղյուսակ 3.4 **Տ/տ անդամի բացակայության ժամկետը**

Բացակայության ժամկետը	Տես. կշիռը բացակայության ժամկետների համախմբում	Տես. կշիռը տ/տ-ում
Մինչև 1 ամիս	4.4	0.4
1-3 ամիս	14.2	1.0
3-6 ամիս	12.8	0.9
6 ամսից-1տարի	16.0	1.2
1-3տարի	17.1	1.2
3 տարի և ավելի	35.5	2.6
Ընդամենը	100	7.3

Ամենաբարձր տեսակարար կշիռը բաժին է ընկնում 3 տարուց ավելի բացակայողներին: Եթե ավելացնենք նաև 1-3 տարի բացակայողներին, հանրագումարը կգերազանցի 50%-ը:

Ըստ կոնկրետ վայրում գտնվելու ժամկետի ստացված պատկերը հետևյալն է.

Աղյուսակ 3.5 **Կոնկրետ վայրում գտնվելու ժամկետները**

Գտնվելու վայրը	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ %, որից	Բացակայության ժամկետը						
		մինչև 1 ամիս	1.1-3 ամիս	3.1-6 ամիս	6.1 ամսից մինչև 1 տարի	1.1-3 տարի	3.1 տարի և ավելի	Ընդամենը %
Երևան	11.9	8.0	7.1	6.1	21.6	18.8	38.4	100
Քաղաք Հայաստանում	16.6	3.9	13.6	8.5	31.7	31.5	10.8	100
Գյուղ Հայաստանում	2.5	38.1	15.3	15.6	9.9	7.5	13.6	100
ՌԴ	56.9	2.8	17.0	15.7	10.7	12.4	41.4	100
ԱՊՀ այլ երկիր	3.6	6.8	5.1	9.6	17.1	11.1	50.3	100
Եվրոպական որևէ երկիր	4.2	0.0	0.0	20.6	13.2	31.4	34.8	100
ԱՄՆ կամ Կանադա	3.0	0.0	3.8	0.0	23.7	15.8	56.7	100
Այլ	1.2	0.0	55.9	8.3	0.0	13.3	22.5	100

Աղյուսակ 3.5-ը ևս մեկ անգամ հնարավորություն է տալիս արձանագրել, որ ըստ բացակայության ժամկետների, հատկապես ՀՀ-ից դուրս գտնվողների պարագայում, արձանագրվում են անվերադարձ միգրացիայի ձևավորման վտանգավոր միտումներ: Այսպես, ՌԴ-ում, ԱՊՀ և եվրոպական երկրներում, ինչպես նաև ԱՄՆ-ում և Կանադայում գտնվողների 50%-ից ավելի բացակայության ժամկետը գերազանցում է 1 տարին, իսկ 3 տարուց ավելի բացակայողների ցուցանիշը բոլոր նշված դեպքերում, մոտենում է 50%-ի, ԱՄՆ-ում կամ Կանադայում և ԱՊՀ այլ երկրներում գտնվողների համար գերազանցելով նույնիսկ այդ ցուցանիշը:

4. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ընտրանքում կացարանի տեսակը հարցին պատասխանել են բոլոր տնային տնտեսությունները (100%): Համաձայն պատասխանների խմբավորման դիտվել է հետևյալ պատկերը.

Հարցված տնային տնտեսությունների 44.1%-ը բնակվում են առանձնատներում, 52.0%-ը՝ բազմաբնակարանային շենքի բնակարաններում, 1.7%-ը՝ հանրակացարաններում, 2.0%-ը՝ վագոն տնակներում կամ ժամանակավոր կացարաններում:

Հարցված 68.4% տնային տնտեսությունների կացարանները միանձնյա սեփականություն են, 21.8%-ի մոտ կացարանները համատեղ սեփականություն են: Հարցվածների 9.8%-ը հրաժարվել են պատասխանել այս հարցին:

Բացի կացարանից, այլ սեփականություն ունենալու հետ կապված հարցին ընտրանքի մեջ ընդգրկված 2500 տնային տնտեսություններից բացասական պատասխան են տվել 1298-ը, դրական պատասխան են տվել 1202-ը, որը կազմում է ընտրանքի 48.1%-ը: Պատասխանների խմբավորումը ներկայացնում է տնային տնտեսությունների սեփականության տեսակների հետևալ պատկերը.

Աղյուսակ 4.1 **Հարցման մասնակից տնային տնտեսությունների սեփականության տեսակների պատկերը**

Սեփականության տեսակը	տնային տնտեսություններ (%-ը)
Հողակտոր	35.3
Անձնական օգտագործման ավտոմեքենա	8.7
Գյուղատնտեսական տեխնիկա	0.2
Գյուղատնտեսական նշանակության տարածք	2.2
Առևտրի և սպասարկման օբյեկտ	0.4
Արտադրական նշանակության օբյեկտ	0.1
Այլ	1.2
Ընդամենը	48.1

Ընտրանքում ընդգրկված տարբեր տարածաշրջանների տնային տնտեսությունների բնակարանային պայմանների գնահատման համար կատարվել է հարցաղրում՝ զբաղեցրած կացարանի սենյակների թվաքանակի վերաբերյալ: Հարցմանը պատասխանել է ընտրանքի 99.8%-ը: Քաղաքաբնակ և գյուղաբնակ տնային տնտեսությունների զբաղեցրած կացարաններում սենյակների թվաքանակներն ունեն հետևյալ բաշխումները:

Աղյուսակ 4.2 **Հարցման մասնակից տնային տնտեսությունների բաշխվածությունն ըստ կացարանի սենյակների քանակի, %**

Կացարանի սենյակների քանակը	Ընդհանուր ընտրանքում	Քաղաքաբնակ տնային տնտեսություններում	Գյուղաբնակ տնային տնտեսություններում
Մեկ սենյակ	12.0	14.4	7.3
Երկու սենյակ	28.8	33.7	19.4
Երեք սենյակ	34.6	37.4	29.2
Չորս սենյակ	16.2	10.8	26.5
Հինգ սենյակ	5.7	2.2	12.4
Վեց և ավելի սենյակներ	2.6	1.4	4.9
Հարցմանը մասնակցած տ/տ-ներ	99.8	99.9	99.7

Ինչպես երևում է Աղյուսակ 4.2-ից, տարածաշրջաններում ընտրանքային կարգով հարցմանը մասնակցած 2500 տնային տնտեսությունների 12%-ը ապրում է մեկ սենյականոց բնակարա-

նում, ընդ որում քաղաքաբնակ տնային տնտեսություններում մեկ սենյականոց բնակարանների թիվը գրեթե կրկնակի անգամ գերազանցում է գյուղաբնակների նույն ցուցանիշին: Ընտրանքում քաղաքային ընտանիքների մեկ, երկու և երեք սենյականոց բնակարանների թվաքանակների տոկոսային գերազանցումը գյուղաբնակ ընտանիքների կացարանների նկատմամբ համապատասխանաբար կազմում է 2, 1.7 և 1.3 անգամ :

Գյուղաբնակ տնային տնտեսությունների 4, 5, 6 և ավելի սենյակ ունեցող կացարանների թիվը գերազանցում է քաղաքաբնակների բնակարանային պայմանների նույն ցուցանիշին համապատասխանաբար 2, 5.6 և 3.5 անգամ: Ընտրանքում դիտված բնակարանային պայմանների գյուղ-քաղաք առանձնահատկությունները պարզ բացատրություն ունեն, եթե հետադարձ հայացք գցենք խորհրդային տարիներին ընտանիքի պլանավորման և աջակցության ուղղությամբ վարված պետական քաղաքականության մոտեցումներին և տարիների ընթացքում ձևավորված արդյունքներին:

Խորհրդային ժամանակաշրջանում պետությունը քաղաքներում կառուցում էր բազմահարկ շենքեր, որոնք հիմնականում 1, 2 և 3 սենյականոց բնակարաններ էին և տրվում էին հիմնարկ-ձեռնարկություններում հերթագրված աշխատակիցներին՝ համապատասխանաբար 1-2, 3-4, 5-6 անդամներից կազմված ընտանիքների համար: Վեց անձից ավելի անդամների դեպքում տրվում էր 4 սենյականոց բնակարան կամ նույն շենքում 2 առանձին 2 սենյականոց բնակարան: Ընտանիքի կազմում երկսեռ երեխաների առկայության դեպքում, անկախ մեկ շնչի համար սահմանված բնակասանիտարական նորմայի, հատկացվում էր մեկ սենյակ ավելի: Առանձին հիվանդություններով (տուբերկուլյոզ, թոքախտ և այլն) տառապող ընտանիքի անդամներ ունենալու դեպքում տրվում էր լրացուցիչ բնակելի մակերես: Մասնավոր առանձնատները ևս քաղաքներում հիմնականում կառուցում էին 2 – 4 սենյակներով, որը կապված էր ինչպես սահմանափակ հողհատկացման, այնպես էլ եկամուտների գնահատման ենթատեքստի հետ: Որպես կանոն գյուղերում առանձնատները կառուցվում էին բազմասենյականոց, քանի որ գյուղերում կոլեկտիվ տնտեսվարություն էր տիրում և պետությունը խթանում էր գյուղում ապրելը: Գյուղաբնակ ընտանիքները հիմնականում բազմանդամ էին, եռասերունդ կառուցվածքով: Եթե գյուղական մայր ընտանիքից բաժանվում էր նորաստեղծ ընտանիք, ապա ավանդույթի համաձայն մայր ընտանիքի չափահաս անդամները մասնակցում էին նոր առանձնատան կառուցմանը (հիմնականում 4-6 սենյակներով), քանի որ ըստ ավանդույթի պլանավորվում էր բազմանդամ նոր ընտանիքի ձևավորում: Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1960-ական թվականներին Հայաստանի գյուղերում ընտանիքները միջինում ունենում էին 4-ից ավելի երեխաներ: Նույն ժամանակահատվածի համար հանրապետությունում ծնելիության գումարային գործակիցը կազմել է 4.3, իսկ գյուղերում գերազանցում էր 6-ը:

Խորհրդային կարգերի փլուզումից հետո սոցիալ-տնտեսական բազմաթիվ գործոններով և իրողություններով պայմանավորված, պետական բնակարանաշինությունը հանրապետությունում զգալիորեն նվազել է: Կառուցվում են հիմնականում մասնավոր շենքեր, որոնցում բնակարանի 1 քմ-ի արժեքը գերազանցում է 500 ԱՄՆ դոլարի սահմանագիծը, ինչն անհաղթահարելի արգելք է անգամ բարձր աշխատավարձով ապրող բնակարանի կարիք ունեցող հազարավոր ընտանիքների, առավել ևս՝ երիտասարդ ընտանիքների համար: Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները տնային տնտեսությունների եկամտի վերաբերյալ, ընտրանքում ներառված և ոչ մի ընտանիք չի կարող բնակարան գնել վերոհիշյալ գներով: Փաստորեն, բնակարանային խնդիրն ընդհանուր առմամբ լուծված է այսօրվա երեխաների ծնողների համար: Բնակարանային սուղ պայմաններ ունեցող ընտանիքների համար յուրաքանչյուր երեխայի ծնունդն ավելի է վատացնում իրավիճակը և շատ հաճախ բնակարանային խնդիրը արգելք է հանդիսանում երեխաների ցանկալի թվաքանակ ունենալուն: Ընտրանքում դիտված բնակարանային պայմանների համեմատությունը ցույց է տալիս, որ դեռևս պահպանվում են նախկինում եղած համամասնությունները:

Աղյուսակ 4.3. **Մեկ սենյակին ընկնող անձերի քանակը**

Կացարանի սենյակների քանակը	Ընդ. ընտրանքում մարդ	Քաղաքաբնակ տ/տ-ում մարդ	Գյուղաբնակ տ/տ-ում մարդ
Մեկ սենյակում	2.32	2.36	2.19
Երկու սենյակում	1.6	1.65	1.44
Երեք սենյակներում	1.31	1.31	1.29
Չորս սենյակներում	1.04	1.05	1.04
Հինգ սենյակներում	0.87	0.93	0.85
Վեց և ավելի սենյակներում	0.73	0.74	0.72
Մեկ սենյակում միջինում ապրում են	1.27	1.38	1.11

Հարցման արդյունքում ձևավորված քաղաքաբնակ և գյուղաբնակ տնային տնտեսությունների բնակելի մակերեսներով ապահովվածության միջինացված ցուցանիշները ցույց են տրված Աղյուսակ 4.4-ում:

Աղյուսակ 4.4 **Բնակմակերսով ապահովվածության պատկերը** քաղաքաբնակ և գյուղաբնակ տնային տնտեսություններում

Բնակավայրը	Բնակելի մակերեսը	Քառակուսի մետր
Քաղաք	մեկ տնային տնտեսության հաշվով	50.43
	տնային տնտեսության մեկ անդամի հաշվով	14.20
Գյուղ	մեկ տնային տնտեսության հաշվով	81.01
	տնային տնտեսության մեկ անդամի հաշվով	21.73
Ընդհանուր	մեկ տնային տնտեսության հաշվով	60.93
	տնային տնտեսության մեկ անդամի հաշվով	16.87

Ինչպես ցույց են տալիս տնային տնտեսությունների բնակելի մակերեսների համեմատական գնահատումներն, ընդհանուր առմամբ, մեկ շնչին ընկնող բնակելի մակերեսը խորհրդային տարիներին սահմանված բնակսանիտարական նորման՝ 9 քմ. գերազանցում է ինչպես գյուղերում՝ 2.4 անգամ, այնպես էլ քաղաքներում 1.58 անգամ, որը տնային տնտեսությունների բազմասենյակ կացարաններում բնակության ցածր խտության արդյունք է: Խորհրդային տարիներին կառուցված շենքերում մեկ սենյականոց բնակարանները միջինում 18քմ բնակելի մակերես ունեն (կրկնակի բնակսանիտարական նորմա), որը հաշվարկված էր 2 անձի համար: Ինչպես ցույց են տալիս հարցման արդյունքները, քաղաքային մեկ սենյականոց բնակարաններում ապրում է միջինը 2.4 մարդ, որն արդեն ոչ միայն չի բավարարում խորհրդային տարիներին սահմանված բնակսանիտարական նորման, այլ նաև շատ հեռու է ընտանիքի քաղաքակիրթ բնակարանային պայմաններով ապահովվածության միջազգային նորմաներից, որոնցում հիմնական է համարվում ընտանիքի անդամների անձնական հիգիենայի ապահովումը:

Հարցման արդյունքների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնային տնտեսությունների անդամների 5 տարիքային խմբերում բաշխումները ըստ սենյակների թվաքանակների ունեն հետևյալ պատկերը:

Աղյուսակ 4.5 **Տարիքային խմբերի բաշխվածությունը ըստ սենյակների թվաքանակի, %**

Կացարանի սենյակների քանակը	մինչև16 տարեկան	16-30 տարեկան	31-49 տարեկան	50-62 տարեկան	63 և ավելի տարեկան
Մեկ սենյակ	7.3	6.2	7.3	8.9	11
Երկու սենյակ	24.5	24.7	26.4	24.8	28.0
Երեք սենյակ	37.7	37.8	37.1	40.4	34.2
Չորս սենյակ	19.2	20.3	18.7	18.2	17.2
Հինգ սենյակ	7.4	6.8	7.0	5.4	6.3

Վեց սենյակ	1.9	2.4	2.0	1.1	1.9

Աղյուսակ 4.5-ից դժվար չէ տեսնել, որ կացարանի երկու սենյակից սկսած նվազում է բնակիչների թվաքանակը: Ավելի շատ սենյակների պարագայում ցուցանիշները կտրուկ նվազում են:

Եթե ամփոփենք բերված հարաբերակցությունները, ապա կարող ենք արձանագրել, որ վերարտադրողական տարիքի բնակչությունը գերազանցապես ապրում է 2-4 սենյականոց կացարաններում:

Տնային տնտեսությունների ապրուստի միջոցների, բնակարանային և կենցաղային պայմանների գնահատման համար կարևոր ցուցանիշ է կացարանների ձմեռային ջեռուցման տեսակի ընտրությունը և առկայությունը: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ տնային տնտեսությունների 33%-ը կացարանները ջեռուցում է գազով, 28%-ը՝ փայտով, 21%-ը՝ էլեկտրականությամբ, 0.1%-ը՝ նավթով, 0.1%-ը ածխով և 4.6%-ը՝ այլ վառելանյութի օգտագործմամբ:

Տնային տնտեսությունների բնակարանային պայմանների գնահատման համար կարևոր է կոմունալ հարմարությունների առկայությունը: Հարցումների արդյունքներն ամփոփ տեսքով ներկայացնում ենք ներքևում բերվող աղյուսակում:

Աղյուսակ 4.6 **Կոմունալ հարմարությունների առկայությունը տնային տնտեսություններում,** %

Կոմունալ հարմարություններ	Ունեն	Չունեն	Ունեն, սակայն չի գործում
Խոհանոց	92.1	7.0	0.9
Հոսող ջրով զուգարան	68.9	29.6	1.5
Դրսի զուգարան	37.8	61.1	1.0
Լոգարան, ցնցուղ	65.7	23.9	10.4
Հեռախոս	73.9	24.5	1.6
Կենտրոնացված ջրամատակարարում	88.7	10.6	0.8
Կենտրոնացված ջրահեռացում	76.3	22.4	1.3
Աղբահանություն	63.8	35.3	1.0
Հոսող տաք ջուր (բաք, հեյզեր, գազի կաթսա)	21.6	76.1	2.4
Կենտրոնացված գազամատակարարում	55.9	43.6	0.5

Ընտրանքում տնային տնտեսությունների կենցաղային հարմարությունների գնահատման համար ընտրվել են 3 խումբ ինդիկատորներ, որոնց պատասխանների խմբավորումը ցույց է տալիս հետևյալ պատկերը՝

1. *Կենցաղային նվազագույն պայմաններ (խոհանոցի, հոսող ջրով զուգարանի, ջրահեռացման, աղբահանության առկայություն)* ունեն տնային տնտեսությունների 52.4%-ը,
2. *Կենցաղային միջին պայմաններ (խոհանոցի, հոսող ջրի, ջրահեռացման, աղբահանության, հեռախոսի և հոսող տաք ջրի առկայություն)* ունեն տնային տնտեսությունների 17.3%-ը,
3. *Կենցաղային պայմաններով (խոհանոցի, հոսող ջրի, ջրահեռացման, աղբահանության, հեռախոսի և հոսող տաք ջրի, լոգարանի, ցնցուղի, կենտրոնացված գազամատակարարման և ջրամատակարման առկայություն)* ապահովված են տնային տնտեսությունների 11.5%-ը:

Ինչպես երևում է հարցման արդյունքներից, տնային տնտեսությունների զգալի հատվածի բնակարանային և կենցաղային տարրական անհրաժեշտ պայմանները հեռու են բավարար լինելուց, իսկ տնային տնտեսությունների 19.8%-ը չունեն անգամ նվազագույն կենցաղային պայմաններ:

Ասվածն առավել հիմնավորվում է, երբ գնահատում ենք կացարանների ջեռուցման և խմելու ջրով ապահովվածության վիճակը: Նշված կարիքների վերաբերյալ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ կենտրոնական ջեռուցում ունեն 2.4%-ը, սեփական ջեռուցման համակարգ՝ 38.1%-ը, էլեկտրական տաքացուցիչով, փայտի վառարանով և օջախներով տաքացվում են կացարանների 58.1%-ը և չի ջեռուցվում 1.5%-ը: Կենտրոնական ջրամատակարարում ունեն կա-

ցարանների 87.3%-ը, ջրհորից և աղբյուրներից օգտվում են 4.8%-ը, բերովի ջուր են օգտագործում տնային տնտեսությունների 5.4%-ը:

Ուսումնասիրություններ են կատարվել ընտրանքի տնային տնտեսությունների կացարանների և սոցիալական հաստատությունների գտնվելու վայրի հեռավորության հետ կապված: Աղյուսակում 4.7-ում ցույց են տրված յուրաքանչյուր հաստատությունից նշված հեռավորության շառավղային և օղակային շերտերում գտնվող տնային տնտեսությունների տոկոսային պարունակությունները:

Աղյուսակ 4.7 **Կացարանից ծառայությունների հեռավորությունը, %**

Հաստատություններ	Կացարանի հեռավորությունը հաստատությունից						
	0-0.5 կմ	0.5-1 կմ	1-2 կմ	2-5 կմ	5-10 կմ	10-20կմ	20կմ –ից ավելի
Բուժհաստատություն	37.4	27.4	20.1	10.5	2.2	2.0	0.1
Դեղատուն	62,4	19.2	6.7	5.9	3.6	1.0	1.2
Համայնքի գրասենյակ	53.6	29.2	10.9	4.9	0.1	0.6	0.3
Մանկապարտեզ	67 ,7	2.17	3.9	4.4	0.1	0.2	0.7
Տարրական դպրոց	36.1	22.2	27.8	8.3	2.8	2.8	-
Միջնակարգ դպրոց	44.0	31.0	22.5	4.6	0.1	0.8	-

Կրթական և բուժական հաստատություններից, դեղատներից, գրադարաններից և կրթական օջախների ծառայություններից օգտվելու դժվարություններ ունենալու հարցադրմանը պատասխանել են ընտրանքի բոլոր տնային տնտեսությունները: Պատասխանների խմբավորումները տալիս են իրավիճակի հետևյալ պատկերը:

Աղյուսակ 4.8 **Ծառայությունների մատչելիությունը տնային տնտեսությունների համար, %**

Հաստատություն	Լուրջ դժվարություն ունեն	Մասնակի դժվարություն ունեն	Դժվարություն չունեն
Բուժական	8.8	25.9	65.3
Դեղատուն	8.2	25.1	66.7
Գրադարան	2.8	14.4	82.8
Մանկապարտեզ	12.2	20.9	66.9
Տարրական դպրոց	0.6	7.8	91.6
Միջնակարգ դպրոց	15.5	9.9	74.6

Եթե ընդհանրացնենք վերոհիշյալ հաստատությունների մատուցած ծառայությունների մատչելիությունը, կարող ենք արձանագրել, որ առողջապահական ծառայություններից օգտվելու դժվարություններ ունեն ընտանիքների 34.7%-ը, դեղատներից՝ 33.3, տարրական դպրոցներ երեխաների հաճախումների հետ կապված՝ 8.4, միջնակարգ դպրոցներ՝ 25.4, մանկապարտեզներ՝ 33.1%-ը: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը և պատահական չպետք է համարվի այն իրողությունը, որ վերոհիշյալ ծառայությունների մատչելիությունը տոկոսային հարաբերակցությունների փոքր շեղումներով համընկնում է հանրապետությունում ընտանիքների աղքատության միջին մակարդակին:

5. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Հարցմանը մասնակցած ընտանիքների անդամներից 28.6%-ը զբաղված է եղել որևէ ոլորտում, 36.2%՝ տղամարդ, 21.8% կին: Զբաղվածների 28.8%-ը քաղաքաբնակ է, իսկ 28.2%՝ գյուղաբնակ: (Աղյուսակ 5.1)

Աղյուսակ 5.1 **Ընտանիքների անդամների զբաղվածության նկարագիրը (%)**

Զբաղվածության բնույթը	ՀՀ միջին	Կին	Տղամ.	Քաղաք	Գյուղ
Իշխանության և կառավարման մարմինների բոլոր մակարդակների ղեկավարներ և ներկայացուցիչներ	2.0	1.3	2.7	2.3	1.4
Բարձր որակավորման մասնագետներ	4.5	3.9	5.2	5.9	1.9
Միջին որակավորման մասնագետներ	4.6	4.6	4.6	4.7	4.2
Տեղեկատվության մշակման, փաստաթղթերի ձևակերպման, հաշվառման և սպասարկում իրականացնող մասնագետներ	1.1	1.2	0.9	1.3	0.8
Սպասարկման ոլորտի աշխատողներ	5.4	4.3	6.7	7.2	2.2
Որակավորված աշխատողներ գյուղատնտեսության, անտառտնտեսության, որսորդության, ձկնաբուծության և ձկնորսության բնագավառում	1.9	1.2	2.7	0.5	4.5
Որակավորված բանվորներ խոշոր և մանր արդյունաբերական կազմակերպություններում, գեղարվեստական իրերի արտադրության, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության և ընդերքի հետազոտման ոլորտներում	2.5	0.7	4.6	3.1	1.5
Փականագործ – հավաքողներ և սարքավորումների ու մեքենաների օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ	0.8	0.1	1.5	0.9	0.6
Որակավորում չունեցող աշխատողներ	5.8	4.5	7.3	2.9	11.1
Ընդամենը	28.6	21.8	36.2	28.8	28.2

Աղյուսակ 5.1-ը թույլ է տալիս արձանագրել, որ զբաղվածության գրեթե բոլոր ոլորտներում տղամարդկանց տեսակարար կշիռն ավելի բարձր է: Ըստ առանձին ոլորտների արձանագրված տարբերությունների կարելի է նշել իշխանության և կառավարման մարմինների ներկայացուցիչների մեջ տղամարդկանց 2, իսկ որակավորված բանվորների պարագայում՝ շուրջ 7 անգամ գերազանցությունը կանանց նկատմամբ: Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի նույնպես գրանցվում են որոշ տարբերություններ: Քաղաքային բնակչության զբաղվածության մակարդակը բարձր է գրեթե բոլոր ոլորտներում, բացառությամբ գյուղատնտեսության, անտառտնտեսության և այլ ոլորտների որակավորված աշխատողների և որակավորում չունեցող աշխատողների: Բարձր որակավորված մասնագետների դեպքում քաղաքում արձանագրված ցուցանիշը գյուղի համանման ցուցանիշին գերազանցում է 3, սպասարկման ոլորտի մասնագետների պարագայում՝ ավելի քան 3 անգամ:

Զբաղվածության նման պատկերը կարելի է դիտարկել նաև որպես վերջին տարիների իրողությունների հետևանք, որոնք հնարավորություն են տալիս որոշ փոփոխություններ արձանագրել նաև «աշխատանքի համամասնության» բաշխվածության, կնոջ կարգավիճակի ու զբաղվածության փոփոխության հարցերում: Ի տարբերություն խորհրդային շրջանի, երբ զբաղվածության խնդիրը հիմնականում լուծված էր, տնտեսական արմատական վերափոխումները հանգեցրել են ինչպես աշխատաշուկայի կառուցվածքի, այնպես էլ աշխատանքային մտածե-

լակերպի փոփոխությունների: Այսօր, կապված սոցիալ-տնտեսական ծանր պայմանների և զբաղվածության սահմանափակ հնարավորությունների հետ, բազմաթիվ անհատների համար առաջնայինը աշխատանք ունենալու փաստն է, այլ ոչ թե համապատասխանությունը մասնագիտական հմտություններին, նախասիրություններին ու կրթական ցենզին: Բարձր վարձատրվող աշխատանքի դեպքում այդ գործոնները կարող են ընդհանրապես հաշվի չառնվել: Միաժամանակ, ենթադրության մակարդակում կարելի է արձանագրել, որ աշխատանքի կորստի հավանականությունը կնոջ համար ավելի բարձր է, իսկ կնոջ վիճակն՝ ավելի ռիսկային[16]:

Աղյուսակ 5.2 **Սոցիալ - մասնագիտական կարգավիճակն ըստ ընտանիքում մինչև 16 տարեկան երեխաների թվի[17], %**

Զբաղվածության բնույթը	ըստ ընտանիքում մինչև 16 տարեկան երեխաների թվի, %			
	1	2	3	4 և ավ.
Իշխանության և կառավարման մարմինների բոլոր մակարդակների ղեկավարներ և ներկայացուցիչներ	5.8	7.9	6.1	0
Բարձր որակավորման մասնագետներ	15.3	19.2	12.0	0
Միջին որակավորման մասնագետներ	16.6	19.9	9.5	15.3
Տեղեկատվության մշակման, փաստաթղթերի ձևակերպման, հաշվառման և սպասարկում իրականացնող մասնագետներ	4.7	3.4	0.8	0
Սպասարկման ոլորտի աշխատողներ	19.9	16.0	12.3	14.4
Որակավորված աշխատողներ գյուղատնտեսության, անտառնտեսության, որսորդության, ձկնաբուծության և ձկնորսության բնագավառում	6.7	7.4	7.4	0
Որակավորված բանվորներ խոշոր և մանր արդյունաբերական կազմակերպություններում, գեղարվեստական իրերի արտադրության, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության և ընդերքի հետազոտման ոլորտներում	9.6	7.8	11.2	13.4
Փականագործ – հավաքողներ և սարքավորումների ու մեքենաների օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ	2.8	1.5	3.7	0
Որակավորում չունեցող աշխատողներ	18.6	16.9	37.0	56.9
Ընդամենը	100	100	100	100

Ինչպես երևում է Աղյուսակ 5.2-ից, ընտանիքում երեխաների թվի և զբաղվածության բնույթի միջև արձանագրվում է որոշակի կապ, չնայած դրա խորքային, համակողմանի դիտարկումը պահանջում է լրացուցիչ հետազոտություններ: Ըստ հարցման արդյունքների, դիտվող միտումը հետևյալն է. ընտանիքում 1 երեխա ունեցող զբաղվածների մեջ համեմատաբար բարձր է սպասարկման ոլորտում ընդգրկվածների, բարձր ու միջին որակավորմամբ մասնագետների և որակավորում չունեցող աշխատողների տեսակարար կշիռը: Որակավորված մասնագետների համար կարելի է ենթադրել, որ դրանք հիմնականում բարձրագույն կրթությամբ երիտասարդ ամուսնական զույգերն են, որոնք կարողացել են ըստ մասնագիտության աշխատանք ապահովել: Իշխանության և կառավարման մարմինների ներկայացուցիչների մեջ նույնպես 1 երեխա

[16] Սրա վառ ապացույցը տարբեր հիմնարկ ձեռնարկություններ, հատկապես սպասարկման օբյեկտներ աշխատանքի ընդունվելու սահմանափակումներն են՝ մինչև 35 տարեկան, բարետես, բարձրագույն կրթությամբ և օտար լեզուների իմացությամբ: Ընդ որում, շատ դեպքերում դրվում են ավելի խիստ պայմաններ, քան ենթադրում է տվյալ աշխատանքը:

[17] Բաժին 5-ի սկզբում նշվեց, որ որևէ ոլորտում զբաղված է հարցման մասնակից ընտանիքների անդամների 28.6%-ը, այսինքն՝ շուրջ 2600 մարդ (հարցման մասնակից տ/տ-ներում բնակվել է 9093 մարդ): Այդ թիվն ըստ ընտանիքում երեխաների թվի վերահաշվարկելու դեպքում, Աղյուսակ 5.2-ի տվյալների տեսակարար կշիռները հարցման մասնակիցների ընդհանուր թվի համեմատությամբ դիտարկելիս, մոտենում են 0-ի կամ շատ քիչ են մեծ 0-ից: Ուստի Աղյուսակը կառուցվել է ըստ երեխաների թվի տեսակարար կշռի զբաղվածության պատկերի հաշվառման սկզբունքով: Սա հնարավորություն է տալիս արձանագրել ընդհանուր միտումները միայն, սակայն բավարար չէ զբաղվածության ամբողջական պատկերն ու երեխաների թվաքանակի ու զբաղվածության խորքային կապերը դիտարկելու համար:

ունեցողների տեսակարար կշիռը բարձր է 2 և 4 երեխա ունեցողների համեմատությամբ, սակայն այստեղ միանշանակ ենթադրություններ կատարելը բավականին բարդ է: Վերջին տարիներին կառավարման մարմինները, հատկապես նախարարությունների աշխատակազմերը համալրվում են հիմնականում վերարտադրողական տարիքի երիտասարդներով, ուստի ասել, որ սա դարձել է ժողովրդագրական վարք կամ 1 երեխա ունենալը հնարավորություն է տալիս ապահովել զբաղվածության ավելի բարձր կարգավիճակ, եղած տեղեկատվության սահմաններում ճիշտ չի լինի:

Երկու երեխա ունեցող ընտանիքների զբաղվածության պատկերը 1 երեխա ունեցողների համեմատությամբ էական տարբերություններ չունի. բաշխվածությունն ըստ զբաղվածության ոլորտների գրեթե նույնն է, փոքր-ինչ բարձր է իշխանության և կառավարման ղեկավար մարմինների ներկայացուցիչների տեսակարար կշիռը: Այս դեպքում, դարձյալ կարելի է ենթադրել, որ սրանք հիմնականում միջին սերնդի ներկայացուցիչներ են, բարձրագույն կրթությամբ:

Երեք երեխա ունեցող ընտանիքներում արձանագրվում է բավականին ուշագրավ պատկեր: Այստեղ զբաղվածության դաշտի վերին՝ իշխանության և կառավարման մարմինների ղեկավարների և ներքին՝ որակավորում չունեցող աշխատողներ, «սահմաններում» արձանագրվում է զբաղվածների համեմատաբար բարձր տեսակարար կշիռ: Վերին սահմանում ներառվածների տեսակարար կշիռը բարձր է 1 երեխա ունեցող ընտանիքների համեմատությամբ՝ 6.1%, 3 երեխա ունեցող ընտանիքների 5.8%-ի դիմաց:

Չորս երեխա ունեցող ընտանիքներում արդեն տարբերություններն էական են նախորդ խմբերի համեմատությամբ: Այստեղ ամենաբարձր տեսակարար կշիռն ունեն որակավորում չունեցող աշխատողները, սպասարկման ոլորտի աշխատողները և միջին որակավորման մասնագետները: Ենթադրության մակարդակում կարելի է փաստել, որ այս խմբում կարող են արձանագրվել նաև կրթական ցենզի ու զբաղվածության ոլորտի անհամամասնություններ:

ԵՎ, ի վերջո, կարելի է արձանագրել, որ զբաղվածության նման պատկերն ու բաշխվածությունն ըստ ընտանիքում երեխաների թվաքանակի, կարող է բավականին արագ փոփոխություններ կրել: Այն, արտացոլելով վերջին մեկուկես տասնամյակի փոփոխությունները, միաժամանակ դեռևս վերջնականապես չի կայացել, իսկ սոցիալ-տնտեսական զարգացումները կարող են հանգեցնել զբաղվածության ոլորտների էական վերադասավորումների:

Աղյուսակ 5.3 **Նուկլեար ընտանիքում զբաղված անդամների թվաքանակը (%)**

Ընտանիքում զբաղված անդամների թվաքանակը	Տոկոսային հարաբերակցությունը
Մեկ մարդ	54.9
Երկու մարդ	37.5
Երեք մարդ	5.5
Չորս մարդ	1.8
Հինգ մարդ	0.2
Ընդամենը	100

Աղյուսակ 5.3-ը նույնպես արտացոլում է վերջին տարիների փոփոխությունները: Ընտանիքների մեծ մասն ունի հիմնականում 1 և 2 աշխատող՝ 54.9 և 37.5%: Երեք և ավելի զբաղվածների ցածր տեսակարար կշիռը, բացի աշխատանք ունենալու բարդություններից, կարող է բացատրվել այն իրողությամբ, որ նուկլեար ընտանիքներում մեծ թիվ են կազմում անչափահաս, ոչ աշխատանքային տարիքի երեխաները:

Հետազոտությունում հարցում է կատարվել նաև աշխատավարձի չափի մասին:

Աղյուսակ 5.4 **Հարցվածների տոկոսային բաշխվածությունը ըստ աշխատավարձի չափի**

Աշխատավարձի չափը (դրամ)	%
մինչև 10000 դրամ	0.6
10000-15000 դրամ	6.7
20000-30000 դրամ	24.4
35000-45000 դրամ	21.2
50000-70000 դրամ	25.9

80000-100000 դրամ	13.8
120000-150000 դրամ	7.4
Ընդամենը	100

Աղյուսակ 5.4-ից երևում է, որ 120-150 հազար դրամ աշխատավարձ է ստանում հարցվածների միայն 7.4%-ը, 80-100 հազար դրամ՝ 13.8%-ը, 50-70 հազար՝ 25.9%-ը:

Ընտանիքի նորմալ տնտեսական գործունեությունն ապահովելու համար աշխատավարձի և այլ շահութաբեր գործունեությունից ստացված եկամտի հետ մեկտեղ, կարևոր աղբյուր են դրամական օգնությունները տ/տ դրսում ապրող անդամների կողմից: Հարցման մասնակիցների ընդամենը 2.8%-ն է նշել, որ ստանում է որևէ դրամական օգնություն: Դրամական օգնությունների չափերը տատանվում են 10000-200000 դրամի սահմաններում՝ ՀՀ-ից դուրս բնակվող տ/տ անդամ ունեցողների և 5000-50000դրամի սահմաններում՝ ՀՀ-ում բնակվող հարազատներ ունեցողների համար[18]:

Տնային տնտեսության եկամուտը բնակչության կենսամակարդակը գնահատելու կարևոր ցուցանիշներից մեկն է: Սույն հետազոտության իմաստով տնային տնտեսությունների եկամուտների ներքո հասկացվում են դրամական եկամուտների, ինչպես նաև սոցիալական աջակցության տեսակները: Տ/տ դրամական եկամուտները բաղկացած են դրամական և բնամթերքով (դրամական արտահայտությամբ) մուտքերից, որոնք ստացվել են տ/տ անդամների կողմից որպես աշխատանքի վարձատրություն, ինքնազբաղվածության արդյունքում կամ ձեռնարկատիրական գործունեությունից, սեփականության վարձակալումից, շահաբաժիններից, գյուղատնտեսական մթերքի վաճառքից ստացված գումարները, սոցիալական աջակցության, թոշակների, ինչպես նաև բարեկամներից և հումանիտար կազմակերպություններից ստացված օժանդակություններից կամ դրամական այլ եկամուտների տեսքով ստացված գումարները:

Աղյուսակում 5.5-ում արտացոլված են տ/տ 1 շնչի հաշվով միջին ամսական դրամական եկամուտը և աղբյուրները:

Աղյուսակ 5.5 **Մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամուտն ըստ եկամտի աղբյուրների, քաղաք/ գյուղ կտրվածքով, %**

Աղբյուրը	Քաղաք	Գյուղ	Միջին հանրապետ.
1.Աշխատավարձ	64.7	23.8	48.1
2.Թոշակներ	8.7	5.9	7.5
3.Նպաստներ, այդ թվում՝			
ընտանեկան	1.4	1.7	1.6
երեխայի	0.3	1	0.6
այլ	0.2	0.1	0.2
4. Դրամական օգնություն, այդ թվում՝			
դրսում գտնվող տնային տնտեսության անդամից	9.3	8	8.8
ՀՀ-ում բնակվող հարազատներից	3.1	1.1	2.3
ՀՀ-ից դուրս բնակվող հարազատներից	4.5	3.8	4.2
հումանիտար օգնություն	0.04	0.01	0.03
5. Այլ (գյուղ. մթերքի վաճառք, ձեռնակատիրական գործունեություն և այլն)	7.8	54.6	26.7
Ընդամենը	100	100	100
Ընդամենը (դրամական արտահայտությամբ)	25500	32000	28000

Ինչպես երևում է Աղյուսակ 5.5-ից, քաղաքներում եկամտի հիմնական աղբյուր են աշխատավարձերը՝ 64.7%, մինչդեռ գյուղերի համար դրանք կազմում են 23.8%: Հակառակ պատկերն է դիտվում այլ աղբյուրներից (գյուղմթերքի վաճառք, ձեռնարկատիրական գործունեություն,

[18] Դրամական օգնությունները գրանցվել են 1 տարվա կտրվածքով, այնուհետև վերահաշվարկվել ըստ ամիսների: Վերին և ներքին շեմերի նման մեծ տարբերությունները՝ 20 անգամ ՀՀ-ից դուրս բնակվող տ/տ անդամ և 10 անգամ՝ ՀՀ-ում բնակվող անդամ ունեցող տ/տ-ների համար հասկանալի են, եթե հաշվի առնենք, որ հատկապես ՀՀ-ից դուրս գտնվողները ոչ միշտ են կարողանում օգնել ընտանիքի անդամներին ու հարազատներին: ԱՄՆ դոլարի հաշվարկով ՀՀ-ից դուրս բնակվողների օգնության նվազագույն քանակը կազմում է տարեկան 300 ԱՄՆ դոլար, ինչը, կարծում ենք իրատեսական ցուցանիշ է:

վարձակալություն, շահաբաժիններ) ստացված եկամտի մասնաբաժնում՝ քաղաքային բնակավայրերի համար այն կազմել է 7.9%, իսկ գյուղական բնակավայրերում՝ 54.6%:

Գծապատկեր 5.1 **Եկամուտի կառուցվածքը**

.



Ընտանիքի նյութական վիճակի վրա մեծ ազդեցություն է թողնում նաև բնակավայրը: Ընտանիքում մեկ շնչի հաշվով միջին դրամական եկամուտը քաղաքներում կազմում է 26000 դրամ, իսկ գյուղերում՝ 32000 դրամ[19]:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ մինչև 16 տարեկան 1 երեխա ունեցող ընտանիքներում միջին եկամուտը մեկ առկայի հաշվով 1.7 անգամ գերազանցում է այն ընտանիքների եկամուտը, որտեղ մինչև 16 տարեկան երեխաների թվաքանակը երկու կամ երեք է (Աղյուսակ 5.7):

Աղյուսակ 5.6 **Միջին եկամուտը մեկ առկայի հաշվով, ըստ ընտանիքներում մինչև 16 տարեկան երեխաների թվաքանակի, դրամ**

Մինչև 16 տարեկան երեխաների թվաքանակն ընտանիքում	Միջին եկամուտ
1 երեխա	24000
2 երեխա	20000
3 երեխա	14000

Ըստ հետազոտության, մինչև 16 տարեկան երեխա ունեցող ընտանիքների 61.4%-ն ունեցել է աշխատանք, 26.1%-ը՝ այլ եկամտաբեր զբաղմունք (գյուղմթերքի վաճառք, ձեռնարկատիրական գործունեություն և այլն), իսկ 12.5%-ը՝ և աշխատանք և' այլ եկամտաբեր գործունեություն: Քաղաքային բնակավայրում բնակվող մինչև 16 տարեկան երեխա ունեցող ընտանիքներում աշխատանք ունեցող անդամների թվաքանակը բավականին բարձր է գյուղաբնակ ընտանիքների համեմատությամբ (համապատասխանաբար 84.2% և 15.8%): Հակառակ պատկերն է մինչև 16 տարեկան երեխա ունեցող ընտանիքներում այլ եկամտաբեր զբաղմունք ունեցող անդամների թվաքանակի մեջ, քաղաքներում այն բավականին ցածր է գյուղերի համեմատությամբ (համապատասխանաբար 23.2% և 76.8%): Դա կարելի է բացատրել նրանով, որ գյուղերում բնակչության մեծ մասը զբաղված է գյուղատնտեսական գործունեությամբ:

[19] Հետազոտությունն անց է կացվել ամռանը, ուստի կարելի է ենթադրել, որ հետազոտությունը համընկել է գյուղմթերքի վաճառքի ժամանակահատվածի հետ (որպես եկամուտ է դիտարկվել գյուղմթերքի վաճառքը), այդ իսկ պատճառով գյուղերում ավելի ճիշտ են ներկայացրել եկամուտները: Քաղաքային բնակավայրերում, ամենայն հավանականությամբ, իրականից ավելի քիչ եկամուտ է ներկայացվել:

Աղյուսակ 5.7 **Մեկ շնչի հաշվով միջին դրամական եկամուտն ըստ ընտանիքի տիպերի և նրանցում մինչև 16 տարեկան երեխաների թվի (դրամ)**

Մինչև 16 տարեկան երեխաներ	Ընտանիքի տիպը		
	Լրիվ կազմով նուկլեար ընտանիք	Միայնակ մոր գլխավորությամբ ընտանիք	Խառը ընտանիք
1 երեխա	26000	19000	18000
2 երեխա	20000	10000	13000
3 երեխա	14000	5000	9000

Աղյուսակ 5.7-ի տվյալներից երևում է, որ որոշ տարբերություններ են գրանցվել ըստ ընտանիքի տիպի և ընտանիքում երեխաների թվաքանակի: Եթե 1 երեխայի դեպքում տարբերություններն էական չեն, ապա 2 և 3 երեխայի դեպքում դրանք բավականին արտահայտված են: Այսպես՝ 2 և 3 երեխա ունեցող լրիվ կազմով նուկլեար ընտանիքների եկամուտները միայնակ մոր գլխավորությամբ ընտանիքների և խառն ընտանիքների եկամուտներն ավել են գրեթե երկու, որոշ դեպքերում նաև երկու և ավելի անգամ:

Ուշագրավ է, որ երեխաների թվի աճին զուգընթաց բոլոր տիպի ընտանիքներում նվազում են եկամուտները: Այսպես՝ մեկ երեխայով լրիվ կազմով նուկլեար ընտանիքում դրանք կազմում են 26000, իսկ 3 երեխայի դեպքում՝ արդեն 14000 դրամ, այսինքն, շուրջ երկու անգամ պակաս: Տարբերություններն ավելի մեծ են միայնակ մոր գլխավորությամբ ընտանիքներում՝ ավելի քան 3 անգամ: Հավանաբար, այս դեպքում պետք է նկատի ունենալ, որ, երեխաների թվի աճին զուգընթաց, նվազում է աշխատելու հավանականությունը հատկապես միայնակ մոր գլխավորությամբ ընտանիքներում: Տարբերություններ են արձանագրված նաև խառն ընտանիքներում, որտեղ 1 և 3 երեխայի դեպքում եկամուտները տարբերվում են 2 անգամ:

Գծապատկեր 5.2 **Եկամուտներով բավարվածների տոկոսային հարաբերությունը**



Ըստ հարցման արդյունքների, ընդամենը 2.2%-ն է նշել, որ եկամուտները բավարար են բոլոր տիպի ծախսերը հոգալու համար: «Բավարար է միայն հիմնական կարիքները հոգալու համար» տարբերակին դրական է պատասխանել միայն 14.1%-ը: Անբավարար և խիստ անբավարար պատասխանների հանրագումարը մոտենում է 60%-ի: Եթե սրան ավելացնենք նաև այն ընտանիքների տեսակարար կշիռը, որոնց եկամուտները բավարար են ընդամենը սննդամթերքի և

որոշ այլ կարիքները հոգալու համար, ապա կստանանք 80%-ը գերազանցող ցուցանիշ: Այսինքն, ինչպես ցույց կտրվի նաև վերլուծության հետագա բաժիններում, տնտեսական գործոնը դեռևս պահպանում է իր կարևորությունը ընտանիքին վերաբերող տարբեր խնդիրներում:

Հարցվածները, որպես բոլոր հիմնական ծախսերը կատարելու և որոշ խնայողություններ անելու համար բավարար միջին ամսական եկամուտ են նշել մոտավորապես 250000 դրամը:

Այն հարցին, թե որոնք պետք է լինեն Ձեր կողմից նշված գումարի ստացման հիմնական աղբյուրները, 46.5% նշել է աշխատավարձը, 35.8% որպես հիմնական աղբյուր է նշել մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը, 15.2%՝ գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտները, 1.9%՝ կենսաթոշակներն ու նպաստները, 0.2%-ը՝ տ/տ բացակա անդամների օգնությունն է դիտում որպես եկամտի հիմնական աղբյուր ***(Գծապատկեր 5.3)***:

Տարբերակների նման բաշխվածությունը նույնպես բավականին ուշագրավ է: Հարցման մասնակիցների մոտավորապես կեսը ընտանեկան բյուջեի ձևավորման խնդրում կարևորում է աշխատավարձերը, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած վերջին տասնամյակի փոփոխություններին, աշխատանքը դեռևս պահպանում է իր կարևորությունը, ինչն էական է հատկապես ընտանիքի հանդեպ պետական քաղաքականության կառուցման առումով:

Գծապատկեր 5.3 **Հարցվածների կողմից նշված գումարի ստացման հիմնական աղբյուրները**



Տնային տնտեսությունների նյութական վիճակը բնութագրող հաջորդ ցուցանիշը՝ տնային տնտեսության ծախսերը, վերլուծությունում ներկայացված են սպառողական ծախսերի միջոցով: Հետազոտությունում ուսումնասիրվել են տ/տ կողմից կատարված բոլոր տեսակի ծախսերը: Դրանք տնային տնտեսությունների կողմից մեկ ամսվա ընթացքում ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց կատարված վճարումների գումարներն են, ինչպես նաև երկարաժամկետ օգտագործման ապրանքների և ծիսական ծառայությունների դիմաց վճարած գումարները:

Աղյուսակ 5.8 **Մեկ շնչի հաշվով ծախսերը (մեկ ամսվա կտրվածքով), %**

Ծախսեր	ՀՀ, միջին	Քաղաք	Գյուղ
1. Սնունդ, որից	38.1	38.0	38.3
ա. Ծխախոտ և ոգելից խմիչքներ	4.8	4.2	6.2
2. Ոչ պարենային ապրանքներ (հագուստ, կոշիկ, հիգիենայի պարագաներ)	9.9	8.4	13.2
3. Ծառայություններ , այդ թվում	17.3	16.5	19.1
ա. Կոմունալ ծառայություններ	8.0	8.5	6.7
բ. Առողջապահություն	3.0	2.6	4.0
գ. Կրթություն	3.2	3.1	3.2
դ. Մշակույթ	0.5	0.5	0.3
ե. Այլ	2.7	1.8	4.8
4. Երկարաժամկետ օգտագործման ապրանքներ և ծիսական ծառայություններ	29.9	32.8	23.3
Ընդամենը (%)	100	100	100
Ընդամենը (դրամ)	34000	36000	30000

Աղյուսակ 5.8-ի տվյալներից երևում է, որ տնային տնտեսությունների ծախսերի հիմնական մասը բաժին է ընկնում սննդին՝ 38.1%: Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի էական տարբերություններ չեն արձանագրվում:

Ծախսերի հաջորդ խումբը կազմում են «երկարաժամկետ օգտագործման ապրանքները և ծիսական ծառայությունները», որոնք հիմնականում միանգամյա են, սակայն բավականին ծախսատար: Քաղաքային միջավայրում դրանք փոքր-ինչ ավելի են, քան գյուղականում, ինչը հավանաբար կարելի է բացատրել նաև պահանջմունքների որոշակի տարբերություններով:

Ծառայություններին հատկացվող գումարները նույնպես բավականին բարձր տոկոս են կազմում, իսկ այս խմբի ներսում արձանագրվում են ուշագրավ տարբերություններ: Կոմունալ ծառայություններին բաժին է ընկնում ծախսերի շուրջ 10%-ը, սակայն պետք է ենթադրել, որ ձմռան ամիսներին դրանք աճում են: Ուշագրավ է, որ և քաղաքային և՝ գյուղական միջավայրում կոմունալ ծառայությունների ծախսերը գերազանցում են և առողջապահական և՝ կրթական ու մշակութային ծախսերը: Այսպես, քաղաքային միջավայրում դրանք առողջապահական և կրթական ծախսերը գերազանցում են ավելի քան 2.5, մշակութայինը՝ 16 անգամ, իսկ գյուղական միջավայրում՝ համապատասխանաբար 1.5 և 2.5, իսկ մշակութայինը՝ ավելի քան 20 անգամ: Ըստ էության, կարելի է արձանագրել, որ տնային տնտեսությունների մեծ մասում մշակութային ծախսեր գրեթե չեն կատարվում, սահմանափակ են նաև առողջապահական ու կրթական ծախսերն ու դրանց հնարավորությունները, եթե հաշվի առնենք նաև վերը բերված գնահատականները եկամուտների բավարարվածության վերաբերյալ:

Աղյուսակ 5.9 **Մեկ շնչի հաշվով ծախսերն ըստ տնային տնտեսությանում ընտանիքների թվաքանակի (մեկ ամսվա կտրվածքով)**

Ծախսեր	Ընտանիքների թվաքանակը տ/տ-ում				ՀՀ, միջին
	1	2	3	4	
1. Սնունդ	37.2	40.8	38.3	75.0	38.1
ա. Ծխախոտ և ոգելից խմիչքներ	4.5	5.7	6.8	7.5	4.8
2. Ոչ պարենային ապրանքներ (հագուստ, կոշիկ, հիգիենայի պարագաներ)	9.3	11.4	12.8	7.5	9.9
3. Ծառայություններ , այդ թվում	17.2	17.8	15.9	10	17.3
ա. Կոմունալ ծառայություններ	8.0	7.9	7.8	7.5	8.0
բ. Առողջապահություն	2.9	3.1	3.5	-	3.0
գ. Կրթություն	3.2	3.1	2.3	-	3.2
դ. Մշակույթ	0.5	0.5	0.6	-	0.5
ե. Այլ	2.6	3.2	1.7	2.5	2.7
4. Երկարաժամկետ օգտագործման ապրանքներ և ծիսական ծառայ.	31.8	24.2	26.1	-	29.9
Ընդամենը (%)	100	100	100	100	100
Ընդամենը (դրամ)	38000	26000	27000	20000	34000

Աղյուսակ 5.9-ում բերված թվային տվյալները հնարավորություն են տալիս արձանագրել, որ տնային տնտեսությունում ընտանիքների թվաքանակից կախված փոփոխություններ է կրում նաև ծախսերի կառուցվածքը: Այսպես, 4 ընտանիքից կազմված տ/տ-ներում ծախսերի մեծամասնությունը՝ 75%, բաժին է ընկնում սննդին, 1-3 ընտանիքներից կազմված տ/տ-ների ցուցանիշը գերազանցելով 2 անգամ: Այս տ/տ-ներում միջին հանրապետականից ցածր են ծառայությունների համար կատարվող ծախսերը, ինչը բնական է, քանի որ համատեղ բնակության պայմաններում մեկ շնչի հաշվով նվազում են էլեկտրաէներգիայի, ջեռուցման և որոշ այլ ծախսեր: Ուշագրավ է, որ ըստ հարցման արդյունքների, այս ընտանիքները չեն կատարում կրթական, առողջապահական և այլ ծախսեր: Մեկնաբանության միակողմանիությունից խուսափելու նպատակով՝ ևս մեկ անգամ փաստենք, որ հարցումն անցկացվել է ամռան ամիսներին, երբ կրթական ծախսեր իրոք չեն կատարվում և դեռևս չի սկսվել նախապատրաստությունը նոր ուսումնական տարուն: Չորս ընտանիքից կազմված տ/տ-ներում ըստ հարցման արդյունքների բացակայում են նաև երկարաժամկետ օգտագործման ապրանքների և ծիսական ծառայությունների ծախսերը: Փաստորեն, այն տնային տնտեսությունները, որոնք կազմված են 4 ընտանիքից, ըստ հարցման արդյունքների, կարողանում են հիմնականում լուծել սննդի խնդիրը և վճարել կոմունալ ծառայությունների դիմաց: Իսկ 1-3 ընտանիքից բաղկացած տ/տ-ներում արդեն էական տարբերություններ չեն գրանցվել. գրեթե բոլոր ծախսերը բաշխվում են նույն համամասնությամբ, այն տարբերությամբ, որ 2 և 3 ընտանիքից կազմված տ/տ-ներում փոքր-ինչ ցածր են երկարաժամկետ օգտագործման ապրանքների և ծիսական ծառայությունների ծախսերը:

Աղյուսակ 5.10 **Մեկ շնչի հաշվով ծախսերն ըստ տնային տնտեսության անդամների թվաքանակի (մեկ ամսվա կտրվածքով)**

Ծախսեր	Անդամների թվաքանակը տ/տ-ում				ՀՀ, միջին
	1	2	3	4 և ավելի	
1. Սնունդ	42.2	42.2	42.0	36.1	38.1
ա. Ծխախոտ և ոգելից խմիչքներ	2.4	4.7	4.5	5.1	4.8
2. Ոչ պարենային ապրանքներ (հագուստ, կոշիկ, հիգիենայի պարագաներ)	8.6	7.8	10.9	10.1	9.9
3. Ծառայություններ, այդ թվում	20.2	16.0	18.0	17.1	17.3
ա. Կոմունալ ծառայություններ	10.4	9.4	8.7	7.3	8.0
բ. Առողջապահություն	4.6	3.2	2.5	3.0	3.0
գ. Կրթություն	0.3	0.9	3.4	3.8	3.2
դ. Մշակույթ	0.5	0.5	0.4	0.5	0.5
ե. Այլ	4.4	2.1	3.1	2.6	2.7
4. Երկարաժամկետ օգտագործման ապրանքներ և ծիսական ծառայություններ	26.7	29.3	24.7	31.4	29.9
Ընդամենը (%)	100	100	100	100	100
Ընդամենը (դրամ)	50000	42000	37000	31000	34000

Աղյուսակ 5.10-ի տվյալներով, ըստ ընտանիքի անդամների թվաքանակի, ծախսերի համամասնությունում էական տարբերություններ չեն գրանցվել: Նախորդ աղյուսակների տվյալների հետ համադրման միջոցով կարելի է արձանագրել, որ հարցման մասնակից ընտանիքների մեծ մասում լուծվում են հիմնականում կենսաապահովման խնդիրներ, քանի որ ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում սննդին, ծառայություններին, հատկապես կոմունալ վճարներին և երկարաժամկետ օգտագործման ապրանքներին ու ծիսական ծառայություններին: Խիստ սահմանափակ են առողջապահական, կրթական ու մշակութային ծախսերը, ինչը դարձյալ խոսում է բազմաթիվ ընտանիքների սահմանափակ հնարավորությունների մասին: Այս իրողությունը կարևոր նշանակություն ունի նաև ընտանիքի վերարտադրողական վարքի դիտարկման առումով, քանի որ, ինչպես ցույց կտրվի հետագա բաժիններում, հարցման մասնակիցների մեծ մասը հենց սոցիալ-տնտեսական բարդություններով է բացատրում վերարտադրողական վարքի փոփոխությունները:

Նենք նաև, որ ընդհանուր առմամբ ծախսերը, եկամուտների համեմատ, առավել վստահելի ցուցանիշներ են, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում են կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից:

6. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության վերաբերյալ հարցերը կարևոր են, քանի որ դրանք բազմաթիվ դեպքերում ուղղակի ազդեցություն ունեն ընտանիքի վերարտադրողական վարքի, ընտանիքի պլանավորման վրա:

«Այս տարվա ընթացքում Ձեր տնային տնտեսության անդամներից որևէ մեկը կարիք ունեցել է դիմելու բժշկական հաստատություն» հարցին տրվել են հետևյալ պատասխանները.

Աղյուսակ 6.1 **Այս տարվա ընթացքում Ձեր տնային տնտեսության անդամներից որևէ մեկը կարիք ունեցել է դիմելու բժշկական հաստատություն**

Տարբերակ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
1. Այո, դիմել է	36.8	41.4	27.9
2. Այո, բայց ոչ մեկը չի դիմել	21.6	18.0	28.4
3. Ոչ, կարիք չի ունեցել	41.6	40.6	43.7

Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի արձանագրված են որոշակի տարբերություններ: Այսպես, քաղաքաբնակ ընտանիքների ընդհանուր թվի 41.4 և գյուղաբնակների 27.9%-ն է դիմել առողջապահական հաստատություններ այն դեպքում, երբ երկրորդ՝«Այո, բայց ոչ մեկը չի դիմել» հարցին դրական պատասխանողների թվում արդեն բարձր է գյուղաբնակ ընտանիքների տեսակարար կշիռը՝ 28.4*%,* քաղաքաբնակ ընտանիքների 18.0%-ի դիմաց: Գյուղաբնակ ընտանիքներում ավելի բարձր է նաև առողջապահական հաստատությունների չդիմած ընտանիքների տեսակարար կշիռը: Այսինքն, հարցման մասնակից յուրաքանչյուր հինգերորդ, իսկ գյուղական վայրերում՝ չորրորդ, տնային տնտեսությունում առկա են առողջական հարցերով բուժհաստատություններ դիմելու որոշակի սահմանափակումներ, որոնց պարզաբանումը բերված է ստորև, աղյուսակ 6.2-ում:

Աղյուսակ 6.2 **Առողջապահական հաստատությունների չդիմելու պատճառները,** %

Տարբերակ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
1. Դրամի սղություն	86.3	84.6	88.3
2. Փոխադրամիջոցի բացակայություն	0.6	0.7	0.5
3. Հեռավորություն	0.6	1.1	0.0.
4. Ժամանակի սղություն	0.5	0.2	0.9
5. Կրոնական հանգամանքներ	2.1	1.7	2.7
6. Ընտանեկան հանգամանքներ	5.4	6.1	4.5
7. Անվստահություն բժիշկներին	4.5	5.6	3.1

Պատճառների շարքում կարևորագույնը առողջապահական հաստատությունների ու առողջապահության ֆինանսական անմատչելիությունն է ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակչության համար: Գյուղական վայրերում, սակայն, այն ավելի արտահայտված է, քանի որ այստեղ բուժման ծախսերին ավելանում են նաև տրանսպորտային ծախսերը՝ ավելի սահմանափակելով շատ ընտանիքների նյութական հնարավորությունները: Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, մնացած պատճառներում էական տարբերություններ չեն գրանցվել: Գյուղական բնակավայրերում փոքր-ինչ բարձր է կրոնական, իսկ քաղաքներում՝ ընտանեկան և բժիշկներին չվստահելու պատճառով առողջապահական հաստատություններ չդիմելու իրողությունը: Դիտարկենք նաև այն հիվանդությունների ցանկը, որոնց պատճառով դիմում են առողջապահական հաստատություններ:

Աղյուսակ 6.3 **Այն հիվանդությունների ցանկը, որոնց պատճառով դիմել են առողջապահական հաստատություններ**

Հիվանդության անվանում	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
1. Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ	22.2	23.3	20.1
2. Նորագոյացություններ	2.5	3.1	1.4
3. Նյարդական համակարգի հիվանդություններ	9.4	7.9	12.4
4. Հոգեկան խանգարումներ և վարքի խանգարումներ	1.9	1.4	2.8
5. Շնչառական օրգանների հիվանդություններ	10.8	10.7	11.2
6. Տուբերկուլյոզ	0.0	0.0	0.0
7. Մարսողական օրգանների հիվանդություններ	7.9	8.8	6.2
8. Ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ	8.4	9.1	7.0
9. Էնդոկրին համակարգի հիվանդություններ	6.0	6.7	4.8
10. Աչքի հիվանդություններ	7.4	7.1	8.0
11. Պարբերական հիվանդություններ	3.1	3.2	2.8
12. Միզասեռական համակարգի հիվանդություններ	5.6	5.1	6.3
13. Բնածին անկանոնություններ /զարգացման արատներ/, ձևախախտումային խանգարումներ	0.9	1.0	0.8
14. Այլ հիվանդություններ	13.9	12.6	16.2

Ինչպես երևում է Աղյուսակ 6.3-ից, ավելի հաճախ առողջապահական հաստատություններ դիմում են արյան շրջանառության համակարգի հիվանդությունների պատճառով, ընդ որում, պատկերը նույնն է և քաղաքային և՝ գյուղական բնակավայրերում: Բավականին բարձր տեսակարար կշիռ է արձանագրված նաև շնչառական օրգանների, նյարդական համակարգի, ոսկրամկանային համակարգի և մարսողական համակարգի հիվանդությունների դեպքերում՝ դարձյալ առանց քաղաք-գյուղ լուրջ տարբերությունների:

Առողջապահական հաստատությունների մատչելիության և ծառայությունների (ֆիզիկական և ֆինանսական մատչելիություն, ծառայությունների որակ, բուժհաստատությունների տեխնիկական հագեցվածություն և այլն) գնահատականը հետևյալն է.

Աղյուսակ 6.4 **Առողջապահական հաստատություններին տրված գնահատականը**

Գնահատական	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
1.Գերազանց	3.2	4.8	0.0
2. Լավ	20.3	28.8	4.1
3. Բավարար	52.4	45.1	66.4
4. Վատ	11.8	9.8	15.8
5. Շատ վատ	4.4	4.7	3.7
6. Բացակայում են	1.2	1.6	0.6
7. Դժվարանում եմ պատասխանել	5.5	5.2	6.2

Ամենաբարձր տեսակարար կշիռն արձանագրվել է բավարար պատասխանի դեպքում, ընդ որում, գյուղերում այս պատասխանի տեսակարար կշիռը մոտ 1.5 անգամ ավելի բարձր է քաղաքներում արձանագրված ցուցանիշից: Էական են «գերազանց» և «լավ» պատասխաններում արձանագրված տարբերությունները: Այսպես, գյուղաբնակ ընտանիքներում ոչ-ոք գերազանց չի գնահատել առողջապահական հաստատությունների որակը, քանի որ գյուղերում լավագույն դեպքում գործում են ամբուլատորիաներ, միջազգային ու պետական կառույցների աջակցությամբ վերանորոգված բուժկետեր, որպես կանոն, դեղերի սահմանափակ տեսականիով, բուժսարքավորումների բացակայությամբ: Պատահական չէ, որ գյուղաբնակ ընտանիքներում արձանագրված «լավ» պատասխանի տեսակարար կշիռը ևս 7 անգամ զիջում է քաղաքաբնակ ընտանիքներում արձանագրված համապատասխան ցուցանիշին:

Անչափահասներին մատուցվող առողջապահական ծառայությունների մատչելիության և որակի (ֆիզիկական և ֆինանսական մատչելիություն, ծառայությունների որակ, հագեցվածություն և այլն) գնահատականները հետևյալն են.

Աղյուսակ 6.5 **Անչափահասներին մատուցվող առողջապահական ծառայությունների գնահատականը**

Գնահատական	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
1. Գերազանց	3.9	5.9	0.0
2. Լավ	20.3	30.9	0.0
3. Բավարար	48.0	39.0	65.2
4. Վատ	8.0	7.1	9.7
5. Շատ վատ	3.6	5.5	0.0
6. Բացակայում են	1.9	2.9	0.0
7.Դժվարանում եմ պատասխանել	12.2	8.4	19.4

Ինչպես և նախորդ դեպքում, գերազանց պատասխան չի արձանագրվել գյուղական բնակավայրերում: Այստեղ չի արձանագրվել նաև լավ պատասխան: Գյուղաբնակ ընտանիքների մեծ մասը, շուրջ 2/3-ը, անչափահասներին մատուցվող առողջապահական ծառայությունները գնահատել է բավարար[20]: Գյուղերում գրանցված նման պատկերը կարելի է բացատրել նաև առողջապահական ծառայությունների անկանոնությամբ, որը սահմանափակվում է հիմնականում բուժկետերի կողմից մատուցվող ծառայություններով:

[20] Այս հարցը չի մանրացվել ըստ ավելի փոքր տարիքային խմբերի, այդ պատճառով պատասխանները վերաբերում են բոլոր անչափահասներին: Տարիքային խմբերի մանրատման դեպքում կարող էին արձանագրվել նաև որոշ առանձնահատկություններ: Գյուղերում, օրինակ, անչափահասներին մատուցվող ծառայությունները ներառում են հիմնականում նորածիններին, 0-5 տարեկան երեխաներին, որոնց պատվաստումները վերջին տարիներին կատարվում են ժամանակին, պետական հատկացումների, միջազգային կազմակերպությունների աջակցության շնորհիվ:

7. ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ[21]

Հետազոտությունում ընտանիքի վերարտադրողական վարքի ու ընտանիքի պլանավորման հարցերը կարևորվել են մի քանի պատճառով:

Նշել ենք, որ վերջին մեկուկես տասնամյակի քաղաքական, սոցիալ-տնտեսական ու արժեքա-մշակութային փոփոխություններն անմիջականորեն ազդում են ընտանիքի վրա, այն հանդես է գալիս որպես փոփոխությունների ազդեցությունների ուղղակի կրող: Համալիր, համակարգային փոփոխությունների մի մասը նորույթ է հայկական ընտանիքի համար, քանի որ խորհրդային հասարակարգի պայմաններում ընտանիքը, ըստ էության, «երկաթյա վարագույրով» մեկուսացված էր արտաքին՝ ոչ սոցիալիստական աշխարհից և սահմանափակ, ուղղորդված տեղեկատվություն ուներ արևմտյան / եվրոատլանտյան քաղաքակրթական միջավայրի մասին: Անկախությունից անմիջապես հետո, երբ հանրապետությունում սկսվեցին վերափոխումները, ընտանիքին առաջարկվեցին, որոշ դեպքերում՝ նաև պարտադրվեցին, արևմտյան քաղաքակրթական համակարգի մաս կազմող արժեքներ. *ժողովրդավարություն, իրավական պետություն, քաղաքացիական հասարակություն, ազատ շուկայական հարաբերություններ* և այլն: Առաջին հայացքից նշվածները կապ չունեն ընտանիքի վերարտադրողական վարքի ու պլանավորման հետ: Սակայն խորքային դիտարկման դեպքում դրանք ներընտանեկան հարաբերություններն ու արժեքային համակարգերը պայմանավորող գործոններ են՝ ընտանիքի զարգացման, վերարտադրողական վարքի վրա ուղղակի ու անուղղակի ազդեցություններով[22]:

Ցանկացած նորույթի ամրագրումը պահանջում է բավականին երկար ժամանակ ու համապատասխան հասարակական-մշակութային միջավայր[23]: Այդ ընթացքում, հատկապես արժեքա-մշակութային ճգնաժամի պայմաններում, ընտանիքում կայացվում են հիմնականում իրավիճակային որոշումներ ու վճիռներ, որոնք ժողովրդագրական իրավիճակի վրա ազդում են բավականին կարճ ժամանակում: 1990-ական թթ առաջին կեսի զանգվածային արտագաղթն անհատական, ընտանեկան ու խմբային մակարդակի իրավիճակային լուծում էր: Դրա ազդեցությունները ժողովրդագրական իրավիճակի վրա արդեն ուղղակի են՝ ծնելիության մակարդակի նվազում, բնակչության ընդլայնված վերարտադրության բաղադրիչների համամասնությունների խախտում և այլն: Այսինքն, ընտանիքը, անկախ նոր իրողություններին հարմարվելու տրամադրությունից, հայտնվում է փոփոխությունների ազդեցության դաշտում:

Հաջորդ կարևոր պատճառը կապվում է այս ոլորտում պետական կարգավորման քաղաքականության ակտիվացման հետ[24]: ՀՀ իշխանությունները հիմնականում ավարտել են «Պետական ժողովրդագրական քաղաքականության հայեցակարգն» ու ձեռնամուխ եղել *«Ընտանիքի հանդեպ պետական քաղաքականության հայեցակարգի»* մշակմանը: Ընտանիքի վերարտադրողական վարքի, վերջինիս վրա ազդող գործոնների հարցերը կարևորվել են նաև

---

[21] Վերարտադրողական վարք հասկացությունն այստեղ օգտագործվում է ոչ թե դասական ժողովրդագրական իմաստով, այլ լայն ընկալմամբ, որպես արժեքային, մշակութային ու վարքային-վարքագծային տարրեր ներառող ամբողջություն:

[22] Հետազոտողների բավականին պատկառելի խումբ որպես արևմտյան քաղաքակրթական համակարգի հիմնարար հատկանիշ դիտարկում է վերջինիս մարդակենտրոն/անձնակենտրոն բնույթը, անհատի պահանջմունքների բավարարման գերակայությունը: Խորհրդային և ավանդական հայկական միջավայրը ավելի շատ խմբակենտրոն էին: Անձնակենտրոն և խմբակենտրոն հասարակությունների տարբերությունները համակարգային բնույթի են, իսկ անցումը խմբակենտրոնից անձնակենտրոնի բարդ ու տևական գործընթաց է, այդ գործընթացում հնարավոր են միջանկյալ հանգրվաններ, երկու համակարգերի բաղկացուցիչների առկայությամբ: Հայաստանյան ընտանիքն այսօր նման հանգրվաններից մեկում է, երբ անձնակենտրոն հասարակություն դեռևս չի ձևավորվել, իսկ խմբակենտրոն հասարակության բաղադրիչները պահպանում են իրենց գործառնական նշանակությունը և դրսևորվում են հատկապես «արտակարգ իրավիճակներում»: Կլանայնությունը, հովանավորչությունը, հասարակական հարաբերությունների դաշտ ազգակցական ու ընկերական հարաբերությունների ներառումն ավելի շատ խմբակենտրոն հասարակություններին բնորոշ իրողություններ են:

[23] Եվ արևմտյան և նախկին խորհրդային հետազոտողները կարևոր ուշադրություն են դարձրել հասարակական, այդ թվում՝ ընտանեկան միջավայր նորույթների մուտքի ու ամրագրման մեխանիզմների ուսումնասիրությանը: Որպես կանոն, նորույթների հանդեպ առավել ընկալունակ են այն հասարակությունները, որոնք ունեն համապատասխան ներուժ ու ինստիտուցիոնալ կառույցներ, այդ թվում, էլիտար խմբեր՝ դրանց մուտքը, նախնական «փորձարկումն» ու հետագա ամրագրումն ապահովելու համար: Մանրամասն տես՝ Àðóòþíîâ Ñ., Íàðîäû è êóëüòóðû: ðàçâèòèå è âçàèìîäåéñòâèå, Ì., 1989.

[24] 2003թ. ՀՀ Կառավարության կողմից հաստատված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրն» ուղղակիորեն ընտանիքին վերաբերող փաստաթուղթ է, քանի որ որպես հիմնական նպատակ հռչակել է աղքատության հաղթահարումը/ծավալների էական կրճատումը ՀՀ-ում.-մանրամասն տես՝ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003:

այդ նպատակով, որպեսզի քաղաքականության մշակման և իրագործման ընթացքում առավելագույնս հաշվի առնվեն ընտանիքում գործառնող հիմնական սկզբունքները, մոտեցումներն ու կողմնորոշումները:

Ժողովրդագրական իրավիճակը վերլուծելու առումով կարևոր են ընտանիքում երեխաների թիվը և վերջինիս շարժընթացի վերլուծությունը:

Աղյուսակ 2.8-ի տվյալները ցույց են տալիս, որ հարցված ընտանիքներից երեխա ունի ընդամենը 44.9%-ը, իսկ այդ թվի մեջ հիմնականը 1 կամ 2 երեխա ունեցող ընտանիքներն են[25]: Նման պատկերն ապացույց է կարճ ժամանակում ժողովրդագրական վարքի էական փոփոխությունների և քաղաքային և' գյուղական բնակավայրերում, ինչն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Գյուղում կարևոր է 1991թ. հողի սեփականաշնորհումը, որն էապես փոխեց զբաղվածության պատկերը: Խորհրդային շրջանում, սկսած հիմնականում 1960-ական թվականներից, գյուղից երիտասարդության արտահոսքը կանխելու նպատակով վարվում էր այլընտրանքային զբաղվածության քաղաքականություն: Բազմաթիվ գյուղերում հիմնվում էին նույնիսկ վնասով աշխատող ձեռնարկություններ, որոնցում ներգրավվում էր հիմնականում երիտասարդությունը: Զբաղվածության պատկերը, ինչպես արդեն ցույց տրվեց վերլուծության համապատասխան բաժիններում[26], կարևոր է ժողովրդագրական վարքի դիտարկման համար: Ընդ որում, ազդեցություններն ունեն երկակի բնույթ՝ մի դեպքում, բարձր վարձատրվող և հեռնակարային աշխատատեղի առկայությունը կարող է «հետաձգել երեխայի ծնունդը»[27], ինչպես դա ընդունված է ժողովրդագրական ճգնաժամի մեջ հայտնված որոշ եվրոպական երկրներում: Մյուս դեպքում արդեն աշխատանքի բացակայությունն է բերում նույն հետևանքներին: Գյուղական միջավայրում առավել տարածված է երկրորդ տարբերակը. երիտասարդ ընտանիքների մի մասն այստեղ ապագա չի տեսնում իր և իր երեխաների համար:

Քաղաքում ու գյուղում ձևավորված ժողովրդագրական իրավիճակի վրա ազդում է նաև արտագաղթը, քանի որ հեռացածների մեջ բարձր է վերարտադրողական տարիքի բնակչության տեսակարար կշիռը:

Նման պատկերը նախանշում է նաև ժողովրդագրական և ընտանիքի հանդեպ պետական քաղաքականության որոշ հիմնական ուղղություններ: Բարոյահոգեբանական նորմալ մթնոլորտի ապահովում, վստահություն ապագայի հանդեպ, կենցաղային պայմանների և ժամանցի հնարավորությունների բարելավում, սա ոչ ամբողջական ցանկն է գյուղական միջավայրում հատկապես երիտասարդ ընտանիքների ժողովրդագրական վարքի փոփոխությունները պայմանավորող գործոնների: Վերջապես, և քաղաքներում և' գյուղերում բարդ է լինելու կայուն «3 երեխայով ընտանիքի մոդելի» ամրագրումը, կապված ապագայի պլանավորման և նաև այլ խնդիրների հետ, որոնց կանդրադառնանք ստորև:

Ըստ բերված տվյալների, ընտանիքների մեծ մասը գտնվում է պարզ վերարտադրության դաշտում, ինչը հանրապետության առջև ծառացած կարևորագույն, եթե ոչ հիմնական, *ժողովրդագրական մարտահրավերն է:*

Շարժընթացի դիտարկման համար կարևոր է նաև, թե քանի երեխա է եղել ամուսնական զույգի ծնողների ընտանիքում:

---

[25] Ըստ հարցման արդյունքների, 1 ընտանիքին բաժին ընկնող երեխաների միջին թվաքանակի պատկերը հետևյալն է. միջին հանրապետական մինչև 16 տարեկանների հաշվարկով՝ 1.61 երեխա, քաղաքում՝ 1.57, գյուղում՝ 1.70, մինչև 18 տարեկանների հաշվարկով՝ 1.74, քաղաքում՝ 1.65, գյուղում՝ 1.89: 2004թ. տվյալներով, պտղաբերության գործակիցը (երեխաների այն միջին թվաքանակը, որը կծնի կինը վերարտադրողական տարիքի ողջ շրջանում (15-49 տարեկան)) կազմել է 1.3, քաղաքում՝ 1.4, իսկ գյուղում՝ 1.5.-Հայաստանի կանայք և տղամարդիկ, վիճակագրական գրքույկ, էջ 14:

[26] Տես՝ «Զբաղվածություն, եկամուտների և ծախսերի կառուցվածք» բաժինը:

[27] Ըստ հետազոտության արդյունքների, պետական կառավարման ու իշխանության մարմիններում, բարձր որակավորում պահանջող ոլորտներում ընդգրկվածների ընտանիքների մեծ մասում կա 1-2 երեխա:

Աղյուսակ 7.1 **Երեխաների թվաքանակը հարցման մասնակից ամուսնական զույգի ծնողների ընտանիքներում**[28]

Երեխաների թիվը	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ, %	հարցին պատասխանածի ընտանիքում	Ամուսնու/կնոջ ընտանիքում
1 երեխա	2.8	2.9	2.7
2 երեխա	19.1	20.3	17.0
3-6 երեխա	64.6	63.7	66.4
7 և ավելի երեխա	13.5	13.1	13.9

Այս ցուցանիշներն ընտանիքում երեխաների թվի հետ համեմատելիս կարող ենք արձանագրել, որ գործ ունենք վերարտադրողական վարքի՝ *կարճ ժամանակում (1-2 սերնդում) կատարված էական փոփոխությունների* հետ: Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի պատկերից էական շեղումներ չեն արձանագրվում. և քաղաքում և՝ գյուղում տիրապետող է եղել 3-6 երեխայով ընտանիքը: Նույն միտումներն են արձանագրվում ժողովրդագրական ճգնաժամի մեջ հայտնված արևմտյան երկրներում,[29] որտեղ հետպատերազմյան սերունդը սոցիալական, տնտեսական, քաղաքական ու այլ գործոնների ազդեցությամբ որդեգրեց այլ վերարտադրողական վարք՝ նախապատվությունը տալով 1-2 երեխայով ընտանիքին: Ներկայիս հայաստանյան հասարակությունը ևս գտնվում է նման փուլում[30]:

Վերարտադրողական վարքի մոդելի հիմնական սկզբունքների արտացոլումն է նաև. *«Այսօրվա պայմաններից ելնելով, ո՞րն է ընտանիքում երեխաների իդեալական թիվը»* հարցի պատասխանների համախումբը.

Աղյուսակ 7.2 **Երեխաների իդեալական թիվն ընտանիքում**

Երեխաների իդեալական թիվը	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ, %	Քաղաք	Գյուղ
1	10.1	10.3	9.8
2	56.5	59.0	51.9
3-6	31.8	29.3	36.4
7 և ավելի	1.6	1.4	1.9

Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի «իդեալական թվի» էական տարբերություններ դարձյալ չեն արձանագրվում: Քաղաքաբնակ ընտանիքների 10.3, իսկ գյուղաբնակ ընտանիքների 9.8%-ում նշվել է «1 երեխա» պատասխանը: Առաջին հայացքից սա ցածր տեսակարար կշիռ է, սակայն հնարավոր զարգացումների տեսանկյունից միտումը բավականին վտանգավոր է, քանի որ յուրաքանչյուր տասներորդը կողմնակից է նույնիսկ պարզ վերարտադրություն չապահովող մոդելին: Քաղաքաբնակ ընտանիքների 59.0 և գյուղաբնակների 51.9%-ում երեխաների իդեալական թիվ համարվել է 2-ը: Եթե այս ցուցանիշին հավելենք վերը բերված տվյալները, կստանանք, որ հարցման մասնակիցների 2/3-ը իդեալական է համարում երեխաների այն թիվը, որի պայմաններում դարձյալ չի ապահովվում պարզ վերարտադրությունը: *Այսինքն, ընտանիքի հանդեպ պետական քաղաքականություն մշակելիս կարևոր պետք է դիտել նախևառաջ գոնե պարզ, սակայն կայուն վերարտադրության ապահովումը:* Երեք և ավելի երեխայով ընտանիքի մոդելին նախապատվություն է տվել հարցին պատասխանած քաղաքաբնակների 29.3 և գյուղաբնակների 36.4%-ը: Գյուղերում, ինչպես երևում է տվյալներից, այս պատասխանի տեսակարար կշիռը փոքր-ինչ բարձր է, սակայն ոչ այնքան, որ միայն գյուղական

[28] Ըստ հարցման արդյունքների, 1 ընտանիքին բաժին ընկնող երեխաների միջին թվաքանակի պատկերը հետևյալն է. միջին հանրապետական մինչև 16 տարեկանների հաշվարկով՝ 1.61 երեխա, քաղաքում՝ 1.57, գյուղում՝ 1.70, մինչև 18 տարեկանների հաշվարկով՝ 1.74, քաղաքում՝ 1.65, գյուղում՝ 1.89: 2004թ. տվյալներով, պտղաբերության գործակիցը (երեխաների այն միջին թվաքանակը, որ կծնի կինը վերարտադրողական տարիքի ողջ շրջանում (15-49 տարեկան)) կազմել է 1.4, քաղաքում՝ 1.3, իսկ գյուղում՝ 1.5.-Հայաստանի կանայք և տղամարդիկ, վիճակագրական գրքույկ, Եր., 2005, էջ 14:

[29] Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, հատկապես ԱՄՆ-ում և որոշ արևմտաեվրոպական երկրներում, արձանագրվեցին ծնելիության բարձր ցուցանիշներ, որոնք ստացան *«babyboom»* անվանումը:

[30] Վերջին տասնամյակների զարգացումների մասին մանրամասն տես՝ Եգանյան Ռ., Կույումջյան Կ., նշվ. աշխ.:

բնակչության միջոցով հնարավոր լինի մասամբ մեղմել հնարավոր բացասական ազդեցություններն ու հետևանքները:

«Ինչու է, Ձեր կարծիքով, իդեալական երեխաների նման թիվը» հարցին տրվել են հետևյալ պատասխանները.

Աղյուսակ 7.3 **Ինչու եք երեխաների նման թիվն համարում իդեալական**

Տարբերակ	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ, %
Դա ընդունված ու տարածված է հայկական միջավայրում	17.9
Դա ժամանակի թելադրանքն է	60.6
Կարիերայի ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում	1.6
Հնարավորություն է տալիս ավելի ազատ ապրել	5.2
Հնարավորություն է տալիս պահպանել ամուսինների նորմալ փոխհարաբերությունները	6.3

«*Ժամանակի թելադրանքը*», որը ներառում է նաև վերջին տարիների փոփոխությունները, փաստորեն, դառնալով վերարտադրողական վարք պայմանավորող գործոն, քանի որ *«Դուք անձամբ քանի երեխա կցանկանայիք ունենալ»* հարցին տրված պատասխաններում նույնպես էական շեղումներ չեն արձանագրվում:

Աղյուսակ 7.4 **Դուք անձամբ քանի երեխա կցանկանայիք ունենալ**

Երեխաների թիվը	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ, %	Քաղաք	Գյուղ
1	4.9	4.9	4.6
2-3	64.4	67.1	59.9
4-6	26.9	25.0	30.4
7 և ավելի	3.8	3.0	5.1

Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, ինչպես և նախորդ պատասխաններում, էական տարբերություններ չեն արձանագրվել: Գյուղաբնակների մեջ փոքր-ինչ բարձր է 4 և ավելի երեխա ունենալ ցանկացողների տեսակարար կշիռը:

Պատասխանների համախմբի դիտարկումը թույլ է տալիս արձանագրել, որ հայկական ընտանիքում տարածում է գտնում *1 կամ 2 երեխայով ընտանիքը, ընդ որում* և որպես իրականություն և' որպես հավանական տարբերակ առաջիկայի համար՝ վերարտադրողական վարքի ներկայիս զարգացումների պայմաններում:

Փոփոխությունների «տրամաբանությունն» ամբողջապես հասկանալու համար կարևոր է երևույթի համակողմանի դիտարկումը: Ըստ վիճակագրության, 1950-60-ական թթ հայաստանյան իրականությունում տիրապետող էին բազմազավակ ընտանիքները: Պտղաբերության գործակիցը 1958թ. կազմել է 4.7, մինչև 1970 թվականը գերազանցելով 3 գործակիցը: 1950-1970-ական թվականները ՀԽՍՀ տնտեսության ինտենսիվ զարգացման ժամանակահատված էին: Սակայն նույնը չի կարելի ասել բնակչության կենսամակարդակի մասին: Այն «միջին էր խորհրդային չափանիշներով» և կարելի էր հանդիպել նաև աղքատ ընտանիքների, չնայած խորհրդային վիճակագրությունը պաշտոնապես չէր ընդունում աղքատության գոյությունը: Քննարկվող շրջանը նաև ինտենսիվ ուրբանիզացիոն գործընթացների ժամանակահատված էր, աճում էր քաղաքային բնակչության տեսակարար կշիռը, ավելի արտահայտված էր դառնում գյուղական բնակչության «ծերացման» միտումը:

Քաղաքային միջավայրն ու քաղաքային կացութաձևը, որպես կանոն, էական ազդեցություն են ունենում վերարտադրողական վարքի վրա: Այդ տարիներին քաղաքային բնակչությունը համալրվում էր հիմնականում ի հաշիվ գյուղական երիտասարդության, որն ի թիվս այլոց, լուծում էր նաև սոցիալական շարժունության, կրթության, սոցիալական հիերարխիայում դիրք ապահովելու խնդիրներ: Որպես այս ամենի հետևանք հանդես է գալիս պտղաբերության գործակցի նվազումը, որը 1975թ. արդեն 3-ից ցածր էր ՝ 2.8 և աստիճանաբար նվազելով, 1991թվականին

կազմեց 2.6[31]: Այսինքն, մոտավորապես 20 տարվա կտրվածքով արձանագրված նվազման միտումը ևս հետևանք է վերարտադրողական վարքի փոփոխությունների: Չնայած դրան, խորհրդային համակարգի համեմատական կայունությունը, երաշխավորված նվազագույնը, աշխատանքով ապահովվածությունը նախընտրելի էին դարձնում «3 երեխայով ընտանիքի մոդելը», քանի որ միջին խորհրդային քաղաքացին կարող էր լուծել նրանց կրթության, աշխատանքի, ամուսնության հարցերը:

Անկախության տարիներին պտղաբերության գործակցի նվազման միտումը պահպանվեց, ամենացածր նիշին հասնելով 2001-2002 թվականներին՝ կազմելով ընդամենը 1.2: Սակայն եթե խորհրդային տարիների միտումը հնարավորություն էր տալիս ապահովել ընդլայնված վերարտադրություն, ապա 1990-ական թվականներին պատկերն էապես փոխվեց:

Այս դեպքում պետք է նկատի ունենալ արտաքին ու ներքին անբարենպաստ գործոնների ազդեցությամբ սկսված փոփոխությունների տեմպերի արագացման իրողությունը: Այն, որ պատասխաններում ամենաբարձր տեսակարար կշիռն ունի «դա ժամանակի թելադրանքն է» պատասխանը, ասվածի ապացույցներից է: Որպես «ժամանակի թելադրանքի» բաղադրիչներ պետք է դիտարկվեն սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, բարոյահոգեբանական մթնոլորտը, արտագաղթը և բազմաթիվ այլ գործոններ:

Վերարտադրողական վարքի փոփոխություններին առնչվող կարևոր պատճառների բացահայտման հնարավորություն է ընձեռում հարցերի հաջորդ համախումբը: ***«Առաջիկա 3 տարում նախատեսում եք երեխա ունենալ»*** հարցին դրական է պատասխանել ընդամենը 13.8%-ը: Բացասական պատասխան տվել է 78.7%-ը, իսկ 7.5%-ը դժվարացել է պատասխանել: Բացասական պատասխանների բարձր տեսակարար կշիռն այս դեպքում խոսում է արդեն կայացված որոշումների մասին և թույլ է տալիս փաստել, որ առանց պետական աջակցության ու խրախուսման ակտիվ քաղաքականության դժվար է դրական փոփոխություններ ակնկալել:

Չնայած «ժամկետային սահմանափակմանը», այնուամենայնիվ, հաջորդ՝ *«կցանկանայի՞ք արդյոք ավելի շատ երեխաներ ունենալ»* հարցին պատասխանածների 34.5%-ը տվել է դրական պատասխան:

Աղյուսակ 7.5 **Կցանկանայիք արդյոք ավելի շատ երեխաներ ունենալ**

Պատասխան	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ, %	Քաղաք	Գյուղ
Այո	34.5	36.2	31.7
Ոչ	55.2	56.2	53.4
Դժվարանում եմ պատասխանել	10.3	7.6	14.9

Եթե այո, ապա քանի երեխա կուզենայիք ունենալ հարցի պատասխանները հետևյալն են.

Աղյուսակ 7.6 **Եթե կցանկանայիք ունենալ ավելի շատ երեխա, ապա որքան է այդ թիվը**

Երեխաների թիվը	Տեսակարար կշիռը պատասխանների մեջ, %	Քաղաք	Գյուղ
1 երեխա	13.1	12.9	13.5
2	22.2	22.6	21.4
3	26.4	26.2	26.7
4	29.7	30.4	28.2
5 և ավելի	8.6	7.9	10.2
Ընդամենը	100	100	100

Եվ քաղաքային և գյուղական բնակավայրերում հարցին պատասխանածների կեսից ավելին նշել է, որ կուզենար ունենալ 3-4 երեխա: Այսինքն, չնայած արձանագրված փոփոխություններին, կարելի է ենթադրել, որ հայաստանյան հասարակությունում դեռևս առկա է ժողովրդագրական իրավիճակի շտկման ներուժ և պետական նպատակային քաղաքականությունը կարող է նպաստել երկրորդ և հատկապես երրորդ ու չորրորդ երեխաների թվի ավելացմանը:

[31] Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, էջ 40:

Սա հաստատվում է նաև ***«Իսկ ինչն է պատճառը, որ չեք ունեցել / չեք ունենում ավելի շատ երեխաներ»*** հարցին տրված պատասխաններով:

Աղյուսակ 7.7 **Ինչն է պատճառը, որ չեք ունեցել/ունենում ավելի շատ երեխաներ**

Պատասխան	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ, %
Ընտանիքի սոցիալական վիճակը	83.4
Ընտանիքի բնակարանային պայմանները	9.9
Ընտանիքի անդամներից մեկի վատառողջ լինելը	5.6
Այլ	1.1
Ընդամենը	100

Ինչպես երևում է Աղյուսակ 7.7-ից, պատճառների ճնշող մեծամասնությունը ուղղակիորեն կապված է սոցիալական հիմնախնդիրների հետ: Իհարկե, բավականին բարդ է ենթադրել, որ սոցիալական հիմնախնդիրների լուծմանը զուգընթաց մեխանիկորեն կավելանա ընտանիքում երեխաների թիվը: Սակայն այն, որ սոցիալական հիմնախնդիրների լուծումը ժողովրդագրական իրավիճակի շտկման կարևորագույն նախապայման է միանշանակ է: Պատահական չէ, որ ըստ Աղյուսակ 7.7-ի, ընտանիքի պարզ վերարտադրությունն ապահովելու համար պետությունից ակնկալիքները նույնպես այս ոլորտում են.

Աղյուսակ 7.8 **Պետությունից ակնկալիքները պարզ վերարտադրություն ապահովելու համար (կարող էր նշվել մի քանի պատասխան)**

Պատասխան	%
1. Բնակարանի ձեռքբերման կամ բնակմակերեսի ընդլայնման աջակցություն (դոտացիա,սուբսիդիա և այլն)	51.2
2. Յուրաքանչյուր հերթական երեխայի ծննդի հետ կապված զգալի դրամական աջակցություն	38.8
3. Յուրաքանչյուր հերթական երեխայի ծննդի հետ կապված՝ հատկացվող դրամական օգնության պրոգրեսիվ աճ	23.5
4. Ամսական դրամական հատկացում	49.5
5. Հարկային արտոնություններ	16.6
6. Երեխայի խնամքի հետ կապված աշխատող մայրերին կրճատ աշխատաժամանակի ապահովում վարձատրության չափի պահպանմամբ	20.2
7. Հետծննդյան արձակուրդի ժամկետի երկարացում, աշխատավարձի 40 տոկոսի տրամադրմամբ	19.8
8. Հետծննդյան արձակուրդի ժամկետի լրանալուց հետո մասնագիտական հմտությունների կորստի վերականգնում, անվճար վերապատրաստումների ապահովում	14.2

Չնայած պատասխանների բավականին մեծ ցրվածությանը, նկատվում են որոշ օրինաչափություններ: 30% շեմը գերազանցվում է երեք պատասխաններում՝ *պետական աջակցություն բնակարանի ձեռքբերման, բնակմակերեսի ընդարձակման խնդրում, երեխայի ծննդի հետ կապված դրամական աջակցություն և ամսական դրամական հատկացում:* Բնակարանով ապահովվածության հիմնախնդրի սրացումը կանխատեսելի է, եթե հաշվի առնենք, որ հանրապետությունում չեն իրագործվում երիտասարդ ընտանիքներին բնակարանով ապահովելու լայնամասշտաբ ծրագրեր[32]: Այսօր արդեն ամուսնական տարիքում են 1980-ական թվականների ծնվածները: Խորհրդային Միությունը լուծել էր միայն վերջիններիս ծնողներին բնակարանով ապահովելու հիմնահարցը, իսկ երեխաներին բնակարանով ապահովելու խնդիրն արդեն մնում է ծնողների և երիտասարդների վրա, որոնց հնարավորությունները հայտնի պատճառներով սահմանափակ են: Հաջորդ երկու պատասխաններում առաջադրվում է արդեն ուղղակի պետա-

[32] Բնակության պայմանների վերլուծությունն ու դրանց ազդեցությունը ընտանիքի վերարտադրողական վարքի վրա, տես՝ վերլուծության «Բնակարանային և բնակության պայմաններ» բաժնում:

կան աջակցության խնդիրը՝ մի դեպքում միանգամյա գործողություն դրամական աջակցության տեսքով, մյուս դեպքում՝ որպես տնական աջակցություն, որը դարձյալ ունի դրամական արտահայտություն: Մնացած պատասխանների հաճախականությունն ավելի ցածր է, սակայն բոլորի տեսակարար կշիռը բարձր է 10%-ից: Պատասխանների նման համախումբը կարևոր է նաև սոցիալ-հոգեբանական տեսանկյունից: Փաստորեն, ընտանիքները, ինչպես նաև՝ երիտասարդ ընտանիքները, պետությունից ակնկալում են հիմնականում «ուղղակի» ներդրումներ ու միջոցառումներ. *դրամական աջակցություն և բնակմակերեսի ընդլայնում, որոնցում իրենց մասնակցությունը նվազագույն է:* Պատասխանների նման համախումբն ուղղակի արդյունքն է նաև վերջին տարիների փոփոխությունների:

Որոշ պատասխաններում նշվել են նաև պահանջների ու ակնկալիքների դրամական արտահայտությունները: Այսպես, *«Յուրաքանչյուր հերթական երեխայի ծննդի հետ կապված զգալի դրամական աջակցություն»* կետին տրված պատասխանների բաշխվածությունը հետևյալն է.

Աղյուսակ 7.9 **Պետությունից ակնկալվող միանվագ դրամական աջակցության չափը յուրաքանչյուր հերթական երեխայի ծննդի հետ կապված**

Պատասխան	%
1. Մինչև 50000 դրամ	24.8
2. 50000-100000 դրամ	48.1
3. 100000-200000 դրամ	12.6
4. 200000-500000 դրամ	14.5

Պատասխանների 24.8%-ում որպես այդպիսի գումար նշվել է մինչև 50000 դրամը, 48.1%-ում՝ 50000-ից 100000 դրամը, 12.6%-ում՝ 100000-ից 200000 դրամը և 14.5%-ում՝ 200000-ից 500000 դրամը: *«Յուրաքանչյուր հերթական երեխայի ծննդի հետ կապված հատկացվող դրամական օգնության պրոգրեսիվ աճ»* կետին տրված պատասխանները նույնպես նույն սանդղակում են: Այսինքն, ակնկալիքներն ու պահանջները միանգամյա դրամական օգնության հարցում այնքան էլ շատ չեն: Եթե հաշվի առնենք այսօր մեկ երեխայի ծննդյան հետ կապված ֆորմալ և ոչ ֆորմալ մոտավոր ծախսերը, ապա պահանջվող գումարը, ըստ էության, նախատեսվում է դրանց կատարման համար:

Առավել ուշագրավ ու պետական քաղաքականության կառուցման տեսանկյունից կարևոր է «*Ամսական դրամական հատկացում*» կետին տրված պատասխանների բաշխվածությունը:

Աղյուսակ 7.10 **Պետությունից ակնկալվող ամսեկան դրամական աջակցության չափը**

Պատասխան	%
Մինչև 20,000 դրամ	20.9
20,000-50,000 դրամ	62.7
50,000-100,000 դրամ	15.0
100,000 դրամից ավելի	1.4

Պատասխանների 20.9%-ում որպես ամսական դրամական աջակցության չափ նշվում է մինչև 20,000 դրամը, 62.7.%-ում՝ 20,000-ից մինչև 50,000 դրամը, 15.0%-ում՝ 50,000-100,000 դրամը: 100,000 դրամից բարձր ամսեկան դրամական աջակցություն նշվել է պատասխանների ընդամենը 1.4%-ում: Եթե նկատի ունենանք հայաստանյան իրականությունն ու երեխայի խնամքի համար անհրաժեշտ ծախսերը, կարող ենք արձանագրել պատասխանների որոշակի «չափավորություն»: Մեկ երեխայի համար պահանջվող հատկացումները, մեկ տարվա կտրվածքով, ըստ պատասխանների հիմնական համախմբի, միջինացված գնահատականներով տատանվում են մոտավորապես 200,000-ից 100,0000 դրամի շրջանակներում, միջինացված ցուցանիշը մոտավորապես 500,000-600,000 դրամն է (ԱՄՆ դոլարի ներկայիս փոխարժեքով՝ 1 ԱՄՆ դոլարը-մոտ. 370 դրամ, մոտ 1,500-1,600 ԱՄՆ դոլար): Եթե սրան ավելացնենք միանգամյա օգնությունների ցուցանիշները, որոնք միջինացված կազմում են մոտավորապես 300-400 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ապա մեկ երեխայի հաշվարկով պետական ուղղակի հատկա-

ցումները օգնության և նպաստների տեսքով, ըստ հարցման մասնակիցների պատասխանների, պետք է կազմեն տարեկան մոտավորապես 2,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Սա այն գինն է, որը հարցման մասնակիցներն ակնկալում են պետությունից:

Ռազմավարական պլանավորման տեսանկյունից կարևոր է նաև երեխաների համար բնակավայրում ստեղծված պայմաններից բավարարվածության աստիճանը, ինչպես նաև այն, թե ծնողներն իրենք, կամ հարցման մասնակիցները ինչպես են պլանավորում երեխաների ապագան:

«Ինչպես եք գնահատում երեխաների համար ստեղծված պայմանները Ձեր բնակավայրում ըստ 5 միավորանոց սանդղակի» հարցին տրվել են հետևյալ պատասխանները.

Աղյուսակ 7.11 **Ինչպես եք գնահատում երեխաների համար ստեղծված պայմանները Ձեր բնակավայրում ըստ 5 միավորանոց սանդղակի**

Ոլորտ	1	2	3	4	5	դժվ. պատ
1. Նախակրթարանների վիճակ, հնարավորությունների մատչելիություն	7.8	7.2	29.2	17.0	5.1	33.7
2. Դպրոցների վիճակ, հնարավորությունների մատչելիություն	3.0	6.4	36.8	20.5	6.4	26.9
3. Դպրոցում տրվող գիտելիքների որակ	4.1	10.1	37.6	17.6	3.6	27.0
4. Միջնակարգ-մասնագիտական հաստատությունների վիճակ	10.8	7.8	23.9	9.5	1.3	46.7
5. Առանց լրացուցիչ պարապմունքների ԲՈՒՀ ընդունվելու հնարավորություն	26.8	17.8	18.0	6.3	1.0	30.1
6. Լրացուցիչ գիտելիքներ ստանալու հնարավորություններ /խմբակներ, այլ/	16.3	17.7	19.7	10.5	4.1	31.7
7. Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու հնարավորություններ /Ինտերնետ ակումբներ,համակարգչային սրահներ/	17.6	13.1	17.8	13.4	4.4	33.7
8. Ժամանցի կազմակերպման հնարավորություններ	28.3	15.0	18.0	7.0	1.9	29.8
9. Աշխատանք գտնելու հնարավորություններ	47.8	14.1	11.5	3.7	0.7	22.2
10. Բնակավայրում մնալով բարձր կենսամակարդակ ապահովելու հնարավորություններ	26.9	16.5	20.6	5.8	1.2	29.0
11. Առողջապահական հաստատությունների մատչելիություն	13.4	18.2	29.1	12.8	2.5	24.0

Պատասխանների բաշխվածությունը հնարավորություն է տալիս արձանագրել, որ չնայած իրագործվող տարաբնույթ ծրագրերին ու միջոցառումներին, դեռևս առկա են կրթական, հատկապես կրթության որակի, առողջապահական համակարգերի լուրջ հիմնախնդիրներ, որոնք չափազանց կարևոր են պլանավորման տեսանկյունից: Այսպես, և ոչ մի ոլորտում արձանագրված չէ գերազանց գնահատականների 10%-անոց շեմը գերազանցող պատասխան: Լավ և գերազանց պատասխանների համախումբը 20%-անոց շեմը գերազանցում է միայն երեք դեպքում՝ *նախակրթարանների վիճակ, դպրոցների վիճակ և դպրոցում տրվող գիտելիքների որակ*: Բավարար պատասխանների տեսակարար կշիռը նույնպես ընդհանուր առմամբ բավականին ցածր է, 30%-անոց շեմը գերազանցվում է միայն դպրոցներին առնչվող պատասխաններում, իսկ 30%-ին մոտենում է առողջապահության և նախակրթարանների վիճակի վերաբերյալ պատասխաններում:

Մեծ ցրվածություն է գրանցված խիստ անբավարար /1/ և անբավարար /2/ պատասխաններում: Բոլոր ոլորտներում նման պատասխանների ընդհանուր տեսակարար կշիռն ավելի բարձր է: Խիստ անբավարար և անբավարար պատասխանների համախումբը. *60%-անոց շեմը գերազանցում է «աշխատանք գտնելու հնարավորություններ», 40%-անոց շեմը՝ «բնակավայրում մնալով բարձր կենսամակարդակ ապահովելու հնարավորություններ», «ժամանցի կազմա-*

կերպման հնարավորություններ», «առանց լրացուցիչ պարապմունքների ԲՈՒՀ ընդունվելու հնարավորություններ», իսկ 30%-անոց շեմը՝ «առողջապահական հաստատությունների մատչելիություն», «լրացուցիչ տեղեկատվություն ստանալու հնարավորություններ», «լրացուցիչ գիտելիքներ ստանալու հնարավորություններ» պատասխաններում: Նման բաշխվածությունը դարձյալ հետևանք է սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակի ու բարոյահոգեբանական մթնոլորտի և լավագույնս է արտացոլում ընտանիքի պլանավորման ոլորտում առկա հիմնախնդիրները:

Խիստ անբավարար և անբավարար պատասխանների համախմբի աճի շարժընթացը հնարավորություն է տալիս արձանագրել երեխաների ապագայի հանդեպ անվստահության իրողությունը: Նախակրթարաններում, դպրոցներում ու վերջիններում տրվող գիտելիքների որակին առնչվող հարցերում արձանագրված են համեմատաբար բարձր ցուցանիշներ: Ինչո՞վ է սա պայմանավորված: Գյուղերում ու փոքր քաղաքներում նախակրթարանների բացակայությունը դեռևս որպես սոցիալական լուրջ հիմնախնդիր չի դիտարկվում, քանի որ հատկապես երիտասարդ մայրերի մի մասը փաստացի գործազուրկ է և բացի դրանից, երեխաներին խնամելիս օգնում են ամուսիններից մեկի ծնողները, այլ ազգականներ:

Կրթական համակարգին տրվող գնահատականները ևս ունեն տարբեր պատճառներ: Վերջին տարիների վերափոխումների մի մասը, թեև դանդաղ, բայց այնուամենայնիվ տալիս է որոշ արդյունքներ: Բացի դրանից, հատկապես քաղաքներում լուրջ «պայքար» է ընթանում աշակերտների համար, քանի որ դպրոցները ֆինանսավորվում են ըստ աշակերտի թվաքանակի, ինչը պարտադրում է «մեղմել» աշակերտների նկատմամբ վերաբերմունքը:

Անդրադառնանք մշակութային ու հոգեբանական տեսանկյունից կարևոր ևս մեկ իրողության: Նախակրթարաններն ու դպրոցները երեխայի սոցիալիզացիայի վաղ փուլերին առնչվող հաստատություններ են, իսկ երեխայի կյանքի այդ փուլերում, ինչպես ավանդաբար ընդունված է հայկական միջավայրում, մեծ է նաև ծնողների ու երեխաների ազգականների դերը, ուստի այդ հաստատություններում առկա բացը կամ թերությունները կարող են լրացվել ընտանիքում:

Ըստ բացասական պատասխանների աճի հաջորդ խումբը կազմում են «բնակավայրում մնալով բարձր կենսամակարդակ ապահովելու հնարավորություններ», «ժամանցի կազմակերպման հնարավորություններ», «առանց լրացուցիչ պարապմունքների ԲՈՒՀ ընդունվելու հնարավորություններ», «առողջապահական հաստատությունների մատչելիություն», «լրացուցիչ տեղեկատվություն ստանալու հնարավորություններ», «լրացուցիչ գիտելիքներ ստանալու հնարավորություններ» պատասխանները: Սրանք ևս ուղղակիորեն երեխայի ապագային վերաբերող գործոններ են, սակայն, ինչպես ցույց են տալիս այս և այլ հետազոտությունների արդյունքները, սոցիալ-տնտեսական ճգնաժամը, աղքատության բարձր տեսակարար կշիռը, գոյության նվազագույն պայմաններ ապահովելու խնդիրների կարևորումը և այլ բացասական իրողություններ հաճախ պարզապես երկրորդ պլան են մղում երեխային ուղղակիորեն վերաբերող շատ հարցեր: Ծնողների մի մասը դրանք համարում է կարևոր, սակայն ենթադրում, որ դրանց լուծումը «կարելի է հետաձգել ավելի լավ ժամանակների»: Սա ևս կարևոր մշակութային-հոգեբանական իրողություն է, որն արտացոլում է մի կողմից, ինչպես ողջ հասարակության, այնպես էլ առանձին անհատների պահանջմունքների նվազման, մյուս կողմից՝ երեխաների ապագայի պլանավորման գործընթաց շատ կարևոր տարրեր չներառելու իրողությունը, չնայած որ բացասական պատասխանների բարձր տեսակարար կշիռն ուղղակի ապացույց կարող է դիտվել նաև հիմնախնդիրների լուծման անհրաժեշտության:

Բացասական պատասխանների առավել բարձր համախումբ է արձանագրված «աշխատանք գտնելու և բնակավայրում մնալով բարձր կենսամակարդակ ապահովելու հնարավորություններ» պատասխաններում: Սրանք այն ոլորտներն ու հիմնահարցերն են, որոնց լուծումը ծնողներից կամ ազգականների կոլեկտիվից ուղղակիորեն կախված չէ: Այս ոլորտում բացասական պատասխանների բարձր տեսակարար կշիռն ապացուցում է նաև, որ *ժողովրդագրական հիմնախնդիրների լուծմանը հնարավոր չէ հասնել դրանց մեկուսի, ավտոնոմ դիտարկման դեպքում:* Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ գործ ունենք պատճառների ու ազդեցությունների չափազանց բարդ *համախմբի հետ:* Վերջին երկու պատասխանների բարձր տեսակարար կշիռը ուղղակի ապացույցն է *ապագայի հանդեպ վստահության բացակայության,* որի հաղթահարման համար անհրաժեշտ են ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, քաղաքական, մշակութային համալիր միջոցառումներ: Չափազանց բարդ է *ընտանիքի հանդեպ պետական քաղաքականություն մշակել և իրագործել հասարակական վստահության բացակայության պայմաններում: Ավելին, ուղղակի դրամական խրախուսումները, որոնց անհրաժեշ-*

տությունը, ինչպես ցույց տրվեց, տեսնում է հարցման մասնակիցների բավականին մեծ մասը, կարող են հանգեցնել կոնկրետ բնակավայրից արտահոսքի, որովհետև կենսապայմանների ու կենսամակարդակի բարելավումը, որպես կանոն, ուղեկցվում են պահանջմունքների աճով ու դրանց բավարարման հնարավորությունների փնտրտուքով: Այսինքն, հերթական անգամ պետք է արձանագրել, որ գործ ունենք համալիր, խորքային հիմնախնդրի հետ, որի լուծումը պահանջում է գործողությունների ու միջոցառումների մանրամասն պլանավորում ու հիմնավորում:

Երեխաների ապագայի պլանավորման հիմնախնդիրներին ուղղակիորեն առնչվում են նաև բնակավայրում մնալու վերջիններիս կամ ընտանիքի անդամների ցանկություններին առնչվող հարցերը: *«Կցանկանայիք արդյոք, որ Ձեր երեխաները ապրեն այս բնակավայրում»* հարցին տրվել են հետևյալ պատասխանները.

Աղյուսակ 7.12 **Կցանկանայիք, որ Ձեր երեխաներն ապրեն այս բնակավայրում /որտեղ հիմա բնակվում եք/**

Պատասխան	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ, %	Քաղաք	Գյուղ
Այո	47.2	51.8	38.7
Ոչ	26.4	22.7	33.5
Դժվարանում եմ պատասխանել	26.4	25.5	27.8

Քաղաքներում և գյուղերում գրանցվել են որոշ տարբերություններ. քաղաքաբնակների 51.8%-ը տվել է դրական պատասխան: Գյուղաբնակ ընտանիքներում արդեն ցուցանիշը միջնից ցածր է՝ 38.7%: Ի տարբերություն քաղաքաբնակների, գյուղաբնակների մեջ արդեն բարձր է հարցին բացասական պատասխանածների տեսակարար կշիռը՝ 33.5%: Հարցման յուրաքանչյուր չորրորդ մասնակիցը, իսկ գյուղական բնակավայրերում՝ յուրաքանչյուր երրորդը, երեխայի ապագան չի տեսնում այն բնակավայրում, որտեղ ինքն է ներկայումս բնակվում: Հոգեբանական տեսանկյունից ուշագրավ են նաև դրական ու բացասական պատասխանները պայմանավորող գործոնները:

Աղյուսակ 7.13 **Դրական և բացասական պատասխանների հիմնական պատճառները %**

Պատասխան	%
Դրական	
Այստեղ ավելի պաշտպանված են, քան այլ բնակավայրում	22.0
Այստեղ ավելի լուրջ հեռանկարներ ունեն, քան այլ բնակավայրում	12.8
Կցանկանայի, որ իմ երեխաներն ապրեն իմ կողքին	65.0
Մենք կկարողանանք օգնել, որ արագ ոտքի կանգնեն	0.2
Ընդամենը՝ դրական	100
Բացասական	
Այս բնակավայրում երեխաներն ապագա, հեռանկար չունեն	13.0
Չեն կարող նորմալ կրթություն ստանալ	13.7
Չեն կարող նորմալ աշխատանք ունենալ	70.8
Այստեղ ապրելը վտանգավոր է	2.5
Ընդամենը՝ բացասական	100

Ինչպես երևում է, դրական պատասխանների հիմնական հիմնավորումը երեխաներին կողքին տեսնելու ցանկությունն է, որը, ըստ էության, նշանակում է երեխաներին ևս պարտադրել այն վիճակն ու իրականությունը, որում ապրում են ծնողները: Նման մոտեցումը, միաժամանակ, արտացոլումն է այն բանի, որ, չնայած վերջին տասնամյակում կատարված փոփոխություններին, հայկական ընտանիքում, գոնե ծնողների միջավայրում, շարունակվում է որոշակիորեն վերարտադրվել այն «ավանդականությունը», որը բնորոշ էր անցած տասնամյակներին, մասամբ նաև 1970-80-ական թթ: Այս միտումը կարող է երկակի մեկնաբանվել, սակայն որպես դրական նշենք, որ սոցիալ-տնտեսական վիճակի, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմանը զուգընթաց, ծնողների նման տրամադրվածությունը կարող է դառնալ երեխաներին բնակավայրին «կապելու» կարևոր ազդակ: Բացասական պատասխանների ճնշող մեծամասնութ-

յունը բաժին է ընկնում աշխատանքին առնչվող խնդրին, ինչը տրամաբանական է, քանի որ քաղաքային և հատկապես գյուղական բնակավայրերում այսօր կարևոր է երիտասարդության զբաղվածության հիմնահարցը: Աշխատանքի բացակայությունը արտագնացության ու արտագաղթի հիմնական պատճառներից է, սակայն միանշանակ կարելի է արձանագրել, որ աշխատատեղերով ապահովման խնդրի լուծմանը զուգահեռ կարող են մեղմվել միգրացիոն տրամադրությունները:

«Որտեղ կուզենայիք, որ բնակվեն Ձեր երեխաները, եթե չեք ցանկանում, որ բնակվեն այս բնակավայրում» հարցին տրվել են հետևյալ պատասխանները.

Աղյուսակ 7.14 **Որտեղ կուզենայիք, որ բնակվեն ձեր երեխաները (եթե չեք ցանկանում, որ ապրեն այս բնակավայրում)**

Պատասխան	Տեսակարար կշիռն ամբողջի մեջ, %	Քաղաք	Գյուղ
Երևանում	48.6	44.0	56.5
Մարզկետրոնում	3.1	0.2	8.1
ՌԴ-ում	15.9	16.7	14.6
Եվրոպական որևէ երկրում	20.8	26.5	11.0
ԱՄՆ-ում	6.4	8.8	2.4
Այլ	5.2	3.8	7.4

Ի տարբերություն նախորդ պատասխանների, այս հարցում ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի տարբերություններն էական են: Գյուղաբնակների կեսից ավելին՝ 56.5%, ցանկություն ունի երեխայի ապագան տեսնել Երևանում, ինչը նշանակում է, որ առաջիկա տարիներին ներքին միգրացիոն հոսքերի հիմնական ծանրաբեռնվածությունը դարձյալ բաժին է ընկնելու մայրաքաղաքին: Քաղաքաբնակ ընտանիքների շրջանում, ի տարբերություն գյուղաբնակների, բարձր է երեխաների ապագան եվրոպական երկրների ու ԱՄՆ-ի հետ կապողների տեսակարար կշիռը. առաջին դեպքում շուրջ 2.5, իսկ երկրորդ դեպքում՝ ավելի քան 3 անգամ: Այսինքն, էական տարբերություններ կան նաև հնարավոր միգրացիոն հոսքերի հետ կապված խնդիրներում: Պատասխանների այս համախումբը ուշագրավ է հատկապես հոգեբանական-մշակութային դիտարկման տեսանկյունից: Երևանը, ինչպես և խորհրդային շրջանում էր, շարունակելու է հանդես գալ որպես միգրացիոն հոսքերի ծանրաբեռնվածությունը կրող հիմնական օջախ: Այսօր նույնպես այդ միտումն առկա է, երբ հատկապես շինարարական աշխատանքների մեծ ծավալների պայմաններում, մայրաքաղաքում աշխատում են բազմաթիվ մասնագետներ ու բանվորներ ինչպես մոտակա, այնպես էլ հեռավոր մարզերից: Միաժամանակ, նույն Երևանը հանդես է գալու նաև որպես արտագաղթի հիմնական օջախ, եթե հաշվի առնենք, որ այստեղ է բնակվում հանրապետության բնակչության բավականին մեծ մասը: Այս իրողությունը ժողովրդագրական փոփոխությունների վրա կարող է ունենալ երկակի ազդեցություն: Արտագաղթի միտումներն ու արտագաղթողների սոցիալ-մասնագիտական կազմի վերլուծությունները ցույց են տալիս, որ հանրապետությունից հեռացել և շարունակում է հեռանալ հիմնականում բարձր որակավորում ունեցող բնակչությունը: Սա այն հատվածն է, որ արդեն որդեգրել է կամ մոտ ապագայում կորդեգրի «1-2 երեխայով ընտանիքի մոդելը»: Չափազանց կարևոր է, թե ինչպիսի խումբ կլրացնի «ձևավորված վակուումը»: Գյուղական բնակավայրերից Երևան է տեղափոխվում և առաջիկայում էլ կտեղափոխվի հիմնականում երիտասարդությունը, այսինքն, այն հատվածը, որը դարձյալ որդեգրել է կամ կորդեգրի նույն մոդելը: Այս տեսանկյունից լուրջ փոփոխություններ համեմայնդեպս պետք չէ ակնկալել: Սակայն, թեկուզ կանխավարկածի մակարդակում դիտարկենք ևս մեկ իրողություն. նման «հերթափոխությունը» ավելի շատ բացասական, քան դրական ազդեցություն է ունենալու Երևանի վրա: Նախ, նշեցինք, որ ամենայն հավանականությամբ, Երևանում հաստատվել ցանկացող երիտասարդությունը ցուցաբերելու է նույն ժողովրդագրական վարքը: Սակայն ի տարբերություն երևանյան երիտասարդության, նոր տեղափոխվածների համար երկար, իսկ որոշ դեպքերում նաև բավականին երկար է լինելու ադապտացիոն ու սոցիալիզացիայի գործընթացը, ինչը կհանգեցնի ամուսնությունների հետաձգման ու ամուսնական տարիքի աճի[33]: Մյուս կողմից, Երևան տեղափոխվելու միտումը ժո-

[33] Երևանում վերջին տարիների հասարակական-մշակութային փոփոխությունների մասին մանրամասն տես՝ Ա. Թադևոսյան, Արտագաղթի հետևանքների արտացոլումը Երևան քաղաքի հասարակական - մշակութային կյանքում

ղովրդագրական բարդություններ է ստեղծելու արդեն տեղերում, խորացնելով գյուղերի ու փոքր քաղաքների ծերացման գործընթացները: Եթե հաշվի առնենք, որ սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման դեպքում Գյումրին ու Վանաձորը նույնպես կարող են դառնալ որոշ քանակի միգրանտներ ընդունող քաղաքներ, պարզ կդառնա, որ գյուղերում համապատասխան միջոցառումների բացակայության դեպքում ժողովրդագրական ճգնաժամը կարող է ավելի խորանալ:

Ուշագրավ է, որ բավականին ցածր է ՌԴ-ն որպես բնակության վայր դիտողների տեսակարար կշիռը: Հավանաբար, սա արդյունք է վերջին իրադարձությունների, ՌԴ-ում ուժեղացող հակակովկասյան, այդ թվում՝ հակահայկական տրամադրությունների: Ժողովրդագրական տեսանկյունից վտանգավոր միտում պետք է դիտել նաև եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում իրենց երեխաների ապագան տեսնողների բավականին բարձր տեսակարար կշիռը, ինչն անվերադարձ միգրացիայի նոր ալիքի ձևավորման պատճառ կարող է դառնալ: Սակայն այս միտումը նույնպես պետք է մեկնաբանվի երկակի, քանի որ եվրոպական երկրներում ու ԱՄՆ-ում անհամեմատ բարձր են կրթության, սոցիալական շարժունության, բարձր կենսամակարդակ ապահովելու հնարավորությունները: Նշենք նաև, որ դեպի Երևան հնարավոր միգրացիոն հոսքերը կարելի է «թուլացնել» կառավարման համակարգի վերափոխումների, տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման, Երևանի գործառույթների «թեթևացման» ու տարածքային վերաբաշխման արդյունքում: Տեղերում, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում ակտիվ սոցիալ-տնտեսական, կրթական ու մշակութային քաղաքականությունը ևս կարող են բերել միգրացիոն տրամադրությունների թուլացման: Ասվածն ավելի կոնկրետ կարելի է դիտարկել ***«Ինչ է անհրաժեշտ անել, որ երեխաները մնան Ձեր բնակավայրում»*** հարցի պատասխանները դիտարկելով:

Աղյուսակ 7.15 **Ինչ է անհրաժեշտ անել, որ երեխաները մնան Ձեր բնակավայրում**

Պատասխան	%
1. Առաջին հերթին լուծվեն բնակավայրի տնտեսական խնդիրները	59.1
2. Նորմալ պայմաններ ապահովվեն կրթության համար	46.6
3. Ստեղծվեն բարձր վճարվող աշխատատեղեր	77.2
4. Նվազեցվի աղքատության մակարդակը	49.2
5. Նվազեցվեն կոռուպցիայի ծավալները հանրապետությունում	24.2
6. Ձևավորվի նորմալ բարոյահոգեբանական մթնոլորտ	20.9
7. Պետությունը հատուկ ուշադրություն դարձնի երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրներին	36.1
8. Երիտասարդ ընտանիքներին տրամադրվեն արտոնյալ պայմաններով, երկարաժամկետ վարկեր	31.8
9. Հիպոթեկային ծրագրերի միջոցով լուծվեն բնակարանային հիմնախնդիրները	18.0
10. Ավելացվեն անչափահաս երեխաներին տրվող նպաստները	30.2
11. Հատուկ արտոնություններ սահմանվեն բազմազավակ ընտանիքների համար	26.8
12. Հատուկ արտոնություններ սահմանվեն երիտասարդների համար	28.6

Բնակավայրում մնալու միջոցառումների շարքում, ինչպես երևում է աղյուսակից, կարևորագույնները *բարձր վճարվող աշխատատեղերն ու բնակավայրի տնտեսական հիմնախնդիրների լուծումն է,* որոնք փոխկապակցված են: Կարևոր խնդիրների շարքում են նաև *աղքատության մակարդակի նվազեցումը և կրթության համար նորմալ պայմանների ստեղծումը:* Պատասխաններում առաջնային է դիտվել *երիտասարդ ընտանիքների հանդեպ պետական քաղաքականության առկայությունը*: Հարցման մասնակիցների մոտեցումը պայմանականորեն կարելի է դիտարկել *երկու* մակարդակում. ա/ *ընդհանուր բնույթի խնդիրների լուծում և բ/ դրանցում երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրների կարևորում:* Պատասխանների նման բաշխվածությունը նախանշում է նաև պետական քաղաքականության հիմնական ուղղությունները: Առաջին

1991-1996թթ -Գիտական հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմության հարցերին, Եր., 2006, էջ 62-68; Մ. Գաբրիելյան, Երևանը դրսից. «ընկալման» որոշ ազգաբանական առանձնահատկությունների մասին, նույն տեղում, էջ 56-61:

հայացքից կարող է թվալ, թե դրանք ուղղակի կապ չունեն ժողովրդագրական քաղաքականության, ընտանիքի պլանավորման հիմնախնդիրների հետ: Սակայն վերը բերված այլ թվային տվյալների հետ Աղյուսակ 7.15-ի տվյալների համադրումը թույլ է տալիս եզրակացնել, որ առաջնային պետք է դիտվեն համալիր միջոցառումները, որոնք ուղղված են քաղաքային ու գյուղական համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանը, բնակավայրերի ոչ միայն տնտեսական, այլ մշակութային, կրթական ու առողջապահական հիմնախնդիրների լուծմանը: Ասվածն առավել կարևոր է հատկապես երիտասարդ, նորաստեղծ ընտանիքների համար, որոնց պահանջմունքները, որպես կանոն, բացի տնտեսականից, ներառում են նաև այլ ոլորտներ, և բնակավայրում մնալը կախված է նաև այս պահանջմունքների բավարարման հնարավորություններից:

7.1 ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ

Ընտանիքում որոշումների կայացման մեխանիզմը պատկերացնելու համար դիտարկենք ըստ հարցման արդյունքների արձանագրված պատասխանները:

Աղյուսակ 7.16 **Ում կողմից և ինչպես են կայացվում որոշումներն ընտանիքում**

Պատասխան	*ամուսինը միանձնյա*	*կինը միանձնյա*	*ամուսինն ու կինը խորհրդակցելով*	*ամուսնու/կնոջ ծնողները*	*ամուսինն ու կինը, ամուսնու/կնոջ ծնողները միասին*	*առանձին ընտանիքի բոլոր անդամները*
1. Երեխաների դաստիարակության հետ կապված որոշումներ	4.1	17.9	59.9	0.4	2.8	14.9
2. Երեխաների կրթության հետ կապված որոշումներ	3.5	9.7	64.6	0.2	1.9	20.1
3. Երեխաների ամուսնության հետ կապված որոշումներ	2.6	4.1	58.7	0.6	2.1	31.9
4. Ընտանիքին վերաբերող այլ կարևոր հարցեր	4.7	7.1	53.2	0.7	3.5	30.8
5. Կենցաղային կարևոր հարցեր	5.2	10.1	52.5	0.8	3.4	28.0
6. Կենցաղային երկրորդական հարցեր	5.1	21.4	48.4	0.9	1.9	22.3
7. Ամուսիններին վերաբերող հարցեր	5.4	4.5	80.7	0.5	0.4	8.5
8. Խոշոր գնումների հետ կապված հարցեր	3.9	5.5	51.6	0.5	3.6	34.9
9. Երեխաների թիվը և սեռը	2.4	4.4	89.3	0.1	0.2	3.6
10. Հղիության ընդհատում	2.3	9.0	85.6	0.1	0.2	2.8

Գրեթե բոլոր պատասխաններում բարձր է «ամուսինն ու կինը համատեղ» որոշում կայացնելու տարբերակի տեսակարար կշիռը: Այն բարձր է հատկապես միայն ամուսնական զույգին վերաբերող հարցերում՝ *հղիության ընդհատում, երեխաների թիվ և սեռ, ամուսիններին վերաբերող հարցեր,* երեխաների կրթության հետ կապված որոշումներ: Բավականին բարձր է նաև *«հաշվի է առնվում ընտանիքի բոլոր անդամների կարծիքը»* տարբերակի կշիռը, հատկապես կենցաղային տարբեր հարցերում: Կնոջ կողմից միանձնյա որոշումների կայացման կշիռը նույնպես բարձր է, հատկապես երեխաների դաստիարակության, հղիության ընդհատման հարցերում: Եվ վերջապես, բավականին սահմանափակ են ամուսնու/կնոջ ծնողների կողմից միանձնյա որոշումներ կայացնելու դեպքերը:

Պատասխանների նման համախումբը ուղղակի արտահայտությունն է երկու կարևոր իրողության: Խորհրդային շրջանում, արդեն 1950-60-ական թվականներին արձանագրվում էին նաև եռասերունդ ընտանիքներում երիտասարդ ամուսնական զույգի աճող ակտիվության, որոշումների կայացմանը էական մասնակցության իրողություններ: Այսինքն, այս դեպքում գործ ունենք խորհրդային շրջանի փոփոխությունների շարունակության հետ: Մյուս կողմից, պետք է արձանագրել նաև վերջին մեկուկես տասնամյակում կատարված փոփոխությունների ազդե-

ցությունը, որը դարձյալ հանգեցնում է ընտանիքում դերային գործառույթների փոփոխությունների:

Ընտանիքի հանդեպ պետական քաղաքականության տեսանկյունից խնդիրը դիտարկելիս՝ պետք է արձանագրել, որ քաղաքականության «օբյեկտը» պետք է լինի երկսերունդ, ամուսնական զույգից ու երեխաներից կազմված ընտանիքը: Մեծահասակների մասնակցությունն ընտանիքի կառավարման ու պլանավորման խնդիրներում աստիճանաբար նվազում է, չնայած շատ դեպքերում որոշումները կայացվում են ընտանիքի բոլոր անդամների համատեղ մասնակցությամբ: Կարծում ենք, նաև այս պատճառով է արձանագրվում ընտանիքում որոշումների կայացման ժամանակ վեճերի բավականին ցածր տեսակարար կշիռ:

Աղյուսակ 7.17 **Ընտանիքում որոշումների կայացման հետ կապված վեճերի առկայությունը**

Պատասխան	%
1. Այո, մշտապես	2.6
2. Այո, դեպքից դեպք	33.5
3. Գրեթե չեն լինում	27.2
4. Երբեք չեն լինում	36.3
5. Այլ	0.4

Ըստ պատասխանների, որոշումների կայացման հետ կապված վեճերի տեսակարար կշիռը բավականին ցածր է, սակայն ընտանեկան «իդեալական մթնոլորտի» գոյության փաստին այս դեպքում պետք է մոտենալ որոշակի վերապահումով, քանի որ բազմաթիվ դեպքերում, կախված սոցիալ-տնտեսական ծանր պայմաններից, ընտանիքի որևէ անդամի տնական բացակայությունից, բարոյահոգեբանական այլ գործոններից, սահմանափակ է որոշումների «դաշտը»: Բազմաթիվ ընտանիքներ լուծում են ընդամենը գոյատևման խնդիրներ, որոնք չեն պահանջում որոշումների կայացման բարդ մեխանիզմների առկայություն:

Չնայած վերապահումներին, հարցման մասնակիցների 90.0%-ը իր ընտանիքը համարել է ամուր և միայն 4.1%-ն է տվել բացասական պատասխան:

Աղյուսակ 7.18 **Որոնք են ընտանիքի ամրության հիմնական գրավականները**

Պատասխան	%
1. Սերը, փոխհամաձայնության մթնոլորտը	80.2
2. Երեխաների առկայությունը	15.8
3. Սոցիալ-տնտեսական վիճակը	0.5
4. Այլ	3.5

Վերը նշված միտումների ուղղակի արտացոլումն է նաև *«Կուզենայիք ունենալ ընտանիք, որում ապրում են երեք սերունդներ»* հարցին տրված պատասխանների համախումբը: Հարցին պատասխանածների *35.1%-ը տվել է դրական, 38.1%-ը՝ բացասական պատասխան, իսկ 26.8%-ը դժվարացել է պատասխանել:* Եվ դրական և բացասական միտումները մոտավորապես հավասար են, սակայն ժողովրդագրական հնարավոր զարգացումները դիտարկելիս, պետք է նկատի ունենալ, որ «մեկ կամ երկու երեխայով» ընտանիքի մոդելի պայմաններում այս միտումը ոչ այնքան հեռու ապագայում կարող է դառնալ պետության «լրացուցիչ սոցիալական պարտավորությունների պատճառ»: Հայկական մշակութային միջավայրում ավանդաբար գործող «ծնողները մնում են տղաներից մեկի, որպես կանոն՝ կրտսերի մոտ» տարբերակն աստիճանաբար զիջում է դիրքերը: Այս իրողությունը բնակարանային հիմնախնդրի համատեքստում դիտարկելիս՝ կարող ենք ևս մեկ անգամ արձանագրել, որ առաջիկա տարիներին սրվելու է բնակարանային հիմնախնդիրը, հատկապես երիտասարդ ընտանիքների համար:

Ըստ Աղյուսակ 7.19-ի, ավելի ու ավելի տիրապետող է դառնում ամուսնանալուց անմիջապես հետո կամ որոշ ժամանակ անց ամուսնական զույգի առանձին ապրելու միտումը:

Աղյուսակ 7.19 **Ճիշտ եք համարում, արդյոք, ծնողներից առանձին ապրելը**

Գտնում եք, որ նորաստեղծ ընտ. պետք է առանձնանա, թե ճիշտ եք համարում ծնողների հետ նույն հարկի տակ ապրելը	% ընդ. մեջ	Քաղաք	Գյուղ
1. Առանձնանալ ամուսնանալուց անմիջապես հետո, անկախ ամեն ինչից	24.4	25.8	21.6
2. Առանձնանալ ամուսնանալուց որոշ ժամանակ անց կամ առաջին երեխայի ծնվելուց հետո	15.2	13.8	17.7
3. Առանձնանալ միայն այն դեպքում, եթե լուծված է բնակարանային խնդիրը	16.3	16.4	16.2
4. Առանձնանալ այն դեպքում, երբ լուծված են բոլոր ֆինանսական խնդիրները	17.9	18.8	16.2
5. Ծնողների հետ ապրել	22.6	21.6	24.5
6. Դժվարանում եմ պատասխանել	0.2	0.3	0.1

Պատասխանների համախմբից երևում է, որ չնայած յուրաքանչյուր չորրորդը կողմնակից է ամուսնանալուց անմիջապես հետո առանձնանալուն, այնուամենայնիվ հարցին պատասխանածների մի մասը կարևոր է համարում բնակարանային ու ֆինանսական խնդիրների լուծումը, իսկ յուրաքանչյուր չորրորդն ընդունելի տարբերակ է համարում ծնողների հետ ապրելը: Քաղաքային և գյուղական բնակավայրերում էական տարբերություններ չեն արձանագրվում, սակայն գյուղերում փոքր-ինչ ավելի բարձր է ծնողների հետ ապրելու ցանկություն ունեցողների տեսակարար կշիռը, միաժամանակ, ավելի արտահայտված է «պահպանողականությունը» ամուսնանալուց անմիջապես հետո առանձնանալու հարցում: Այս տարբերությունը նույնպես ունի իր մեկնաբանությունը: «Բնակության և բնակարանային պայմաններ» բաժնում ցույց տրվեց, որ բնակմակերեսով ապահովվածության առումով գյուղերում վիճակն ավելի բարվոք է, այսինքն, ամուսնությունից հետո ամուսնական զույգը որոշ ժամանակ կարող է ապրել ծնողների հետ առանց լրացուցիչ բարդությունների: Հաջորդ կարևոր խնդիրը կապվում է արդեն գյուղի և քաղաքի հնարավորությունների հետ: Քաղաքային միջավայրում սեփական բնակարանի բացակայության այլընտրանքը վարձով բնակվելն է, իսկ գյուղերում նման հնարավորությունները սահմանափակ են: Միաժամանակ, պետք է հաշվի առնել գյուղական միջավայրի ավանդականությունը՝ այստեղ ընդունված ու տարածված չէ ամուսնանալուց անմիջապես հետո առանձնանալը, առավել ևս վարձով բնակվելը:

Վերաբերմունքի ու վարքի փոփոխությունների ուղղակի արտացոլումն է նաև արձանագրված այն իրողությունը, որ հարցին պատասխանածների *26.0%-ը ճիշտ է համարում բոլոր հարցերում անխտիր ծնողների հետ խորհրդակցելը, իսկ 61.9%-ը գտնում է, որ դա անհրաժեշտ է միայն կարևոր հարցերում:*

7.2 ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտությունում ընտանեկան բռնություններին վերաբերող հարցերը ներառվել են հասարակական ընկալումները պարզելու և ներընտանեկան հարաբերությունների վրա վերջիններիս ունեցած ազդեցությունները բացահայտելու նպատակով:

Աղյուսակ 7.20 **Արդյոք ընտանեկան բռնությունները ՀՀ-ում լայն տարածում ունեն**

Պատասխան	%
1. Այո, շատ տարածված են	22.2
2. Տարածված են մասամբ	28.3
3. Տարածված չեն	15.5
4. Դժվարանում եմ պատասխանել	33.8
5. Այլ	0.2

Ըստ արձանագրված պատկերի, ընտանեկան բռնությունների տարածվածությունը Հայաստանում ընդունում է հարցման մասնակիցների կեսից ավելին:

Ուշագրավ են բռնությունների տիպաբանության ու ընկալման հետ կապված խնդիրները (Աղյուսակ 7.21):

Աղյուսակ 7.21 **Բռնությունների տիպաբանության առանձնահատկությունները ընտանիքի առանձին անդամների հանդեպ, %**

Բռնության տիպ	Ամուսնու հանդեպ	կնոջ հանդեպ	երեխաների հանդեպ	ամուսնու/կնոջ ծնողների հանդեպ	ընտանիքի այլ անդամների հանդեպ
1. Սպառնալիք	23.4	32.8	26.8	24.6	22.0
2. Անընդհատ դիտողություններ, նկատողություններ	11.8	16.5	12.2	10.9	8.9
3. Կոպիտ խոսելաոճ, լեզվակռիվ	16.2	22.9	18.1	16.8	13.0
4. Հայհոյանք	23.1	38.7	33.5	28.0	22.7
5. Ապտակ	26.4	45.4	39.2	29.4	25.9
6. Ծեծ	43.3	71.0	64.7	49.0	44.7
7. Վնասվածքներ հասցնել, հարվածել	39.9	58.8	55.7	44.1	39.9
8. Անկախ պատճառաբանությունից անտեսել /արհամարհել/	11.9	16.7	13.6	16.1	12.2
9. Ծանր ֆիզիկական աշխատանքներով ծանրաբեռնել	11.9	20.4	21.0	15.8	13.3
10. Իր կամքին հակառակ ինչ-որ բան պարտադրել	19.7	28.2	23.4	21.4	15.4
11. Աշխատել չթույլատրել	11.1	21.6	12.3	12.4	11.6
12. Հարազատների, բարեկամների հետ շփվելն արգելել	19.0	30.3	21.3	20.9	18.6
13. Ընտանիքին վերաբերող կարևոր հարցերում կարծիքն անտեսել	14.9	20.4	12.8	17.8	13.8

Աղյուսակի դիտարկումը հնարավորություն է տալիս արձանագրել հայկական միջավայրում բռնությունների ընկալման որոշ առանձնահատկություններ: Ըստ պատասխանների տեսակարար կշռի, հարցման մասնակիցները որպես ընտանիքի բոլոր անդամների հանդեպ բռնության ձև են դիտարկում վնասվածքներ հասցնելը, հարվածելը, հայհոյանքը, սպառնալիքը, ապտակը, այսինքն՝ հիմնականում ֆիզիկական բռնությունները: Բավականին բարձր տեսակարար կշիռ է արձանագրված նաև հոգեբանական բռնությունների խմբում՝ անկախ պատճառաբանությունից անտեսել, արհամարհել, կամքին հակառակ ինչ-որ բան պարտադրել, ընտանիքին վերաբերող կարևոր հարցերում կարծիքն անտեսել: Պատասխանները գրեթե համաչափ են բաշխված նաև ըստ ընտանիքի անդամների: Այսինքն, կա բռնությունների որոշակի կայուն ընկալում, ըստ որի և ֆիզիկական և՝ հոգեբանական բռնություններն անընդունելի են դիտվում ընտանիքի բոլոր անդամների հանդեպ: Սակայն գրանցվել են նաև որոշ առանձնահատկություններ: Օրինակ, հոգեբանական բռնությունները հարցման մասնակիցների մի մասի կողմից չեն կարևորվում այնպես, ինչպես ֆիզիկական բռնությունները: Պատահական չէ, որ, օրինակ, երեխային անտեսելը, կամքին հակառակ ինչ-որ բան պարտադրելը, ծանր ֆիզիկական աշխատանքներով ծանրաբեռնելը, ընտանիքին վերաբերող կարևոր հարցերում երեխայի կարծիքն անտեսելը որպես բռնություն է դիտարկում յուրաքանչյուր հինգերորդը միայն: Նույնն է վիճակը նաև ընտանիքի մնացած անդամների՝ կնոջ, ծնողների, ընտանիքի այլ անդամների դեպքում:

Վերջին տարիներին Հայաստանում ընտանեկան բռնությունների վերաբերյալ տարբեր հետազոտություններում արձանագրվում է բռնությունների ընկալման գրեթե նույն մոդելը:

Բավականին բարդ է այս վիճակի պատճառների համախմբի ամբողջական բացահայտումը: Մի կողմից, երեխաների, կանանց ու ընտանիքի այլ անդամների մասնակցությունը ծանր ֆիզիկական աշխատանքներին հենց իրենց կողմից դիտվում է որպես ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանք, երբ միայն ընտանիքի բոլոր անդամների ջանքերով է հնարավոր գոյության նվազագույն միջոցների ապահովումը: Մյուս կողմից, ոչ երկրորդական են հայկական միջավայրում ավանդաբար ձևավորված ու գործառնող նորմերը, ըստ որոնց՝ երեխաների դաստիարակության հարցերում, հատկապես վաղ տարիքում, ծնողներն ունեն լայն իրավունքներ ու արտոնություններ: Ուշագրավ է, որ ըստ տարբեր հետազոտությունների արդյունքների, և երեխաները և՝ կանայք ու ընտանիքի մնացած անդամներն իրենք էլ հոգե-

բանական ու ֆիզիկական բռնությունների թվին դասվող շատ իրողություններ իրականում բռնություն չեն համարում:

Նաև ընկալման այս մոդելն է պատճառն այն բանի, որ ըստ հարցման արդյունքների, կոնկրետ ընտանիքներում ևս բռնությունների տեսակարար կշիռը ցածր է:

Աղյուսակ 7.22 **Ձեր ընտանիքում կան արդյոք բռնություններ, %**

Բռնության տիպ	Ամուսնու հանդեպ	կնոջ հանդեպ	երեխաների հանդեպ	ամուսնու/կնոջ ծնողների հանդեպ	ընտանիքի այլ անդամների հանդեպ
1. Սպառնալիք	0.2	0.7	1.1	0.1	0.1
2. Անընդհատ դիտողություններ, նկատողություններ	2.4	3.8	6.8	1.8	1.7
3. Կոպիտ խոսելաոճ, լեզվակռիվ	2.5	4.6	3.2	1.3	1.3
4..Հայհոյանք	0	1.7	0.6	0.2	0
5. Ապտակ	0	0.9	2.2	0	0.1
6. Ծեծ	0	0.8	0.6	0.1	0.1
7. Վնասվածքներ հասցնել, հարվածել	0	0.3	0.2	0.1	0.1
8. Անկախ պատճառաբանությունից անտեսել /արհամարհել/	0.1	0.2	0.2	0.4	0.1
9. Ծանր ֆիզիկական աշխատանքներով ծանրաբեռնել	0.1	0.1	0.6	0	0
10. Իր կամքին հակառակ ինչ-որ բան պարտադրել	0.2	1.3	0.9	0.2	0.2
11. Աշխատել չթույլատրել	0	1.3	0.4	0.1	0.1
12. Հարազատների, բարեկամների հետ շփվելն արգելել	0.1	1.0	0.1	0.2	0.1
13. Ընտանիքին վերաբերող կարևոր հարցերում կարծիքն անտեսել	0.1	0.9	0.6	0.8	0.3

Չնայած ընտանիքներում բռնությունների կոնկրետ դեպքերի համեմատաբար ցածր տեսակարար կշռին, այնուամենայնիվ, դիտվում են որոշ առանձնահատկություններ:

Բռնությունների համեմատաբար տարածված տիպերը անընդհատ դիտողությունները, նկատողությունները, կոպիտ խոսելաոճն ու լեզվակռիվն են, որտեղ արձանագրվել են ամենաբարձր ցուցանիշները: Ըստ բռնությունների «օբյեկտների» նույնպես գրանցվել են տարբերություններ: Բռնության օբյեկտ են հիմնականում կանայք և երեխաները: Գրեթե բոլոր պատասխաններում ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են կնոջ հանդեպ բռնությունների դեպքում: Երեխաների հանդեպ բռնությունների ցուցանիշները նույնպես փոքր-ինչ բարձր են ընտանիքի այլ անդամների համեմատ, ինչը, կարծում ենք, արդյունք է նաև վերը բերված՝ բռնությունների ընկալման որոշ առանձնահատկությունների: Կարևոր է նկատի ունենալ նաև, որ ընտանեկան բռնությունները բացահայտելն ու տիպաբանելը բավականին բարդ խնդիր է: Հաճախ նույնիսկ բռնությունների առկայության դեպքում, հարցման մասնակիցները գերադասում են կամ չխոսել դրա մասին կամ պարզապես արձանագրել ընտանիքում բռնությունների բացակայությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին մեկուկես տասնամյակում հայաստանյան հասարակության, նաև՝ հայկական ընտանիքի, զարգացումը բնութագրվում է հակասական ու իրարամերժ իրողություններով, որոնք հերթական անգամ արձանագրվեցին անցկացված հետազոտությամբ:

Այն թույլ տվեց բացահայտել, որ ընտանիքում առկա հիմնախնդիրները ***համակարգային բնույթի են:*** Սա նշանակում է, որ ժողովրդագրական ճգնաժամը, ժողովրդագրական վարքի փոփոխությունները, որոնք դիտարկվեցին վերլուծության համապատասխան բաժիններում, ուղղակիորեն պայմանավորված են ոչ միայն *տնտեսական, այլ նաև հասարակական, քաղաքական, մշակութային, բարոյահոգեբանական բնույթի գործոններով:*

Ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարումը պետք է հայտարարվի պետական քաղաքականության գերակայություն, ազգային-պետական անվտանգության ապահովման կարևորագույն տարր, իսկ ընտանիքը՝ պետական ժողովրդագրական քաղաքականության հիմնական սուբյեկտ: Ընտանիքի, որպես *սուբյեկտի* ընկալումն ու ներառումը պետական քաղաքականության ծրագրերում ունի կարևորագույն նշանակություն:

Հիմնախնդրի համակարգային բնույթը որպես ելակետային ընդունելով, ներկայացնենք հետազոտության արդյունքում բացահայտված հիմնական խնդիրներն ու դրանց հնարավոր լուծումների որոշ առաջարկություններ:

1. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ տարաբնույթ փոփոխություններն ազդել են ընտանիքի *ժողովրդագրական բնութագրի, կազմի և կառուցվածքի վրա: Մեկ* տ/տ-ում բնակվողների միջին թիվն, ըստ հարցման արդյունքների, կազմում է ընդամենը 3.6, իսկ ընտանիքում բնակվողների միջին թիվը՝ 2.9 մարդ: Մեծամասնություն են կազմում 1-4 անձից կազմված ընտանիքները՝ 84.4%, 5 և ավելի անձից կազմված ընտանիքները կազմում են ընդամենը 15.6%: Հետազոտված ընտանիքների 19.3%-ում կա մինչև 18 տարեկան 1 երեխա, 19.1-ում՝ 2 երեխա: Երեք և ավելի անչափահաս երեխա կա հետազոտված տնային տնտեսությունների ընդամենը 6.5%-ում:

Այս իրավիճակը, փաստորեն, թույլ է տալիս ձևակերպել թիվ մեկ հիմնախնդիրը. դա այսօր ընտանիքում երեխաների այնպիսի թիվն է, որը չի ապահովում և առաջիկա տարիներին, ներկա միտումների պահպանման դեպքում, չի ապահովի նույնիսկ պարզ վերարտադրություն:

Սոցիալ-ժողովրդագրական բնույթի հաջող խնդիրը կապվում է քաղաքային և հատկապես գյուղական բնակավայրերում ***սոցիալ-մասնագիտական համահարթեցման, տարբեր խմբերի դերի ու կարևորության սահմանափակման հետ:*** Հետազոտությունը ցույց տվեց, որ եթե քաղաքային միջավայրում պահպանվել են ըստ կրթական ցենզի օպտիմալ բաշխվածության համամասնությունները, ապա ***գյուղական միջավայրում դրանք արդեն իսկ խախտված են: Գյուղերում բարձրագույն կրթություն ունեցողները կազմում են ընդամենը 6.5%:*** Սա նշանակում է հասարակական-մշակութային ու արժեքային դաշտի աղքատացում, համայնքային մակարդակում կազմակերպման ու ինքնակազմակերպման տարբերակների սահմանափակում, քանի որ բարձրագույն կրթություն ունեցողները ավանդաբար կարևոր դեր են խաղացել հայկական միջավայրում: Միաժամանակ, նման վիճակը կարող է բերել միգրացիոն հոսքերի ակտիվացման և խորացնել գյուղական միջավայրում հատկապես երեխաների ապագայի հանդեպ անվստահության իրողությունները: Նման իրավիճակում որպես միջոցառումներ կարող են առաջարկվել.

- Գյուղական երիտասարդության համար բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններում նպատակային տեղերի հատկացումը՝ փոխադարձ պարտավորությունների հստակեցմամբ: Որպես տարբերակ կարող է դիտվել հետևյալը՝ X տարի բուհում կամ միջնակարգ մասնագիտական հաստատությունում ուսանած երիտասարդը պարտավորվում է *X*

անգամ սահմանված գործակից տարի աշխատել գյուղում, հակառակ դեպքում՝ փոխհատուցել ուսման համար պետության կողմից կատարված ծախսերը[34]:

- Խրախուսման նմանատիպ քաղաքականություն կարելի է կիրառել նաև քաղաքաբնակ երիտասարդների համար, սահմանելով այլ արտոնություններ. աշխատավարձի որոշակի հավելավճար, որը կուտակվում է բանկային հաշվում և մինչև սահմանված ժամկետի լրանալը համարվում անձեռնմխելի, իսկ պայմանագրի խախտման դեպքում չի վճարվում:

Միջոցառումների այս համախումբը պետք է դիտարկվի պետական քաղաքականության այլ ծրագրերի, մասնավորապես ԱՀՌՃ համատեքստում:

2. ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքաբնակ ընտանիքներում հարցվածների 14.4%-ը բնակվում է 1 սենյականոց կացարանում: Ընդ որում, 1 սենյականոց բնակարանում է բնակվում մինչև 16 տարեկանների 7.3, 16-30 տարեկանների՝ 6.2, 35-49 տարեկանների՝ 7.3%-ը: Սրանք հիմնականում վերարտադրողական տարիքում գտնվող, կամ առաջիկայում այդ տարիք մուտք գործող խմբերն են: Եթե հավելենք նաև 2 և 3 սենյականոց բնակարաններում բնակվողների բարձր տեսակարար կշիռը, կարող ենք արձանագրել, որ բնակարանային հիմնախնդիրը, որն արդեն սրացել է հատկապես քաղաքային միջավայրում, մոտ ապագայում էլ ավելի է սրանալու հատկապես երիտասարդ ընտանիքների համար, քանի որ շատ քիչ երիտասարդներ ունեն աշխատավարձով բնակարան գնելու հնարավորություն: Պատահական չէ, որ պետությունից ակնկալիքների շարքում հարցման պատասխանների 51.2%-ում առաջնային է համարվել բնակարանի ձեռքբերման կամ բնակմակերեսի ընդլայնման հարցում աջակցությունը /դոտացիա, սուբսիդիա և այլն/:

Հաշվի առնելով պետության սահմանափակ հնարավորությունները, բնակարանային խնդրին կարելի է տալ կոմբինացված լուծումներ, որոնք, բնականաբար, կարիք ունեն վերանայումների և լրացուցիչ տնտեսագիտական հիմնավորումների ու հաշվարկների: Հնարավոր լուծումներ կարող են լինել.

- Հանրապետության բնակչության մի ստվար հատվածն այսօր կենտրոնացած է Երևանում, իսկ քաղաքների ու հատկապես գյուղական բնակավայրերի մեծ մասը կորցնում է «գրավչությունը»: Միաժամանակ, որոշ քաղաքային և գյուղական բնակավայրերում այսօր կա բնակարանների ավելցուկ, որոնք կարող են ձեռք բերվել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, նաև՝ պետությունից տրամադրվող միջոցների հաշվին, արտոնյալ, երկարաժամկետ մարման պայմանով ու ցածր տոկոսադրույքներով հատկացվել երիտասարդներին: Յուրաքանչյուր երեխայի ծննդյան հետ կապված պետությունն ու տեղական ինքնակառավարման մարմինը կարող են զիջել գումարի որոշակի մասը:

- Նշված պրակտիկան կարելի է կիրառել հատկապես տուրիզմի զարգացման հեռանկարներ ունեցող տարածաշրջաններում, որտեղ կարող են ստեղծվել նաև զբաղվածության լրացուցիչ հնարավորություններ երիտասարդների համար: Եվ վերջապես, նշված միջոցառումները հետևողական իրագործման դեպքում, կարող են լուծել նաև Երևանի «բեռնաթափման» ու հանրապետության բնակչության տեղաբաշխման անհամամասնության հաղթահարման խնդիրը:

3. ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

[34] Նման պրակտիկա կիրառվել է տարբեր երկրներում, մասնավորապես, Իրանի Իսլամական հանրապետությունում:

Ըստ հարցման արդյունքների, որևէ ոլորտում զբաղված է եղել ընտանիքների անդամների 28.6%-ը, 36.2% տղամարդ և 21.8% կին համամասնությամբ: Քաղաքաբնակ և գյուղաբնակ զբաղվածների տեսակարար կշիռը մոտավորապես նույնն է՝ 28.8 և 28.2%: Զբաղվածության գրեթե բոլոր ոլորտներում տղամարդկանց տեսակարար կշիռն ավելի բարձր է, քան կանանցը: Իշխանության և կառավարման մարմինների ներկայացուցիչների մեջ այդ ցուցանիշը բարձր է 2 անգամ, որակավորված բանվորների պարագայում՝ շուրջ 7 անգամ:

Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի տարբերությունները նույնպես բավականին արտահայտված են: Էական են նաև մինչև 16 տարեկան երեխա ունեցող ընտանիքների զբաղվածության տարբերությունները: Այս ոլորտում առաջնային է կանանց, հատկապես մինչև 16 տարեկան երեխաներ ունեցողների զբաղվածության խնդիրը: Կանանց զբաղվածության խնդիրը կարևոր է նաև այն պատճառով, որ աշխատանքը, ինչպես ցույց տրվեց համապատասխան բաժիններում, ազդում է ընտանիքի պլանավորման, երեխաների թվի և ներընտանեկան հարաբերությունների տարբեր ոլորտների վրա: Զբաղվածության ապահովման հարցերում ևս պետության ուղղակի աջակցության հնարավորությունները, հատկապես մասնավոր սեկտորի գործատուների վրա ազդելու առումով, բավականին սահմանափակ են:

Այս պրակտիկան կիրառելու և կանանց զբաղվածությունը խրախուսելու ավելի մեծ հնարավորություններ ունեն պետական կառավարման համակարգի ինստիտուտները, ՏԻ մարմինները, մարզպետարանները, պետական և ՏԻ ենթակայության հաստատությունները: Այս կառույցները կարող են նպաստ բերել նաև կանանց այլընտրանքային զբաղվածության խթանմանը, մանավանդ որ այժմ, երբ հանրապետությունում բազմաթիվ ծրագրեր են իրագործվում: Խոսքը վերաբերում է ավանդական արհեստների՝ գորգագործություն, ասեղնագործություն, կարպետագործություն զարգացմանը տնային պայմաններում, դրանց ուսուցմանն ու տարածմանը: Միաժամանակ, կնոջ զբաղվածության աճը հնարավորություն կտա խրախուսել վերջինիս ակտիվությունը, կանոնակարգել ընտանիքի պլանավորումը, մեղմել ներընտանեկան հարաբերությունների լարվածությունը: Նույնը վերաբերում է տղամարդկանց, հատկապես երիտասարդների զբաղվածությանը. և ՏԻ մարմինները և' պետական կառավարման համակարգի հաստատությունները պետք է կարևորեն, իսկ որոշ դեպքերում՝ նաև քվոտավորեն երիտասարդների համար նախատեսված աշխատատեղերը:

4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտում նույնպես արձանագրվում են բավականին լուրջ խնդիրներ: Մասնավորապես, հարցման մասնակից ընտանիքների 21.6%-ը, քաղաքներում և գյուղերում՝ համապատասխանաբար 18.0 և 28.4%-ը ունեցել է առողջապահական հաստատություն դիմելու կարիք, բայց չի դիմել: Չդիմելու պատճառների մեջ հիմնականը ֆինանսական անմատչելիությունն է ընտանիքների 86.3%-ի համար: Պատահական չէ, որ հարցման մասնակիցների մեծ մասը բավականին ցածր է գնահատել նաև մատուցվող առողջապահական ծառայությունների որակը:

Ինչպես վերը նշված որոշ ոլորտներում, այս ոլորտում ևս, միջոցառումները պետք է դիտարկվեն սոցիալ-տնտեսական բնույթի ընդհանուր միջոցառումների, մասնավորապես ԱՀՌԾ համատեքստում: Իրականացվող միջոցառումների շարքում, հատկապես գյուղական բնակավայրերում ու փոքր քաղաքներում, առաջնային են հղիներին, հետծննդյան շրջանում գտնվողներին ու նորածիններին մատուցվող որակյալ ծառայությունները, պարբերական ստուգայցերը: Ֆինանսական բարդությունների պատճառով շատ ընտանիքներ չեն կարողանում դիմել նույնիսկ շրջանային ու մարզային հիվանդանոցներ, չնայած վերջին տարիներին արձանագրվել են դրական տեղաշարժեր, կապված ինչպես պետական աջակցության քաղաքականության, այնպես էլ միջազգային կազմակերպությունների ակտիվության հետ:

5. ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՔ

Ընտանիքի վերարտադրողական վարքում արձանագրված խնդիրները, ըստ էության, հանրագումարային են և որոշ դեպքերում կարող են նույնիսկ կրկնել նախորդ բաժիններում արձանագրվածները: Հետազոտությունը, սակայն, հնարավորություն է տալիս որպես ժողովրդագրական իրավիճակի փոփոխության կարևոր նախապայման դիտարկել ժողովրդագրական վարքի փոփոխության անհրաժեշտությունը: Հարցման մասնակից ընտանիքների ճնշող մեծամասնությունում, թե քաղաքներում, թե՝ գյուղերում ընդամենը մի քանի տասնամյակ առաջ տարածված է եղել «բազմազավակ ընտանիքի մոդելը»: Ներկայումս իրավիճակը փոխվել է և ընտանիքների մեծամասնությունը պետական օժանդակություն է ակնկալում երեխաների ծննդի և հոգածության հարցում: Ընդ որում, հոգածությունն ակնկալվում է ոչ միայն նյութական (դրամային) աջակցության, այլև բնակության վայրում երեխայի ապագայի համար նպաստավոր պայմանների ստեղծումով:

Ըստ հարցման արդյունքների, մասնակիցների մեծ մասը բավարարված չէ բնակավայրում երեխաների համար ստեղծված պայմաններից: Չնայած իրագործվող ծրագրերին ու միջոցառումներին, առկա են կրթական, առողջապահական համակարգերի լուրջ հիմնախնդիրներ, որոնք կարևոր նշանակություն ունեն պլանավորման տեսանկյունից: Բացասական պատասխանների առավել բարձր համախումբ է արձանագրված **«աշխատանք գտնելու և բնակավայրում մնալով բարձր կենսամակարդակ ապահովելու հնարավորություններ» պատասխաններում, ինչն ապացուցում է, որ *ժողովրդագրական հիմնախնդիրների լուծմանը հնարավոր չէ հասնել դրանց մեկուսի, ավտոնոմ դիտարկման դեպքում:*** Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ գործ ունենք պատճառների ու ազդեցությունների չափազանց բարդ *համախմբի հետ:* Պատասխանները ուղղակի ապացույցն են *ապագայի հանդեպ վստահության բացակայության,* որի հաղթահարման համար անհրաժեշտ են ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական, քաղաքական, մշակութային համալիր միջոցառումներ: Չափազանց բարդ է *ընտանիքի հանդեպ պետական քաղաքականություն մշակել և իրագործել հասարակական վստահության բացակայության պայմաններում: Ավելին, ուղղակի դրամական խրախուսանքները, որոնց անհրաժեշտությունը տեսնում է հարցման մասնակիցների բավականին մեծ մասը, կարող են հանգեցնել կոնկրետ բնակավայրից արտահոսքի, որովհետև կենսապայմանների ու կենսամակարդակի բարելավումը, որպես կանոն ուղեկցվում են պահանջմունքների աճով ու դրանց բավարարման հնարավորությունների փնտրտուքով:* Հարցման յուրաքանչյուր չորրորդ, իսկ գյուղերում երրորդ մասնակիցը, երեխայի ապագան չի տեսնում այն բնակավայրում, որտեղ ինքն է ներկայումս բնակվում: Բնակավայրում մնալու միջոցառումների շարքում կարևորվել են ***բարձր վճարվող աշխատատեղերը, բնակավայրի տնտեսական հիմնախնդիրների լուծումը,*** որոնք ուղղակիորեն փոխկապակցված են: Կարևոր խնդիրների շարքում են նաև ***աղքատության մակարդակի նվազեցումը և կրթության որակի ապահովումը:***

Այս ոլորտում հնարավոր փոփոխությունները պետք է դիտարկել սոցիալ-տնտեսական ու հասարակական-մշակութային համալիր վերափոխումների համատեքստում:

Առանձնացված խնդիրների հիմնական շրջանակի լուծման համար առաջնային է ընտանիքին առնչվող տարբեր ոլորտներում մշակվող ու իրագործվող ծրագրերի մասնագիտական փորձաքննությունը ***«Ընտանիքի հանդեպ պետական քաղաքականության» և «Պետական ժողովրդագրական քաղաքականության» հայեցակարգերի տեսանկյունից,*** դրանց դրույթների հաշվառումը, ծրագրերում երիտասարդների ու երիտասարդ ընտանիքների առանձնացումը որպես հիմնական թիրախ խմբերի:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՀՌԾ	Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԺԻ	Մարդու իրավունքների և ժողովրդավարության ինստիտուտ
ՌԱՀՀԿ	Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն
Տ/Տ	տնային տնտեսություն
ՏԻ	տեղական ինքնակառավարում

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, Եր., 2003:
2. Արտագաղթը Հայաստանից (խմբագիր՝ Հ. Խառատյան), Եր., 2003:
3. **Ավագյան Գ.,** Հայաստանը 1920-1990թթ, Եր., 1997:
4. **Գաբրիելյան Մ.,** Հայկական ընտանիքն անցումային շրջանում. ազգաբանական ուսումնասիրություն, Եր., 2005:
5. **Գաբրիելյան Մ.**, Երևանը դրսից. «ընկալման» որոշ ազգաբանական առանձնահատկությունների մասին.-Գիտական հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմության հարցերին, Եր., 2006, էջ 56-61:
6. **Գաբրիելյան Մ.,** Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը, Եր., 2001:
7. **Գաբրիելյան Մ.,** Աղքատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001:
8. **Գալստյան Մ.,** Հայաստանի Հանրապետության բնակչության աշխատանքային միջպետական տեղաշարժերը, ՌԱՀՀԿ, Եր., 1998:
9. **Եգանյան Ռ., Կուլումջյան Կ.,** Ետխորհրդային Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական մարտահրավերները, Եր., 2004:
10. Տնտեսական աճը, անհավասարությունը և աղքատությունը Հայաստանում, Եր., 2002:
11. **Խոջաբեկյան Վ.,** Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Եր., 1998:
12. Հայաստան, Մարդկային զարգացման զեկույց, Եր., 1995-2004:
13. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, վիճակագրական վերլուծական զեկույց, Եր., 2002:
14. Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները, Եր., 2001:
15. **Թադևոսյան Ա.,** Գոյատևման ռազմավարությունը հասարակական համագործակցության համատեքստում, ՌԱՀՀԿ, Եր., 1998:
16. **Թադևոսյան Ա.,** Արտագաղթի հետևանքների արտացոլումը Երևան քաղաքի հասարակական -մշակութային կյանքում 1991-1996թթ-Գիտական հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմության հարցերին, Եր., 2006, էջ 62-68:
17. **Թադևոսյան Ա.,** Հասարակական շերտավորման և աղքատության ձևավորման պատկերը Հայաստանում 1991-1997թթ, ՌԱՀՀԿ, Եր., 1998:
18. **Թադևոսյան Ա., Գաբրիելյան Մ.,** Աղքատության ու գոյատևման պատկերը. հասարակության շերտավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, ՄԻԺԻ, Եր., 2003:
19. **Խառատյան Հ.,** Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Եր., 2000:
20. Հայաստանի կանայք և տղամարդիկ. վիճակագրական գրքույկ, Եր., 2005:
21. Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները (Հայաստանի Հանրապետության ցուցանիշները), Եր., 2003:
22. **Մինասյան Է.,** Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Եր., 2003:
23. **Àðóòþíîâ Ñ.,** Íàðîäû è êóëüòóðû: ðàçâèòèå è âçàèìîäåéñòâèå, Ì., 1989.
24. **Ïîãîñÿí Ã.,** Àðìÿíñêîå îáùåñòâî â òðàíñôîðìàöèè, Åðåâàí, 2003.
25. **Òåð-Ñàðêèñÿí À.,** Àðìÿíå: èñòîðèÿ è ýòíîêóëüòóðíûå òðàäèöèè, Ì., 1998.

Հավելված 1

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Տվյալները կօգտագործվեն բացառապես վիճակագրական վերլուծության համար և հրապարակման ենթակա չեն

“Ընտանիք” ինստիտուտի հետազոտության

ՀԱՐՑԱԹԵՐԹ

Հարցաթերթի հերթական համարը

Տնային տնտեսության տարբերակիչ համարը

Ուսումնասիրության ժամանակահատվածը՝ 2006թ.

Մարզ

անվանում *կոդ*

Բնակավայր

անվանում *կոդ*

Հարցազրուցավարի համարը

Հետազոտության հարցազրուցավարին վերաբերող հատուկ հրահանգները գրված են ***ընդգծված շեղատառերով***:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԱՎԱՐ. Հարցազրույցը սկսելուց առաջ հարցվողին ներկայացեք.

«Իմ անունն է_____(ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԱՎԱՐ. ՆԵՐԿԱՅԱՑԵՔ):
Ես ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական Ծառայությունը, որը սույն հարցումն իրականացնում է Սոցիալական ապահովության նախարարության հետ համատեղ և ՄԱԿ-ի Բնակչության Հիմնադրամի պատվերով: Հարցման նպատակն է իրականացնել հանրային կարծիքի ուսումնասիրություն "ընտանիք" ինստիտուտի հիմնական ցուցանիշների վերաբերյալ, որը կնպաստի "ընտանիք" ինստիտուտի հայեցակարգը մշակողների կողմից որակյալ և գործունակ վճիռների կայացմանը : Ձեր տնային տնտեսությունն ընտրվել է պատահականորեն:
Մենք շատ բարձր ենք գնահատում Ձեր մասնակցությունն այս հետազոտությանը: Հարցազրույցը սովորաբար տևում է շուրջ 20 րոպե: Մենք վստահեցնում ենք, որ Ձեր տնային տնտեսությունն <u>անվանական չի նշվի, և տրամադրված ողջ տեղեկատվությունը գաղտնի կպահվի</u> ու կկիրառվի միայն ամփոփ տեսքով՝ հետազոտական նպատակների համար:

Ձեր մասնակցությունը այս ուսումնասիրությանը կամավոր է և Դուք իրավունք ունեք հրաժարվել ցանկացած անձնական, ինչպես նաև մյուս բոլոր հարցերին պատասխանելուց: Այնուամենայնիվ, մենք հուսով ենք, որ Դուք կմասնակցեք այս հետազոտությանը, քանզի Ձեր տեսակետը մեզ համար կարևոր է: Ողջ ուսումնասիրության ամփոփ արդյունքների արժանահավատությունը կախված է հարցերին տրված Ձեր անկեղծ և ճշգրիտ պատասխաններից:
Խնդրում եմ հիշեք, որ այն տեղեկատվությունը, որը Դուք կտրամադրեք այս հարցման ընթացքում, կմնա գաղտնի:»

Բաժին Ա

Տնային տնտեսություն, ընտանիք և ժողովրդագրական կազմ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԱՎԱՐ. Ընտրեք այն չափահաս անդամին , որը կարող է լիարժեք պատասխաններ տալ տնային տնտեսության վերաբերյալ հարցերին, և հարցազրույցն անցկացրեք նրա հետ:

Ա.1 Ես կցանկանայի ճշտել, թե քանի՞ ընտանիք կա Ձեր տնային տնտեսությունում (Ընտանիք ասելով հասկանում ենք համատեղ բնակվող, ազգակցական, ամուսնական կապերով կապված անձանց ընդհանրությունը, այսինքն ամուսնական զույգը և նրանց զավակները):

Տնային տնտեսությունում ընտանիքների թիվը

Ա.2 Կարո՞ղ եք ասել Ձեր և Ձեր տնային տնտեսության մյուս անդամների ազգակցական կապը տնային տնտեսության գլխավորի հետ, ինչպես նաև նրանց սեռը և տարիքը՝ սկսելով տնային տնտեսության գլխավորից (Տնային տնտեսություն ասելով հասկանում ենք մեկ անձ կամ անձանց խումբ, որոնց համար ընդհանուր է բյուջեն և բնակվելու վայրը: Ընդ որում բարեկամական կապերը պարտադիր չեն համարվում):

ՀԱՐՑԱԶՐՈՒՑԱՎԱՐ. Ա2.1-Ա2.12 հարցերի պատասխանները գրանցեք ստորև բերված աղյուսակում՝ միշտ սկսելով տնային տնտեսության գլխավորից, ապա նրա կնոջը (ամուսնուն), նրանց երեխաներին և մնացած անդամներին:Եթե տնային տնտեսությունում ապրում են մեկից ավելի ամուսնական զույգեր, ապա ամուսնական զույգերն գրանցել հաջորդականությամբ՝ ամուսնուն, կնոջը ապա երեխաներին: Ա2.1 սյունակում վերցրեք շրջանի մեջ տնային տնտեսության այն անդամի հերթական համարը, որը պատասխանելու է հարցերին, այնուհետև գրանցեք համապատասխան կոդերը (ծածկագրերը) Ա2.3-Ա2.12 սյունակներում:

S/Տանդամի հ/հ	Անունը	Սեռը 1.արական 2.իգական	Ազգությունը 1. Հայ 2. Ռուս 3. Այլ (նշել)	Կրոնը 1. 1. քրիստոնյա 2.մուսուլման 3. այլ (նշել) 4. աթեիստ (անհավատ)	Կապը տնային տնտեսության գլխավորի հետ 1. գլխավոր 2. կինը/ամուսինը 3. տղան/աղջիկը 4. փեսան/հարսը 5. թոռը 6. մայրը/հայրը 7. զոքանչը/ աները կամ սկեսուր/սկեսրար 8. եղբայր/քույր 9. այլ հարազատ 10. հոգեորդի, հոգեդուստր, խնամակալության տակ գտնվող երեխա, խորթ զավակ կամ դուստր 11. չունի ազգակցական կապ	Լրացած տարիների թիվը (տարիքը) ***(Հարցազրուցավար. եթե տարիքը 1 –ից փոքր է գրել 0)***	Ամուսնական վիճակը ***(16 տարեկանից բարձր)*** 1. ամուսնացած 2.երբեք չամուսնացած 3. այրի 4. բաժանված 5. ապրում են համատեղ (առանց ամուսնության գրանցման)	Կրթությունը ***(6 տարեկանից բարձր)*** 1. անգրագետ 2. ոչ լրիվ տարրական 3. տարրական 4. ոչ լրիվ հիմնական ընդհանուր 5. հիմնական ընդհանուր 6. թերի միջնակարգ 7. ընդհանուր միջնակարգ 8. միջնակարգ մասնագիտական 9. թերի բարձրագույն 10. բարձրագույն 11. հետբուհական	Զբաղվածության կարգավիճակը ***(16 տարեկանից բարձր)*** 1. վարձու աշխատող պետական սեկտորում 2.վարձու աշխատող մասնավոր սեկտորում 3. ինքնազբաղված, (ներառյալ գյուղա-տնտեսությունում) 4. ձեռնարկատեր, 5. թոշակառու 6. ուսանող/սովորող 7. գործազուրկ 8. տնային տնտեսուհի 9. չի աշխատում 10. այլ	Նախկինում աշխատել՞ է ****)*** 1. Այո 2. Ոչ	Եթե տնային տնտեսությունում կան բացակա անդամներ ,ապա իրենց տողում նշել 1 ***(Հարցազրուցավարին. բացակա անդամների համար անցնել Բաժին Բ. Միգրացիա)***
Ա2.1	Ա2.2	Ա2.3	Ա2.4	Ա2.5	Ա2.6	Ա2.7	Ա2.8	Ա2.9	Ա2.10	Ա2.11	Ա2.12
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

****) Հարցազրուցավարին. Ա2.3 հարցի “2” ծածկագիրը նշելու և Ա2.10 հարցի “5”, “7”, “8”,”9” ծածկագրերը նշելու դեպքում հարցնել Ա2.11 հարցը***

Ա.3 Ձեր տնային տնտեսությունում կան արդյոք՞ ծնողազուրկ երեխաներ

1. Այո
2. Ոչ → Ա.5 ☐

Ա.4 եթե, այո՝ քանիսն են
այդ թվում
1. միակողմանի ☐
2. երկկողմանի ☐

Ա.5 Ձեր տնային տնտեսությունում արդյոք՞ կան խնամակալներ կամ հոգաբարձուներ
1. Այո
2. Ոչ → Ա.7 ☐

Ա.6 եթե,այո՝ քանիսն են ☐
այդ թվում
1. խնամակալներ ☐
2. հոգաբարձուներ ☐

Ա.7 Ձեր տնային տնտեսությունում արդյոք՞ կան խնամակալության կամ հոգեբարձության հանձնված անձիք
1. Այո
2. Ոչ → Ա.9 ☐

Ա.8 եթե,այո՝ քանիսն են
այդ թվում
1. խնամակալության հանձնված անձիք ☐
2. հոգեբարձության հանձնված անձիք ☐

Ա.9 Ձեր ընտանիքում կա երեխա որը գտնվում է՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում կամ մանկատանը
1. Այո ☐
2. Ոչ → Ա.11

Ա.10 եթե, այո քանիսն են՝ ☐
այդ թվում
1. հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում ☐
2. մանկատանը ☐

Ա.11 Ձեր տնային տնտեսությունունում կա արդյոք՞ հաշմանդամ (հաշմանդամններ)

Հարցազրուցավարին. տնային տնտեսության անդամի հերթական համարը (ծածկագիրը) և անունը վերաշարադրել Ա2.1 և Ա2.2 հարցերից

տնային տնտեսության անդամի համարը /ծածկագիրը ☐ ☐ ☐ ☐
տնային տնտեսության անդամի անունը ☐ ☐ ☐ ☐

Բաժին Բ
Միգրացիա

Բ.1 Ես կցանկանայի մի քանի հարց տալ ձեր տնային տնտեսության բացակա անդամի (անդամների) վերաբերյալ

Հարցազրուցավարին. Լրացվում է տնային տնտեսության միայն այն անդամների համար, որոնք բացակա են:

S/S անդամի h/h	Որտեղ է նա հիմա բնակվում 1. Երևանում 2. այլ քաղաք Հայաստանում 3. գյուղ Հայաստանում 4. Ռուսաստանում 5. ԱՊՀ-ի այլ երկրում 6. Եվրոպական որևէ երկրում 7. ԱՄՆ-ում կամ Կանադայում 8. այլ	Բացակայության հիմնական պատճառը 1. ուսում 2. բուժում 3. աշխատանք 4. ամուսնություն 5. ընտանեկան այլ պատճառներ 6. բանակ 7. այլ	Որքան ժամանակ է բացակայում 1. մինչև 1 ամիս 2. 1.1-3 ամիս 3. 3.1-6 ամիս 4. 6.1 ամսից 1 տարի 5. 1.1-3 տարի 6. 3.1 տարի և ավելի
Բ1.1	**Բ1.2**	**Բ1.3**	**Բ1.4**

Բ.2 Ասացեք խնդրեմ, բացակայող անդամը (անդամները) կապ պահպանում են արդյոք՞ տնային տնտեսության հետ և ինչպես:

N	1. Այո, ամեն շաբաթ 2. Այո, ամիսը 1-2 անգամ 3. Այո, 2-3 ամիսը 1 անգամ 4. Այո, դեպքից դեպք 5. Ոչ
1.Հեռախոսով	
2.Նամակագրություն	
3.Այցելություն	

Բացակա անդամների համար հարցումն այստեղ ավարտվում է

Բաժին Գ

Բնակարանային և բնակության պայմաններ

Ես կցանկանայի մի քանի հարց տալ Ձեր կացարանի վերաբերյալ: Կացարան ասելով ես հասկանում եմ բոլոր սենյակները և առանձին շինությունները, որոնք օգտագործվում են Ձեր տնային տնտեսության անդամների կողմից:

Գ.1 Կացարանի տեսակը.

1. առանձնատուն
2. բնակարան
3. հանրակացարան
4. երկաթուղային վագոն/տնակ, կամ այլ ժամանակավոր կացարան
5. այլ _____ (նշել)

Գ.2 Պատկանում է արդյոք կացարանը Ձեր տնային տնտեսությանը, թե այն վարձակալված է.

1. սեփական է
2. վարձակալված է մարզպետարանից կամ քաղաքապետարանից, համայնքից
3. վարձակալված է մասնավոր անձից
4. գերատեսչական է
5. այլ _____(նշել)

→ Գ.4

Գ.3 Եթե սեփական է, ապա ում անունով է այն

Հարցազրուցավարին. տնային տնտեսության անդամի հերթական համարը (ծածկագիրը) և անունը վերաշարադրել Ա2.1 և Ա2.2 հարցերից

1. միանձնյա սեփականություն → տ/տ անդամի համարը /ծածկագիրը
   տ/տ անդամի անունը
2. համատեղ սեփականություն

Գ.4 Բացի կացարանից ուրիշ ինչ սեփականություն ունի ձեր տնային տնտեսությունը
(Նշել բոլոր հնարավոր պատասխանները)

1. հողակտոր
2. անձնական օգտագործման ավտոմեքենա
3. գյուղատնտեսական տեխնիկա
4. գյուղատնտեսական նշանակության տարածք
5. արևտրի և սպասարկման օբյեկտ
6. արտադրական նշանակության օբյեկտ
7. այլ _____ ***(նշել)***

Գ.5 Քանի սենյակ է զբաղեցնում տնային տնտեսությունը (առանց լողասենյակի, զուգարանի և խոհանոցի). սենյակ

Գ.6 Նշեք բնակելի մակերեսը. քռ. մետր

Գ.7 Ունեք արդյոք՞ հետևյալ կոմունալ հնարավորությունները՝

h/h	Անվանումը	1.այո 2.ոչ 3.այո, բայց չի գործում
1	Խոհանոց	
2	Հոսող ջրով զուգարան	
3	Դրսի զուգարան	
4	Լոգարան, ցնցուղ	
5	Հեռախոս	
6	Կենտրոնացված ջրամատակարարում	
7	Կենտրոնացված ջրահեռացում	
8	Հոսող տաք ջուր (բաք, արիստոն, գեյզեր, գազի կաթսա)	
9	Կենտրոնացված գազամատակարարում	
10	Աղբահանում	

Գ.8 Ինչպիսի՞ն է Ձեր կացարանի խմելու ջրի հիմնական աղբյուրը.

1. կենտրոնացված ջրամատակարարում
2. ջրհոր, աղբյուր
3. ջրամատակարարման սեփական համակարգ
4. գետ, լիճ
5. բերովի ջուր
6. անձրևաջուր
7. այլ _____ (նշել)

Գ.9 Ինչպե՞ս եք ջեռուցում Ձեր կացարանը.

1. կենտրոնացված ջեռուցում → Բ.9
2. սեփական ջեռուցման համակարգ
3. այլ (վառարան, էլեկտրական տաքացուցիչ, օջախ և այլն)
4. չի ջեռուցվում → Բ.9

Գ.10 Եթե Դուք չունեք կենտրոնացված ջեռուցում, ապա ինչով եք ջեռուցում Ձեր կացարանը.

(թույլատրվում է մի քանի պատասխան)

N	Անվանում	Եթե “այո” նշել 1
1.	նավթ, սոլյարկա	
2.	էլեկտրականություն	
3.	գազ	
4.	ածուխ	
5.	փայտ	
6.	այլ	

Գ.11 Գնահատեք, խնդրեմ, ինչ հեռավորության վրա է գտնվում Ձեր կացարանից ներքոթվարկյալները :

	Սպասարկման ոլորտի օբյեկտներ	կմ
.	Բուժհաստատություն	
.	Դեղատուն	
.	Համայնքի գրասենյակ	
.	Մանկապարտեզ	
.	Տարրական դպրոց*)	
.	Միջնակարգ դպրոց	

*) Եթե բնակավայրում առկա է միջնակարգ դպրոց, ապա այս հարցին չպատասխանել

Գ.12 Ունեք արդյոք դժվարություններ ներքոթվարկյալներից օգտվելու խնդրում

	Սպասարկման ոլորտի օբյեկտներ	1.Այո, կան լուրջ դժվարություններ 2. Կան մասնակի դժվարություններ 3. Որևէ դժվարություն չկա
.	Բուժհաստատություն	
.	Դեղատուն	
.	Համայնքի գրասենյակ	
.	Մանկապարտեզ	
.	Տարրական դպրոց*)	
.	Միջնակարգ դպրոց	

*) Եթե բնակավայրում առկա է միջնակարգ դպրոց, ապա այս հարցին չպատասխանել

Բաժին Դ

Զբաղվածության ոլորտը և եկամուտներ

Դ. 1 Ես կցանկանայի իմանալ տնային տնտեսության անդամների զբաղվածությունն ըստ ոլորտի և ստացած եկամուտները՝ ըստ աղբյուրի:

Հարցազրուցավար. Պատասխանները ԱՄՆ դոլարով (կամ այլ արտարժույթով) նշելու դեպքում, վերջիններս վերածել ՀՀ դրամի՝ կիրառելով տվյալ օրվա փոխարժեքը (կուրսով)

Տ/տ անդամի հ/հ (ծածկագիրը)	Տ/Տ անդամի անունը	Զբաղվա-ծության ոլորտը *) *(նշել ծածկագիրը)*	Եկամուտների աղբյուրը (դրամով)									
			Աշխատավարձ	Թոշակներ	Նպաստներ 1. ընտանեկան 2. երեխաներին տրվող 3. այլ			Դրամական օգնություն 1. Դրսում գտնվող Տ/Տ անդամից 2. ՀՀ-ում բնակվող հարազատներից 3. ՀՀ-ից դուրս բնակվող հարազատներից 4. հումանիտար օգնություն				Այլ (գյուղ. մթերքի վաճառքից, այլ ձեռնարկատիրական գործունեությունից, վարձակալությունից, դիվիդենտներից (տոկոսներից))
Դ1.1	**Դ1.2**	**Դ1.3**	**Դ1.4**	**Դ1.5**	**Դ1.6**	**Դ1.7**	**Դ1.8**	**Դ1.9**	**Դ1.10**	**Դ1.11**	**Դ1.12**	**Դ1.13**
					1.	2.	3.	1.	2.	3.	4.	

)

1. Իշխանության և կառավարման մարմինների բոլոր մակարդակների (ներառյալ հաստատությունների, կազմակերպությունների) ղեկավարներ ու ներկայացուցիչներ
2. Բարձր որակավորման մասնագետներ
3. Միջին որակավորման մասնագետներ
4. Տեղեկատվության մշակում, փաստաթղթերի ձևակերպում, հաշվառում և սպասարկում իրականացնող ծառայողներ
5. Սպասարկման ոլորտի աշխատողներ (բնակարանային կոմունալ տնտեսություն, առևտուր և հարակից գործունեություն)
6. Որակավորված աշխատողներ գյուղատնտեսության, անտառտնտեսության, որսորդության, ձկնաբուծության և ձկնորսության բնագավառում
7. Որակավորված բանվորներ խոշոր և մանր արդյունաբերական կազմակերպություններում, գեղարվեստական իրերի արտադրություն, շինարարության, տրանսպորտի, կապի, երկրաբանության և ընդերքի հետազոտման ոլորտներում
8. Փականագործ – հավաքողներ և սարքավորումների ու մեքենաների օպերատորներ, ապարատավարներ, մեքենավարներ
9. Որակավորում չունեցող աշխատողներ

Դ.2 Ասացեք խնդրեմ, բավարար համարում եք արդյոք Ձեր տնային տնտեսության եկամուտները:

1. այո, լիովին բավարար են բոլոր տիպի ծախսերի համար
2. բավարար են միայն հիմնական կարիքները հոգալու համար, բայց չենք կարողանում կատարել այլ ծախսեր → Դ.5 ☐
3. բավարար են միայն սննդամթերքի և որոշ այլ կարիքներ հոգալու համար
4. անբավարար են
5. խիստ անբավարար են

Դ.3 Ձեր կարծիքով ինչքան պետք է կազմի Ձեր տնային տնտեսության միջին ամսական եկամուտը, որպեսզի բավարարի բոլոր հիմնական ծախսերը կատարելուն և կարողանաք որոշ խնայողություններ անել

☐ դրամ

Դ. 4 Ըստ Ձեզ որոնք պետք է լինեն Ձեր կողմից նշված գումարի ստացման հիմնական աղբյուրները

(նշել բոլոր հնարավոր պատասխանները)

1. հիմնականում աշխատավարձեր
2. մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունից ստացվող եկամուտներ
3. գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտներ
4. կենսաթոշակներ, նպաստներ
5. տնային տնտեսության բացակա անդամների օգնություններ
6. այլ _____ նշել

Դ.5 Համաձայն եք այն տեսակետին, որ կինը պետք է աշխատի:

1. համաձայն եմ ամբողջությամբ
2. համաձայն եմ հիմնականում
3. ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ
4. համաձայն չեմ հիմնականում
5. համաձայն չեմ ամբողջությամբ

☐

Բաժին Ե
Տնային տնտեսության ծախսերը

Ե.1 Ով՞ է տնօրինում Ձեր տնային տնտեսության բյուջեն:

Հարցազրուցավարին. տնային տնտեսության անդամի հերթական համարը (ծածկագիրը) և անունը վերաշարադրել Ա2.1 և Ա2.2 հարցերից

1. միանձնյա → տ/տ անդամի համարը /ծածկագիրը
   տ/տ անդամի անունը
2. համատեղ

Ե.2 Ով՞ է կատարում Ձեր տնային տնտեսության օրվա գնումները:

Հարցազրուցավարին. տնային տնտեսության անդամի հերթական համարը (ծածկագիրը) և անունը վերաշարադրել Ա2.1 և Ա2.2 հարցերից

1. միանձնյա → տ/տ անդամի համարը /ծածկ
   տ/տ անդամի անունը
2. համատեղ

Ե.3 Որքան է կազմում Ձեր տնային տնտեսության միջին ամսական ծախսը հետևյալ ապրանքների և ծառայությունների համար:

Հարցազրուցավար. Պատասխանները ԱՄՆ դոլարով (կամ այլ արտարժույթով) նշելու դեպքում, վերջիններս վերածել ՀՀ դրամի՝ կիրառելով տվյալ օրվա փոխարժեքը (կուրսով)

Ծախսեր	Դրամ
1. Սնունդ	
ա. Ծխախոտ և ոգելից խմիչքներ	
2. Ոչ պարենայինապրանքներ (հագուստ, կոշիկ, հիգիենայի պարագաներ)	
3. Ծառայություններ *այդ թվում*	
ա. Կոմունալ ծառայություններ	
բ. Առողջապահություն	
գ. Կրթություն	
դ. Մշակույթ	
ե. Այլ	
ԸՆԴԱՄԵՆԸ	

Ե.4 Այս տարվա ընթացքում Ձեր տնային տնտեսությունը գնել է անշարժ գույք, երկարաժամկետ օգտագործման ապրանքներ և ծիսական ծառայություններ.

(նշել բոլոր պատասխանները)

N	Անվանումը	Նշել եթե՝ 1. այո 2. ոչ	Գնումի կամ ծառայության արժեքը (դրամ)
		Ե4.1	Ե4.2
1.	առանձնատուն, բնակարան, ամառանոց		
2.	հողակտոր		

3.	ավտոմեքենա		
4.	մոտոցիկլետ		
5.	հեծանիվ		
6.	հեռախոս		
7.	բջջային հեռախոս		
8.	համակարգիչ		
9.	հեռուստացույց		
10.	պարաբոլիկ ալեհավաք (անտենա)		
11.	տեսամագնիտաֆոն (DVD)		
12.	տեսախցիկ		
13.	ֆոտոապարատ		
14.	աուդիոհամակարգ (երաժշտական)		
15.	էլեկտրասալօջախ		
16.	սառնարան		
17.	լվացքի մեքենա		
18.	գազօջախ		
19.	միկրոալիքային վառարան		
20.	էլեկտրական վառարան		
21.	էլեկտրական տաքացուցիչ		
22.	սպասք լվացող մեքենա		
23.	այլ էլեկտրական ապրանքներ		
24.	կահույք		
25.	գորգեր		
26.	շինանյութ		
27.	ոսկերչական իրեր և ժամացույցներ		
28.	ծիսակատարություններ		
29.	այլ		

Հարցազրուցավար. Պատասխանները ԱՄՆ դոլարով (կամ այլ արտարժույթով) ներկայացնելու դեպքերում, գնման կամ ծառայության արժեքը դրամի վերածելիս կիրառել (կողմնորոշվել) ապրանքի գնման կամ ծառայության մատուցման օրվա դրությամբ ԱՄՆ դոլարի (կամ այլ արտարժույթի) ՀՀ դրամ փոխարժեքով (կուրսով)

Հարցազրուցավար. Չի ներառվում նվիրատվության կարգով ստացված ապրանքների և ծառայությունների արժեքը

Բաժին Զ
Առողջապահություն

Զ.1 Այս տարվա ընթացքում Ձեր տնային տնտեսության անդամներից որևէ մեկը կարիք ունեցել է դիմելու բժշկական հաստատություն.

1. Այո, դիմել է
2. Այո, բայց ոչ մեկը չի դիմել ⟶ Զ.4
3. Ոչ ⟶ Զ.5

Զ.2 Բժշկական հաստատություն դիմելու հիմնական պատճառը. ***(նշել 1)***

Տ/տ անդամի հ/հ ***(նայել Բաժին Ա)***	Հիվանդություն ***(դրական պատասխանի դեպքում անցնել Ե.3 հարցին)***	Վնասվածք	Ատամնաբուժական խնդիր	Պատվաստման անրաժեշտություն	Հղիություն և հետծննդյան խնամք (ներառյալ կանանց կոնսուլտացիա)	Բժշկական ստուգում կամ կոնսուլտացիա	Այլ պատճառներ
Զ2.1	Զ2.2	Զ2.3	Զ2.4	Զ2.5	Զ2.6	Զ2.7	Զ2.8

Զ.3 Ինչպիսի հիվանդություն (ներառյալ քրոնիկ հիվանդության սրում) են ունեցել Ձեր տնային տնտեսության անդամները այս տարի:

Տ/տ անդամի հ/հ ***(նայել Բաժին Ա)***	Տ/տ անդամի անունը	Հիվանդություն*) ***(նշել հիվանդության ծածկագիրը)***

*) 1. Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ
2. Նորագոյացություններ
3. Նյարդական համակարգի հիվանդություններ
4. Հոգեկան խանգարումներ և վարքի խանգարումներ
5. Շնչառական օրգանների հիվանդություններ
6. Տուբերկուլյոզ
7. Մարսողական օրգանների հիվանդություններ
8. Ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդություններ
9. Էնդոկրին համակարգի հիվանդություններ
10. Աչքի հիվանդություններ
11. Պարբերական հիվանդություններ

12. Միզասեռական համակարգի հիվանդություններ
13. Բնաշին անկանոնություններ (զարգացման արատներ), ձևախախտումային խանգարումներ
14. Այլ հիվանդություններ

Զ.4 Ինչն է հանդիսացել բժշկական հաստատություն չդիմելու պատճառը.

1. դրամի սղություն
2. փոխադրամիջոցի բացակայություն
3. հեռավորությունը
4. ժամանակի սղություն
5. կրոնական հանգամանքներ
6. ընտանեկան հանգամանքներ
7. անվստահություն բժիշկներին
8. այլ _____(նշել)

Զ.5 Իրազեկված եք արդյոք, որ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունի բնակչության սոցիալապես անապահով և առանձին հատուկ հետևյալ խմբերը (եթե այո նշել թե քանի անգամ եք օգտվել)՝

Բնակչության սոցիալապես անապահով և առանձին հատուկ հետևյալ խմբերը	1. Այո 2. Ոչ	Քանի անգամ է դիմել
	Զ5.1	Զ5.2
1. հաշմանդամներ		
2. հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ և դրանց հավասարեցված անձիք		
3. միակողմանի ծնողազուրկ երեխաներ		
4. առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ(մինչև 18 տարեկաններ) և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք (18-23 տարեկաններ)		
5. բազմազավակ ընտանիքներ (մինչև 18 տարեկան 4 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող) ընտանիքների երեխաներ		
6. ՀՀ պաշտպանության ժամանակ, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ		
7. Չեռնոբիլի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ		
8. բռնադատվածներ		
9. Հաշմանդամներից բաղկացած ընտանիքների երեխաներ (մինչև 18 տարեկան) մինչև 7 տարեկան երեխաներ		
10. ծննդօգնությունը		

Զ.6 Այժմ խնդրում եմ գնահատել առողջապահական հաստատությունների վիճակը Ձեր բնակավայրում:

1. գերազանց
2. լավ
3. բավարար
4. վատ
5. շատ վատ
6. բացակայում են
7. դժվարանում եմ պատասխանել
8. այ _____

Զ.7 Ինչպես եք գնահատում անչափահասներին մատուցվող առողջապահական ծառայությունների որակը Ձեր բնակավայրում

1. գերազանց
2. լավ
3. բավարար
4. վատ
5. շատ վատ
6. բացակայում են
7. դժվարանում եմ պատասխանել
8. այլ_____

Բաժին Է
Ընտանիքի պլանավորում

Հարցազրուցավարին. Դուք նշեցիք, որ Ձեր տնային տնտեսությունում բնակվում է _____ ընտանիք: Ես կցանկանայի յուրաքանչյուր ընտանիքի համար լրացնել "Ընտանիքի պլանավորման" բաժինը: Այդ իսկ պատճառով խնդրում եմ թվարկեք յուրաքանչյուր ընտանիքի անդամների անունները: Հիշեցնեմ, որ ընտանիք ասելով հասկանում ենք համատեղ բնակվող, ազգակցական, ամուսնական կապերով կապված անձանց ընդհանրությունը, այսինքն՝ ամուսնական զույգը և նրանց զավակները:

Է.1 Ընտանիքի անդամների անունները և տնային տնտեսության անդամի հերթական համարը

Հարցազրուցավարին. տնային տնտեսության անդամի հերթական համարը (ծածկագիրը) և անունը վերաշարադրել Ա2.1 և Ա2.2 հարցերից

1) տ/տ անդամի համարը /ծածկագիրը
2) տ/տ անդամի անունը

Է.2 Քանի զավակ ունի Ձեր ընտանիքը. զավակ

Է.3 Դուք նշեցիք երեխաների թիվը Ձեր ընտանիքում, ասացեք խնդրեմ, քանի երեխա են ունեցել Ձեր ծնողները (ներառյալ Ձեզ):

1. 1 երեխա
2. 2 երեխա
3. 3-6 երեխա
4. 7 և ավելի երեխա

Է.4 Իսկ քանի երեխա է եղել Ձեր ամուսնու/կնոջ ընտանիքում (ներառյալ Ձեր ամուսինը/կինը):

1. 1 երեխա
2. 2 երեխա
3. 3-6 երեխա
4. 7 և ավելի երեխա

Է.5 Ինչ եք կարծում, այսօրվա պայմաններից ելնելով, որն է ընտանիքում երեխաների իդեալական թիվը:

1. 1 երեխա
2. 2 երեխա
3. 3-6 երեխա
4. 7 և ավելի երեխա

Է.6 Ասացեք խնդրեմ, ինչու:

1. Դա ընդունված ու տարածված է հայկական միջավայրում
2. Դա ժամանակի թելադրանքն է
3. Կարիերայի ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում
4. Հնարավորություն է տալիս ավելի ազատ ապրել
5. Հնարավորություն է տալիս պահպանել ամուսինների նորմալ փոխհարաբերությունները
6. Այլ /նշել/_____

Է.7 Դուք անձամբ քանի երեխա կցանկանայիք ունենալ:

1. 1 երեխա
2. 2-3 երեխա
3. 4-6 երեխա
4. 7 և ավելի երեխա

Է.8 Ասացեք խնդրեմ ինչու՞:

1. Այդպես է ընդունված հայկական միջավայրում
2. Դա ժամանակի թելադրանքն է
3. Այդպես է ցանկանում իմ ամուսինը
4. Այդպես եմ ցանկանում ես
5. Մեր համատեղ որոշումն է
6. Գտնում եմ, որ շատ երեխաները ընտանիքում կստեղծեն առողջ մթնոլորտ
7. Այլ /նշել/_____

Է.9 Առաջիկա 3 տարում նախատեսում եք երեխա ունենալ:

Հարցազրուցավարին. այս հարցը տալ միայն վերարտադրողական տարիքում գտնվող անձին (15-49 տարեկան)

1. այո
2. ոչ
3. դժվարանում եմ պատասխանել

Է.10 Կցանկանայիք արդյոք ունենալ ավելի շատ երեխաներ.

Հարցազրուցավարին. այս հարցը տալ միայն վերարտադրողական տարիքում գտնվող անձին (15-49 տարեկան)

1. Այո
2. Ոչ → ***անցնել Է13 հարցին***
3. Չի ցանկանում պտասխանել → ***անցնել Է14 հարցին***

Է.11Քանի երեխա կուզենայիք ունենալ. ☐ երեխա

Հարցազրուցավարին. այս հարցը տալ միայն վերարտադրողական տարիքում գտնվող անձին (15-49 տարեկան)

Է.12 Այդ երեխաներից ինչքանը կուզենայիք, որ լինեն տղաներ, ինչքանը աղջիկներ և ինչքանը նշանակություն չունի:

Հարցազրուցավարին. այս հարցը տալ միայն վերարտադրողական տարիքում գտնվող անձին (15-49 տարեկան)

1. Տղաներ ☐ թիվը
2. Աղջիկներ ☐ թիվը
3. Ցանկացած այլ ☐ թիվը

Է.13 Ինչնէ հանդիսացել պատճառ որ չեք ունեցել կամ չեք ունենում.

(նշել բոլոր հնարավոր պատասխանները)

1. ընտանիքի սոցիալական վիճակը
2. ընտանիքի բնակարանային պայմանները
3. ընտանիքի անդամներից որևէ մեկի վատ առողջ լինելը
4. պլանավորում ենք հետագայում ունենալ ☐
5. ամուսինը կամ կինը չի ցանկանում
6. չի կարող երեխային լավ ապագա ապահովել
7. ամուսնու բացակայությունը
8. այլ__ _____ նշել

Է.14 Ինչպիսի օգնություն էք ակնկալում պետությունից ընտանիքի պարզ վերարտադրությունն ապահովելու համար (3-երեխա)

(նշել բոլոր հնարավոր պատասխանները)

1. բնակարանի ձեռք բերման կամ բնակմակերեսի ընդլայնման աջակցություն (դոտացիա, սուբսիդիա և այլն)
2. յուրաքանչյուր հերթական երեխայի ծննդի հետ կապված զգալի դրամական աջակցություն (նշել ցանկալի նվազագույն չափը)_____
3. յուրաքանչյուր հերթական երեխայի ծննդի հետ կապված հատկացվող դրամական օգնության պրոգրեսիվ աճ (նշել ցանկալի նվազագույն չափը)_____
4. ամսական դրամական հատկացում՝ (նշելով ցանկալի նվազագույն չափը) _____
5. Հարկային արտոնություններ
6. Երեխայի խնամքի հետ կապված աշխատող մայրերին կրճատ աշխատաժամանակի ապահովում վարձատրության չափի պահպանմամբ
7. Հետծննդյան արձակուրդի ժամկետի երկարացում, աշխատավարձի 40 տոկոսի տրամադրմամբ
8. Հետծննդյան արձակուրդի ժամկետի լրանալուց հետո մասնագիտական հմտությունների կորստի վերականգնում անվճար վերապատրաստումների ապահովում

Է.15 Ասացեք խնդրեմ, ինչպես եք գնահատում երեխաների համար ստեղծված պայմանները Ձեր բնակավայրում /խնդրում ենք գնահատել 5 միավորանոց սանդղակով: 1-ը ամենավատ վիճակն է, 5-ը՝ ամենալավը/: ***(Հարցազրուցավար. եթե դժվարանում է պատասխանել նշել 9)***

	Ոլորտ	
	նախակրթարանների վիճակ, հնարավորություններ, մատչելիություն	
	դպրոցների վիճակ, հնարավորություններ, մատչելիություն	
	դպրոցում տրվող գիտելիքների որակ	
	միջնակարգ-մասնագիտական հաստատությունների վիճակ	
	առանց լրացուցիչ պարապմունքների ԲՈՒՀ ընդունվելու հնարավորություններ	
	լրացուցիչ գիտելիքներ ստանալու հնարավորություններ /խմբակներ, այլ/	
	լրացուցիչ տեղեկատվություն ստանալու հնարավորություններ /Ինտերնետ ակումբներ, համակարգչային սրահներ, այլ/	
	ժամանցի կազմակերպման հնարավորություններ	
	աշխատանք գտնելու հնարավորություններ	
0	բնակավայրում մնալով բարձր կենսամակարդակ ապահովելու հնարավորություններ	
1	առողջապահական ծառայությունների մատչելիություն	

Է. 16 Կցանկանայիք արդյոք, որ Ձեր երեխաները ապրեին այս բնակավայրում (որտեղ հիմա դուք բնակվում եք):

1. այո → Է.17
2. ոչ → Է.18
3. դժվարանում եմ պատասխանել → Է.20

Է. 17 Եթե այո, խնդրում եմ նշել 3 հիմնական պատճառները:

1. Այստեղ ավելի պաշտպանված են, քան այլ բնակավայրում
2. Այստեղ ավելի լուրջ հեռանկարներ ունեն, քան այլ բնակավայրում
3. Կցանկանայի, որ իմ երեխաներն ապրեն իմ կողքին
4. Մենք կկարողանանք օգնել, որ արագ ոտքի կանգնեն
5. Այլ _____ նշել

Է. 18 Եթե ոչ, խնդրում եմ նշել 3 հիմնական պատճառները:

1. Այս բնակավայրում երեխաները ապագա, հեռանկար չունեն
2. Չեն կարող նորմալ կրթություն ստանալ
3. Չեն կարող նորմալ աշխատանք ունենալ
4. Այստեղ ապրելը վտանգավոր է
5. Ընդհանրապես չէի ցանկանա, որ բնակվեն Հայաստանում
6. Այլ _____ նշել

Է. 19 Եթե չէիք ցանկանա, որ Ձեր երեխաներն ապրեն այս բնակավայրում (որտեղ հիմա դուք բնակվում եք), որտեղ կուզեիք որ նրանք բնակվեն

1. Երևանում,
2. Մարզկենտրոնում,
3. ՌԴ-ում,
4. եվրոպական որևէ երկրում,
5. ԱՄՆ-ում,

6. Այլ _____

Է. 20 Ձեր կարծիքով, ինչ է անհրաժեշտ անել, որ երեխաները մնան Ձեր բնակավայրում (որտեղ հիմա դուք բնակվում եք):

Հարցազրուցավարին. նշել բոլոր հնարավոր պատասխանները

1. Առաջին հերթին լուծվեն բնակավայրի տնտեսական խնդիրները
2. Նորմալ պայմաններ ապահովվեն կրթության համար
3. Ստեղծվեին բարձր վճարվող աշխատեղեր
4. Նվազեցվի աղքատության մակարդակը
5. Նվազեցվեն կոռուպցիայի ծավալները հանրապետությունում
6. Ձևավորվի նորմալ բարոյահոգեբանական մթնոլորտ
7. Պետությունը հատուկ ուշադրություն դարձնի երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրներին
8. Երիտասարդ ընտանիքներին տրամադրվեն արտոնյալ պայմաններով, երկարաժամկետ վարկեր
9. Հիպոթեկային ծրագրերի միջոցով լուծվեն բնակարանային հիմնախնդիրները
10. Ավելացվեն անչափահաս երեխաներին տրվող նպաստները
11. Հատուկ արտոնություններ սահմանվեն բազմազավակ ընտանիքների համար
12. Հատուկ արտոնություններ սահմանվեն երիտասարդների համար
13. Այլ _____նշել

Է. 21 Ասացեք խնդրեմ, ինչպես են կայացվում որոշումները Ձեր ընտանիքում հետևյալ ոլորտներում

հ/հ	Որոշումներ	1. Ամուսինը միանձնյա 2. Կինը միանձնյա 3. Ամուսինն ու կինը համատեղ 4. Ամուսնու/կնոջ ծնողները միանձնյա 5. Ամունսու/կնոջ ծնողները, ամուսինն ու կինը համատեղ 6. Հաշվի է առնվում ընտանիքի բոլոր անդամների կարծիքը
1.	Երեխաների դաստիարակության հետ կապված որոշումներ	
2.	Երեխաների կրթության հետ կապված որոշումներ	
3.	Երեխաների ամուսնության հետ կապված որոշումներ	
4.	Ընտանքին վերաբերող այլ կարևոր հարցեր	
5.	Կենցաղային կարևոր հարցեր	
6.	Կենցաղային երկրորդական հարցեր	
7.	Ամուիսններին վերաբերող հարցեր	
8.	Խոշոր գնումներ կատարելու հետ կապված	
9.	Երեխաների թիվը և սեռը	
10.	Հղիության ընդհատում	

Է. 22 Ասացեք խնդրեմ, արդյոք Ձեր ընտանիքում վեճեր լինում են կապված որոշումների կայացման հետ

1. Այո, մշտապես
2. Այո, դեպքից դեպք
3. Գրեթե չեն լինում

4. Երբեք չեն լինում
5. Այլ _____ նշել

Է. 23 Խնդրում եմ նշել վեճերի հիմնական պատճառները և ում միջև են առաջանում վեճերը:

h/h	Վեճեր	1. Ամուսիններ 2. Ամուսիններ և ամուսնու/կնոջ ծնողներ 3. Ամուսիններ և ամուսնու/կնոջ այլ ազգականներ 4. Ամուսիններ և երեխաներ 5. Երեխաներ և ամուսնու/կնոջ ծնողներ 6. Երեխաներ և ընտանիքի այլ անդամներ
1.	Երեխաների դաստիարակության հետ կապված որոշումներ	
2.	Երեխաների կրթության հետ կապված որոշումներ	
3.	Երեխաների ամուսնության հետ կապված որոշումներ	
4.	Ընտանիքին վերաբերող այլ կարևոր հարցեր	
5.	Կենցաղային կարևոր հարցեր	
6.	Կենցաղային երկրորդական հարցեր	
7.	Ամուիսններին վերաբերող հարցեր	
8.	Այլ (նշել)	

Է.24 Համարում եք Ձեր ընտանիքը ամուր:

1. Այո
2. Ոչ → Է.26
3. Դժվարանում եմ պատասխանել → Է.27
4.

Է.25 Դուք ասացիք, որ համարում եք Ձեր ընտանիքը ամուր, կարող եք ասել որն է հանդիսանում դրա հիմնական գրավականը:

1. սերը, փոխահամաձայնության մթնոլորտը
2. երեխաների առկայությունը
3. սոցիալ-տնտեսական վիճակը
4. այլ _____ *(նշել)*

Է.26 Դուք ասացիք, որ չեք համարում Ձեր ընտանիքը ամուր, կարող եք ասել որն է հանդիսանում դրա հիմնական պատճառը:

1. սիրո, փոխահամաձայնության բացակայությունը
2. երեխաների բացակայությունը
3. սոցիալ-տնտեսական վատ վիճակը
4. այլ _____ *(նշել)*

Է.27 Կուզենայիք ունենալ ընտանիք, որում ապրում են երեք սերունդներ

1. Այո
2. Ոչ
3. Դժվարանում եմ պատասխանել

Է.28 Գտնում եք, որ ընտանիքում անհրաժեշտություն է ազգակցական փոխհարաբերությունների պահպանումը և խորացումը

1. Այո
2. Ոչ
3. Դժվարանում եմ պատասխանել

Է.29 Գտնում եք, որ անհրաժեշտություն է բարի դրացիական փոխհարաբերությունների պահպանումը և խորացումը

1. Այո
2. Ոչ
3. Դժվարանում եմ պատասխանել

Է.30 Ձեր ընտանիքը հետևում է ազգային ավանդույթներին և ծեսերին

1. մշտապես
2. պարբերական
3. հազվադեպ
4. ոչ

Է.31 Գտնում եք, որ նորաստեղծ ընտանիքը պետք է առանձնանա, թե ճիշտ եք համարում ծնողների հետ նույն հարկի տակ ապրելը

1. առանձնանալ ամուսնանալուց անմիջապես հետո, անկախ ամեն ինչից
2. առանձնանալ ամուսնանալուց որոշ ժամանակ անց կամ առաջին երեխայի ծնվելուց հետո
3. առանձնանալ միայն այն դեպքում, եթե լուծված է բնակարանային խնդիրը
4. առանձնանալ այն դեպքում, երբ լուծված են բոլոր ֆինանսական խնդիրները
5. ծնողների հետ ապրել
6. այլ _____
7. Դժվարանում եմ պատասխանել

Է.32 Ցանկանում եք երեխային տալ ծնողների անունները, թե գերադասում եք այլ հայկական անուն կամ այլ ոչ հայկական անուն:

1. ծնողների անունները
2. այլ հայկական անուն
3. ոչ հայկական անուն
4. Դժվարանում եմ պատասխանել

Է.33 Ձեր կարծիքով, որ հարցերի դեպքում է անհրաժեշտ խորհրդակցել ծնողի (ծնողների) հետ

1. բոլոր հարցերում պարտադիր
2. միայն կարևոր հարցերում
3. կենցաղային հարցերում
4. Այլ _____նշել
5. Ոչ մի

Է.34 Եթե ամուսնացել եք, սակայն երեխաներ չեք ունենում, գտնում եք, ապա՝

1. անհրաժեշտ է բաժանվել ամուսնուց/կնոջից
2. անհրաժեշտ է որդեգրել երեխաներ և պահպանել ընտանիքը
3. այլ _____նշել
4. Դժվարանում եմ պատասխանել

Է.35 Ըստ Ձեզ ընտանիքի ամրությունը կապված է երեխաներ ունենալու հետ, թե այն կապում եք այլ արժեքների հետ:

1. երեխաներ ունենալու հետ
2. այլ արժեքների հետ
3. երկուսի
4. Դժվարանում եմ պատասխանել

Է.36 Վերջին տարիներին բավականին շատ է խոսվում ընտանեկան բռնությունների մասին: Ձեր կարծիքով, իրոք դրանք առկա են Հայաստանում:

1. այո, շատ տարածված են
2. տարածված են մասամբ
3. տարածված չեն
4. դժվարանում եմ պատասխանել
5. այլ _____

Է.37 Դուք անձամբ ինչն եք համարում բռնություն և ընտանիքի որ անդամի հանդեպ:

N	Բռնության տեսակները	ամուսնու հանդեպ	կնոջ հանդեպ	երեխաների հանդեպ	ամուսնու/կնոջ ծնողների հանդեպ	ընտանիքի այլ անդամների հանդեպ
		Է37.1	Է37.2	Է37.3	Է37.4	Է37.5
1	սպառնալիք	1	2	3	4	5
2	անընդհատ դիտողություններ, նկատողություններ	1	2	3	4	5
3	կոպիտ խոսելաոճ, լեզվակռիվ	1	2	3	4	5
4	հայհոյանք	1	2	3	4	5
5	ապտակ	1	2	3	4	5
6	ծեծ	1	2	3	4	5
7	վնասվածքներ հասցնել, հարվածել	1	2	3	4	5
8	անկախ պատճառաբանությունից անտեսել (արհամարհել)	1	2	3	4	5
9	ծանր ֆիզիկական աշխատանքներով ծանրաբեռնել	1	2	3	4	5
10	իր կամքին հակառակ ինչ-որ բան պարտադրել	1	2	3	4	5
11	աշխատել չթույլատրել	1	2	3	4	5
12	հարազատների, բարեկամների հետ շփվելն արգելել	1	2	3	4	5
13	ընտանիքին վերաբերող կարևոր հարցերում կարծիքն անտեսել	1	2	3	4	5
14	Այլ *(նշել)*	1	2	3	4	5

Է.38 Ձեր ընտանիքում կան արդյոք բռնություններ՞:

N	Բռնության տեսակները	ամուսնու հանդեպ	կնոջ հանդեպ	երեխաների հանդեպ	ամուսնու/կնոջ ծնողների հանդեպ	ընտանիքի այլ անդամների հանդեպ
		Է38.1	Է38.2	Է38.3	Է38.4	Է38.5
1	սպառնալիք	1	2	3	4	5
2	անընդհատ դիտողություններ, նկատողություններ	1	2	3	4	5
3	կոպիտ խոսելաոճ, լեզվակռիվ	1	2	3	4	5
4	հայհոյանք	1	2	3	4	5
5	ապտակ	1	2	3	4	5
6	ծեծ	1	2	3	4	5
7	վնասվածքներ հասցնել, հարվածել	1	2	3	4	5
8	անկախ պատճառաբանությունից անտեսել (արհամարհել)	1	2	3	4	5
9	ծանր ֆիզիկական աշխատանքներով ծանրաբեռնել	1	2	3	4	5
10	իր կամքին հակառակ ինչ-որ բան պարտադրել	1	2	3	4	5
11	աշխատել չթույլատրել	1	2	3	4	5
12	հարազատների, բարեկամների հետ շփվելն արգելել	1	2	3	4	5
13	ընտանիքին վերաբերող կարևոր հարցերում կարծիքն անտեսել	1	2	3	4	5
14	Այլ ***(նշել)***	1	2	3	4	5